

3-4/2004

ՀԱՅԱՐԱՆՈՒՄ

Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Դ Ա Ն Դ Ե Ս



ARMENIAN ART • CULTURAL MAGAZINE

Փառաճոցային և Օլիմպիական կրքեր

Այս տարվա օգոստոսին, երբ ամբողջ աշխարհի ուշադրությունը սեռված էր Աթենքում կայացող օլիմպիական խաղերին, Երեւանում անցկացվեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» անվանումով առաջին համահայկական մշակութային փառատոնը։ Սկիզբից ժամանել էր հազարից ավելի մասնակից, ըստ տարբեր աղբյուրների՝ 12 կամ 15 երկրից։ Փառատոնի մասնակցներին եւ զրահ վերաբերող դրվատական նյութերին կարելի է ծանոթանալ համացանցում (www.mcsa.am)։ Մենք միայն մի քանի նկատառում պիտի ներկայացնենք։

Դեռ մինչեւ փառատոնը լույս տեսած մեր հանդեսի նախորդ համարում գրել էինք. «Մեզանում արդեն ավանդույթ է դարձել նման լուրջ ծեռնարկների հապճեպ կազմակերպումը, որն իր հետ բերում է անխուսափելի թերություններ, եւ որոնց մասին հետո ներողամտորեն ասում ենք՝ «ոչինչ, կարելի էր այն է, որ կազմակերպվեց»։ Ցավոք, մեր կանխատեսումը ճիշտ դուրս եկավ, որովհետեւ փառատոնի գործնական կազմակերպիչ Լեւոն Աբրահամյանը մամուլի ասուլիսի ժամանակ ասաց, թե բացումից միայն մեկ ու կես ամիս առաջ է իմացել, որ իրեն է համծառարկված գործը։ Իհարկե, նման կարծ ժամանակի համար արվածը զնախա-տելի է, բայց մինչեւ երբ պիտի շարունակենք ցայտնաբերել աշխատելու գործելակերպը։ Դրա հետեւանքը չէ՝ արդյոք, որ փառատոնի բացման հանդեսի հրավեր ունեցողներից շատերը (նաեւ արտերկրից եկածներ) հայտնվեցին փակ դռների առաջ, որ Հայաստանի շրջաններից ու Արցախից եկած մասնակիցները, մեծ մասամբ, անուշադրության էին մատնված, կամ այն, որ Շարլ Ազնավուրի հրապարակում կազմակերպված «գրքի տոնը» ազգական չունեցող մարդու հոգեհանգիստ էր հիշեցնում։

Մշակույթի կարեւորումն արդիական խնդիր է։ Սակայն այն ուշադրության է արժանանում միայն ժամանակ առ ժամանակ եւ արտահայտվում որեւէ փառատոնի կամ հոբելյանի առիթով հնչող բարի խոսքերի ու բաժանվող շքանշանների միջոցով։ Մինչդեռ մշակույթն ամենօրյա հոգատարության կարիք ունի։ Իսկ դրա համար պիտի պատշաճ զնախադրվեն եւ բարձր համարում ունենան մշակութային հաստատությունները, կազմակերպությունները եւ մշակույթի մարդիկ։ Օրինակ, ինչո՞ւ է մշակութային փառատոնը բացում ոչ թե երկրի մշակույթի, այլ արտգործնախարարը (իսկ փակում՝ վարչապետը) եւ կամ թատերական փառատոնը հովանավորում են այլ գերատեսչություններ, իսկ պարի փառատոն կազմակերպում է քաղաքական միավորումը։



Մշակույթի ոլորտում վերջին տարիներին տարվող կարգային քաղաքականությունը համեմատելի է թերեւս արսուրդի թատրոնի հետ։ Այստեղ ոչ միայն վերին, այլեւ միջին օղակներում արդեն ամենագործը «մասնագիտական դիպլոմ» է դարձել կուսակցական տոմսը (այսպիսի զավեշտ մենք արդեն տեսել ենք խորհրդային երկրում, որը դրա կործանման պատճառներից մեկը դարձավ)։ Այս ամենի հետեւանքով մշակույթի նախարարությունն, օրինակ, հենց իր ոլորտում ակամա ստացել է «երկրորդ պլանի դեր» ու դարձել տեղի-ամտեղի բնադատության թիրախ։

Այնուհանդերձ, Հայաստանն այսօր դեռեւս ունի մշակութային մեծ ներուժ։ Բայց ներկա միտումների խորացման դեպքում այն կարող է վատնվել, ինչպես որ վատնվել է սպորտային ներուժը, որի մասին ազգովին տեղյակ դարձանք միայն աթենքյան ծախսողմից հետո ...

Հարկավոր է բանիմացորեն զնախադրվել արվեստն ու մշակույթը, որը դեռ հին աշխարհի փիլիսոփաները համարել են գործը զենք։

- 3ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
- 4ԵՐԿՈՒ ՀԱՐՑ ԵՐԿՈՒ ՄՏԱԿՈՐԱԿԱՆԻ
- 6«ՀԱՅ ԱՐՎԵՍ» 2002, 2003, 2004
- 8Պողոս Հայրապետ, ՆԿԻՐՈՒՄ (Սուրեն Նազարյան)
- 10ԵՐԵՒԱՆՅԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ
- 11.....Գաֆեսեյան Բանգարանը...
- 12Ամեն Սմիթսոնյան, ՀԱՋԱՐԱՄՅԱՆ ԿԵԶԱՆՈՒՄԸ
- 13Վարազդատ Հարությունյան, Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության 40-ամյակը
- 14Հարցազրույց ՄԲԲՀ-ի գործադիր տնօրեն Արշակ Բանուշյանի հետ
- 16Մովսես Ծիրանի, Կարոտակեզ կերպարվեստագետը (Յուրոգ)
- 18ԷԼԻԶԱԲԵԹ ՈՍՏՐԻԼԴ
- 20Լեւոն Սրապյան, Թատերական աշնան գույները
- 22Գայանե Եղիազարյան, ՀՊՂԵՆ ԵՆՆՈՒԹԵԼ ՄԱՐԴՈՒ ՇԻՆՎԱԾՔԻ
- 24Անի Ֆիշենկոնան, Օլիմպիայի առաջին երգչուհին Սուրիոյ մէջ
- 25ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՀՐԱՇԱԼԻ ԽՈՒՄԲ ՄԸ
- 30ՈՐԶԱՐԴ
- 32Ոսկեհատ Ծիրանյան, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՈՍՏՈՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ




- 34Արմիլ Բախչեյանի «Հայերը համաշխարհային կինոյում» գիրքը
- 36Գրիգոր Փիտեման, ՀԱՅԱՆ ԱՐԾՈՐԻՆԻ «ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ @ 100» ԽՏԱՍԱԼԻԿԸ
- 38ՄԱՆՈՒԿ ՂՐԴՅԱՆ (Արգենտինա), ԱԶԱՏՈՒՅԻ ՎԱՐԴՈՒԿԱ (Ռումինիա)
- 40Արմեն Գասպարյան, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԹԱԴԵԻՄՅԱՆ



- 42Լեւոն Լաճիկյան, Հողը՝ տիրոջն սպասելիս (Կարս)
- 44Իրինա Բարսեղյան, ԿԱՐՈՏԻՑ ՀՅՈՒՄԱՆԻԶ ԶԳԵՍՆԵՐ



- 45Խաչատուր Ավագյան, ՔԱԶԱԶԸ



- 47Անգին Սոթքեյան, ՍԵՐՈՐ ԳԱՄԱՐՅԱՆ
- 48ՍԻՐ ԷԼ
- 50ՍԵՐԱՆ ԳԱՄԱՐՅԱՆ
- 51Արմինե Հակոբյան, ԱՐԱՐԱՍ ԻՐԻԿԱՍՈՒՄԻՆ
- 52Տիգրան Լեւոնյան, Ոգեղեն ղողանջների ժամհարը
- 15, 21, 23, 31, 53, 54Մշակութային լուրեր

ՊԱՐԹԻՍԻՈՒՆԵՐՈՒՄ

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ՄՈՒՒԿ» հայ մշակույթի կենտրոն

Լրատվական գործունեությունը իրականացնող
«ՅՈՒՆ ԱՐՎԵՍ»՝ ՄՊԸ
Հասցեն՝ Երեւան, Խանջյան 43, բն. 14
Պետական գրանցման վկայականի համար՝
03Ա 053641, տրված՝ 20.03. 2002 թ.

Հրատարակվում է գիտական
համագործակցությամբ

- Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի
- ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության
ինստիտուտի
- ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
- Հայաստանի ազգային պատկերասրահի

Թողարկման պատասխանատու,
գլխավոր խմբագիր՝ Կարեն ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Գործադիր տնօրեն՝ Հասմիկ ԳԻՆՈՅԱՆ
Պատասխանատու քարտուղար
Նորայր Վարդանյան
Համակարգչային ծեւավորող
Վարդան ԴԱԼԼԱՔՅԱՆ
Վերստուգող խմբագիր՝ Աննա ԱՄԻՐԻՍՅԱՆ
Մուտքագրող՝ Ռուզաննա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Թարգմանիչ՝ Լիլի ԳԱՄԱՐՅԱՆ
Աշխատակազմ՝ Լիլի ԳԱՄԱՐՅԱՆ,
Աննա ԱՄԻՐԻՍՅԱՆ
Խմբագրական խորհուրդ
Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Շահեն ԽԱՉԱՏՐՅԱՆ, Մուրադ ՀԱՍԱՐԱԹՅԱՆ,
Մարտին ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Դանիել ԵՐԱԺԻՇՏ,
Սամվել ԽԱԼԼԱՔՅԱՆ

Հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
«Ատենախոսությունների արդյունքների
տպագրության համար ընդունելի ամսագրերի
ցուցակում»

Գրանցման վկայական՝ 01ՄՈՐՈՐԳ
Դասիչ՝ 77789
Ստորագրված է տպագրության 19.11.2004
Ծավալը՝ 7 մամուլ
Տպաքանակը՝ 600
Տպագրությունը՝ Փրինթինգո ՀԶ ՄՊԸ

Խմբագրության հասցեն
Երեւան, Հանրապետության 32
Հեռախոս՝ (374 1) 52 3501, քցք՝ (374 9) 40 3215
Ֆաքս՝ (374 1) 563661
E-mail: hayart02@hotmail.com

Նյութերը տպագրվում են արեւելահայերենով եւ
արեւմտահայերենով, բնագրի ուղղագրությամբ։
Հղովածներում արտահայտված կարծիքները
կարող են չհամընկնել խմբագրության
տեսակետին։
Գովազդի բովանդակության պատասխանատուն
գովազդատունն է։
Արտատպություն կատարելիս հղումը
«Հայ արվեստին» պարտադիր է։



Շապիկի
առաջին էջին
Հարություն
Կալենց,
Նատյուրմորտ,
1960թ.

2hurg


- Ձեր կարծիքով
որո՞նք են արդի հայ մշակույթի
դժվարությունները
և
դրանց հաղթահարման
ի՞նչ ուղիներ եք տեսնում:

վակների, ճշմարիտ արվեստը հարթում էր իր ճանապարհը, որով էլ այսօր մենք հայարտանում ենք:

Ի՞նչ կարգախոսներ է որդեգրել մշակույթի ասպարեզում Հայաստանի Հանրապետությունն այսօր - դժվար է անգամ կռահել: Մշակույթի «գետը» հոսում է տարերայնորեն, ինքնահոս ձեռով:

Ով ինչպես ուզում է եւ ով ինչպես կարողանում է: Ձարմանալու հատկությունը գրեթե կորցրած հայ հանդիսատեսը ի՞նչ աղավաղված եւ օտարամուտ «երգեր ու պարեր» է տեսնում եւ լսում, «շուներ վայելում», բացի ազգային նկարագրից, ամեն ինչով համեմված կեղծ արդիական, արեւմուտքում իր օրերն ապրած «սկզբունքներով»: Թվարկել այս բոլոր երեւոյթները, նշանակում է փաստել դաժան իրականությունը, որի ընդերքից ճահճահոտի ոչ դուրեկան «բույրեր» են արձակվում:

Սակայն որքան էլ հակասական եւ տարօրինակ թվա, այս երեւոյթներին դեմ հանդիման, աստիճանաբար, հուրախություն մեզ, ասպարեզում ի հայտ են գալիս մարդու հոգին ու երեւակայությունը հարստացնող գրքեր՝ ինչպես ազգային, այնպես էլ տոտալիտար համակարգում արգելված թարգմանական գրականություն (այս ցանկում կուզեի առանձնացնել «Սարգիս Խաչենց»՝ հրատարակչության ակտիվ գործունեությունը, հրաշալի գրամշակութային ամսագրեր, երաժշտական առանձին ստեղծագործություններ, կինոնկարներ, թատերական բեմականացումներ, միջազգային տարբեր բեմահարթակներում մեծ հաջողություններ արձանագրող կատարողներ): Ուրեմն, Հայաստանի ժողովրդի մշակութային ներուժը առաջվա նման հզոր է, միայն թե այն «ցաք ու ցրիվ» է, կազմակերպչական առումով չկան պետական ռազմավարական եւ մարտավարական հայեցակարգեր, ազգային ավանդույթների վրա հիմնված եւ մշակված արդիական ուղեցիկներ: Մշակույթի մասին խելամիտ եւ հեռահար օրենքների ընդունումը կարող էր նպաստել եւ կարգավորել ոգով ազատ եւ ազգային խորքով անհատների երեւան գալուն, դրանց միջազգային ճանաչմանը: Պետականորեն կարգավորված մշակութային քաղաքականությունը անտես չի թողնելու որեւէ անհատականության, կոլեկտիվի արվեստային նվաճումները, տեր կկանգնի նրանց, քանզի ազգային այդ հարստությունը եւ բարոյապես, եւ ինչո՞ւ չէ, նաեւ ֆինանսապես կհզորացնի մեր երկիրը:



ՊՈՐՈՍ ԼԱՅՈՍՅԱՆ
արվեստաբան

Հայաստանի մշակույթի հետանկախության շրջանի նահանջն ու խոտորումները բազում դժվարին խնդիրների առջեւ են կանգնեցրել բոլորիս: Խոսքեր, սին դատողություններ, մերկապարանոց հայտարարություններ, մամուլը եւ հեռուստատեսիլը ողողված են պեսիմիստական «գրույցներով», ով որ բան ու գործ չունի, անվերջ մեր մշակույթի անկման փաստն է վկայակոչում, «չորը թացի» հետ խառնում, մի բան, որ շատ ավելի հեշտ է, քան այս վիճակից դուրս գալու քիչ թե շատ խոհեմ ու կառուցողական ճանապարհի ցուցանելը:

Որեւէ մեկի համար գաղտնիք չէ, որ հայ անհատի ու հավաքական ժողովրդի մշակութային գենոֆոնդը հարուստ է ու բազմաձեւ, այն դարավոր ավանդույթներ ունի, կենսունակ է, նույնիսկ մեր ժողովրդի պատմության վատթարագույն շրջաններում անգամ ծնկի չի եկել: Ուրեմն, մեր օրերի դժվարությունները հանգրվանային են, ասել է թե՛ ժամանակավոր: Պարզապես իմաստուն եւ գործնական կողմնորոշիչներ են հարկավոր այս վիճակից դուրս գալու համար: Տոտալիտար համակարգն ուներ իր հստակ կարգախոսները՝ անկախ նրանից դրանք որքանով էին ճշմարիտ. եւ կեղծը, եւ դեկլարատիվը, եւ այսպես կոչված «իդեականությունը» անվերջ եւ ծանծաղիորեն փողկարկում էին, սակայն, ի պատիվ մեր ժողովրդի լավագույն գա-

2դասախան

ԱՐՄԵՆ ԱՅԱՍՅԱՆ
ֆաղափագիության դոկտոր

Այսօր հայ մշակույթի զարգացմանը խոչընդոտում են բազմաբնույթ խնդիրներ՝ քաղաքական, կազմակերպչական, ֆինանսական, գաղափարական, բարոյական ու հոգեբանական, որոնք բոլորն էլ, ի վերջո, բխում են Հայաստանն ու ողջ հայությունը համակած համակարգային ճգնաժամից:

Դժվարությունների մեծ մասը գալիս է Հայաստանի պետության, ինչպես նաեւ սփյուռքահայ կազմակերպությունների թուլությունից, մշակույթի գործիչներին եւ, առհասարակ, մտավորականությանը հովանավորելու անկարողությունից կամ չկամությունից: Հայ արվեստի ու գիտության ստացած փշրանքները, բնականաբար, չեն կարող ապահովել լուրջ զարգացում: Առայժմ մշակույթի գոյությունը պահպանվում է խորհրդային շրջանում կուտակված մեծ պաշարների, ինչպես նաեւ անհատ նվիրյալների ինտերցիոն գործունեության հաշվին: Սակայն այս փուլն անվերջ չարունակվել չի կարող, «նոր արյան» պակասն արդեն իսկ զգացնել է տալիս մշակույթի տարբեր բնագավառներում:

Մշակույթը նաեւ քաղաքականություն է, որը համախմբում է ազգը, բարձր իդեալներ, հայրենասիրություն ու բարոյականություն դաստիարակում: Սակայն հայ մշակույթի գործիչներին ու գիտնականներին պատշաճ կերպով հովանավորողն այսօր օտար կազմակերպություններն են, որոնց նպատակները, մեծավ մասամբ, տարբերվում ու հաճախ էլ ուղղակիորեն հակասում են Հայաստանի ու հայության շահերին: Հետեւաբար, մեր մշակույթի մեջ թափանցած ցածրորակ օտարածին երեւոյթները չպետք է զարմացնեն:

Մշակույթի ու գիտության գործիչն աշխատում է, առաջին հերթին, ոգեշնչման հիման վրա: Սակայն հայ իրականությունն այսօր ոգեշնչման քիչ առիթներ է տալիս: Ծանր սոցիալ-տնտեսական պայմաններին գումարվում են նաեւ անարդարության ճնշող մթնոլորտը, Հայաստանի պետության հստակ ուղեգծի բացակայությունը, ազգային, պետական ու համրային շահերի ամեմոյա բացահայտ ու լկտի ոտնահարումը նույն այն պաշտոնյաների կողմից, որոնք կոչված են պաշտպանելու այդ շահերը: Բարոյականության խախտումները չեն արժանանում պատշաճ գնահատականի, առողջ քննադատությունը գնահատվում է որպես քնամամբ:

Պետք է նաեւ նկատել, որ, ի տարբերություն խորհրդային տարիների, այսօր արտերկրում հայ մշակույթ այլեւս գրեթե չի ստեղծվում: Սփյուռքահայության մեծամաս-



նությունը հայերենով չի կարողում, հայերենով գրելու մասին ավելորդ է խոսել անգամ: Մինչդեռ հայ մշակույթի ողնաշարը, նրա ուղն ու ծունդը հայոց լեզուն է:

Պատահական չէ, որ հայ մշակույթի վերելքի մեծագույն շրջանները համընկել են հայկական պետության՝ հովանավորի դերում հանդես գալու հետ: Կլինի Հայաստանը բարգավաճող, տնտեսապես ամուր, ազգային հիմքերին հավատարիմ մնացած պետություն, արագորեն կզարգանա եւ հայ մշակույթը, մանավանդ որ այն ունի ներքին վիթխարի պաշարներ՝ երաժշտության, ճարտարապետության, գրականության, կրթության եւ բազմաթիվ այլ բնագավառներում:

Միով բանիվ, հայ մշակույթի ապագան կախված է Հայաստանի պետության ապագայից:

ՀԱՅ ԱՐՎԵՍՏ

2002 2003 2004

2001

-ին, երբ լրացավ «Մոմիկ» մշակութային միության 10-ամյակը, եւ այդ հանգրվանային փուլն անցնելուց հետո որոշվեց հիմնադրել «Հայ արվեստ» մշակութային հանդեսը, մեր լավատես բարեկամներն անգամ ենթադրում էին, որ զգալի ծախսեր պահանջող այդ ձեռնարկը կարճ կյանք կունենա («մեկ-երկու համար կտպեք ու ...»): Ահավասիկ այսօր հասել ենք 10-րդ համարին:

Անցած տարիների աշխատանքի, լավի ու վատի, ոգեւորությունների ու հուսախաբությունների, որոնումների ու ծրագրերի մասին շատ բան կարելի է գրել, բայց մեր ընթերցողներին չձանրաբեռնենք: Կարելի է արդյունքն էլ, այն, որ «Հայ արվեստ» մշակութային եռամսյա հանդեսը կայացել ու շարունակվում է իր ճանապարհը հայ պարբերական մամուլի հարուստ անդաստանում որպես ուրույն իրատարակություն: Ուրույն, որովհետեւ սա նախկին «Սովետական արվեստի» շարունակությունը չէ, ոչ էլ սահմանափակված է մշակույթի որեւէ բնագավառով, այլ ունի որոշակի նպատակ՝ ձեւակերպված դեռ առաջին համարի խմբագրականում, որի վերնագիրն էր՝ «Մշակույթը միավորող առանցք»:

Հիրավի, հայերս աշխարհի քիչ ժողովուրդներից ենք, որոնց զավակների փոքր մասն ապրում է հայրենիքում, մեծ մասը՝ հայրենիքից դուրս: Դրան էլ եթե ավելացնենք մեր ազգը մասնատող հանգամանքները (լեզվի եւ ուղղագրության, դավանանքի, քաղաքական կողմնորոշումների եւ այլ տարբերություններ), պարզ կդառնա, թե որքան կարելի է ազգային մշակույթի համախմբող դերը: Ազգային ինքնագիտակցություն կամ դրա նշույլը ունեցող յուրաքանչյուր հայ, անկախ գրական լեզվի տարբերությունից, անգամ մայրենի լեզվի իմացությունից, անկախ դավանանքից, քաղաքական կողմնորոշումից (կուսակցական պատկանելությունից), իրեն համարում է հայ բազմադարյան մշակույթի ժառանգորդն ու կրողը: Ուրեմն, պիտի վեր հանվի, տարածվի, մասսայականացվի այդ մշակույթը, դարձվի հանրաճանաչ, դառնա հայ մարդու սեփականությունը, աշխարհի որ անկյունում էլ նա բնակվելիս լինի: Այդ առաքելության մի շարքային մարտիկը կարող է լինել նաեւ մշակութային պարբերականը, եւ հենց այդպիսի նպատակով է կյանքի կոչվել «Հայ արվեստը»: Այդ նպատակով են հանդեսի էջերը տրամադրվում ոչ միայն Հայաստանի, այլեւ Ափյուռքի մշակութային կյանքն ու արվեստագետներին ներկայացնող նյութերին, հոդվածներ են տպագրվում նաեւ արեւմտահայերենով: Հանդեսը լիազոր ներկայացուցիչներ է հաստատել արտասահմանյան 15 երկրի 22 քաղաքում (ցանկը շարունակելու է ածել), որոնց դերը տեղեկից թղթակցություն ուղարկելն ու պարբերականի տարածումն է:

Հանդեսի նպատակն է նաեւ համապատասխան մասնագետների վերլուծական հոդվածների միջոցով քննարկել արդի հայ մշակույթի վիճակը, խնդիրները, մատնանշել զարգացման ուղիները:

Ցանկալի է, որ սույն գործը շարունակվի ավելի մեծ ընդգրկումով ու ծավալով: Լիաժույս ենք, որ այդպես կլինի, որովհետեւ մենք այս «ճանապարհը» սկսեցինք մի քանի հոգով, բայց հիմա արդեն աշխարհի տարբեր անկյուններում ապրող տասնյակ հայեր «քայլում են մեզ հետ»:

Որոշ առումով հորելյանական նյութն ուզում ենք ավարտել խորին շնորհակալություն հայտնելով «Հայ արվեստի» աշխատակազմին, խմբագրական խորհրդին, հեղինակներին, լիազոր ներկայացուցիչներին, բաժանորդներին, ընթերցողներին, նվիրատուներին, գովազդատուներին, բոլոր նրանց, ովքեր «ըստ կարի իւրում» խրախուսել ու սատարել են մեզ: Շնորհակալություն նաեւ մեր քննադատներին, որոնց դիտողություններն օգնում են ավելի զգոն ու բժախնդիր լինել:

«Հայ արվեստը» պատկանում է մեզ եւ Ձեզ բոլորիդ: Խմբագրություն

ՀԱՆԴԵՍԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՋՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՈՒՄ

Շահան ԱՐԾՐՈՒՆԻ - ԱՄՆ, Նյու Յորք,
Տիգրան ՍԱՐԳՍՅԱՆ - Լոս Անջելես,
Արա ՂԱԶԱՐՅԱՆ - Բոստոն,
Ռաբել ԿՈՇԿԱՐՅԱՆ - Չիկագո
Անդրանիկ ՂԱԴԼՅԱՆ - ԱՄԷ, Աբու Դաբի,
Անահիտ ՀԱԿՈԲՅԱՆ - ԱՎՍՏՐԱԼԻԱ, Սիդնեյ,
Բեատրիս ՄԱՆՈՒԿՅԱՆ - Մելբուռն,
Խուան ԵԼԱՆԳԵԶՅԱՆ - ԱՐԳԵՆՏԻՆԱ, Բուենոս Այրես,
Սեդա ՓՈՐԹՈՅԱՆ-ՖՐՈԲԵԼ - ԳԵՐՄԱՆԻԱ, Մյունխեն,
Մուշեղ ՆԱԶԱՐՅԱՆ - ԹՈՒՐԹԻԱ, Ստամբուլ,
Ալբերտ ՔՈՉԱՐՅԱՆ - ԻՐԱՆ, Թեհրան,
Անի ԲԱԲԱՅԱՆ - Սպահան,
Մովսես ՀԵՐԳԵԼՅԱՆ - ԼԻԲԱՆԱՆ, Բեյրութ,
Մարո ՄԱՆԱԿՅԱՆ - ԿԱՆԱԴԱ, Մոնրեալ,
Անդրանիկ ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆ - Տորոնտո,
Արթուր ՕՇԱԿԱՆՅԻ - ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, Լոնդոն,
Ներիկ ԱԶԱՏՅԱՆ - ՇՎԵՅՏԱՐԻԱ, Ժնև,
Նիկոլայ ԹԱԴԵԻՍՅԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ, Մոսկվա,
Աշոտ ԽԱԶԱՏՐՅԱՆ - Սանկտ Պետերբուրգ,
Անի ՖԻՇԵՆԿԵՅԱՆ - ՍԻՐԻԱ, Հալեպ,
Սարգիս ՂԱՐԶԻՆՅԱՆ - ՎՐԱՍՏԱՆ, Թբիլիսի,
Էդդա ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՖՐԱՆՍԻԱ, Փարիզ:

Բարի երբ



Հայ մշակույթը եւ նրա խնդիրներն այսօր հայ հասարակության ուժադրության կենտրոնում են: Նման լայնամասշտաբական դարբերականի հրաճարակությունը խիստ կարելի է, որը լի է խրախուսվի նաեւ լիցենզիայի աջակցությամբ:

Վստահաբար կարելի է ասել, որ «Մոմիկ» կենտրոնի նախաձեռնությամբ ստեղծված, գոյության երրորդ տարին նշող եւ 10-րդ համարը տպագրող «Հայ արվեստ» եռամսյա մշակութային հանդեսը կայացել է: Այն համագործակցում է գիտական ու մշակութային հաստատությունների հետ, ընդգրկված է ԲՈՂԻ՝ գիտական առնչախոսությունների նյութեր հրադարակող դարբերականների ցուցակում:

Գնահատելի է նաեւ հանդեսի բերած նմաստը Հայաստան-Ափյուռք մշակութային կապերին, նրա լայն տարածումը:

Խմբագրականում մաղթում են հաջողություն, բեղում ու նաեւ համաձայն աշխատանք:

Հովիկ Հովեյան
ՀՀ մշակույթի նախարար



ՀԱՅ ԱՐՎԵՍՏ



Մոնրեալի առաջնորդարանի սրահում, ապրիլ, 2004 թ.:
Կարեն Մարտիրոսյան (զխավոր խմբագիր), Մարո Մանուկյան (լիազոր ներկայացուցիչ Մոնրեալում), Հասմիկ Գինոյան (գործադիր տնօրեն): Չորս տարի առաջ 2001 թ. սեպտեմբերին, Երևանում հենց այս փոքրիկ խումբը որոշում կայացրեց «Հայ արվեստ» հանդեսի ստեղծման մասին՝ որպես մշակութային մի նոր կամուրջ Հայաստանի ու Ափյուռքի միջև: 2002 թ. մայիսին լույս տեսավ հանդեսի անդրանիկ համարը:



Վերստուգիչ խմբագիր Անժել Ամիրխանյան:

Խմբագրությունում (Երևան, Հանրապետության 32), հոկտեմբեր, 2002 թ.: Նորայր Վարդանյան (պատասխանատու քարտուղար), Հասմիկ Գինոյան, Արթուր Օշականցի (լիազոր ներկայացուցիչ Լոնդոնում), Կարեն Մարտիրոսյան:



Խմբագրական խորհրդի անդամներ՝ Մուրադ Հասարթյան, Դանիել Շրաժիշտ Մարտին Միքայելյան, (հոկտեմբեր, 2004):

Մուրեն Նազարյան



Կոմիտաս



Մեսրոպ Մաշտոց



Միքայել Նալբանդյան



Պատկերասրահի շենքի համար նախատեսված քանդակները

Նվիրում

Կյանքը ուրախ օրերի սխուր հույս է:

Մուրեն Նազարյան

Ե այ արձանագործության վերջին կեսդարյա համապատկերում իր առանձնահատուկ տեղն ունի ժողովրդական քանդակագործ Մուրեն Նազարյանը, որի արվեստն իր կոթողայնությամբ համապատասխանում էր վերածնվող մեր մայրաքաղաքի տարածություններին իր պատմական ու այժմեական թեմաներով, սլացիկ ու վեհաշունչ ձևերով, մարդու միջավայրը իմաստավորող գեղարվեստական մարմնավորումներով: Հայաստանում եւ նախկին միության տարբեր շրջաններում Ս. Նազարյանի ստեղծած քանդակները կարող էին դառնալ մի փոքրիկ պատկերասրահ՝ դասական եւ արդի քանդակագործության ուրույն համադրումներով, մոնումենտալ քանդակագործությանը բնորոշ վեհ ու կոթողային հնչեղությամբ: Պարզ թվարկումն անգամ էջեր կգրավի, եւ մենք ամենեւին դրա նպատակը չունենք, քանզի արձանագործի ստեղծած եւ հասարակական ճանաչում գտած բազմաթիվ գործերը հնարավորություն կտան վերաստեղծելու արվեստագետի դիմապատկերը:

Մատենադարանի ճակատային մասի քանդակաշարի մեջ միշտ էլ առանձնացել է Ս. Նազարյանի ստեղծած միջնադարի մեծ բանաստեղծ Ֆրիկի հոյակերտ, հասակով մեկ կանգնած արձանը, որը բնականորեն ծուլվում է շենքի բազալտե մասսիվ շարվածքի եւ մյուս մեծերի արձանների հետ, ստեղծելով հայ ոգու նվիրյալների մի փայլուն համաստեղություն, դիտողի մեջ առաջացնելով ոգու ուժի եւ գեղեցկության, վեհության անկորնչելի զգացմունքներ: Հայոց մեծերի այս շքահանդեսը Մատենադարանի՝ միջնադարյան ամրոց հիշեցնող ճակատամասի հետ կարծես խաչատրյանական զրնգուն երաժշտության նորոթյա արձագանքը լինի:

Քաղաքամայր Երեւանի խորհրդանիշը դարձած Սասունցի Դավթի եւ Վարդան Մամիկոնյանի ծխարձաններից հետո 1978-ին ստեղծվեց լեգենդար Գայի (Հայկ Բժշկյանց) ծխարձանը, որը այն ժամանակների համար նորակառույց Նոր Նորքի թաղամասի գեղարվեստական պատկերը ամբողջացնող կարեւոր խորհրդանիշներից մեկը դարձավ: Կենտրոնական պողոտայի աջ բարձունքին տեղադրված ծխարձանը եւ շուրջը գետնոված ռելիեֆները կարծես իմի բերեցին ճարտարապետական կառույցներն ու շրջակա պուրակները: Նոր կառուցապատվող Երեւանի ծայրամասերը միայն կացարաններ չէին ժողովրդի համար, այլեւ նրան շրջապատող գեղարվեստական միջավայր: Այս իմաստով Մալաթիա թաղամասի հանգստի գոտու նազարյանական սովոր արձանախումբը տարբեր սյուժեներով ու թեմաներով վավերացնում է արվեստագետի բարձր պրոֆեսիոնալիզմն ու տարածությունը գեղարվեստականացնելու յուրակերպ մոտեցումները: Մարդուն շրջապատող տարածության վերակենդանացումը պլաստիկայի լեզվով - ահա այն դժվարին խնդիրը, որին Ս. Նազարյանը ոչ միայն փայլուն կերպով էր տիրապետում, այլեւ հմտորեն



միաձուլում էր քանդակային ձեւը միջավայրի ճարտարապետական հորինվածքների հետ:

Մոնումենտալ քանդակագործի հստակ նկարագիր ունեցող արվեստագետին հասու էին արձանագործության բոլոր տեսակներն ու տարատեսակները՝ բոլորաքանդակ,



Գայի արձանի պատի մոտ տիկնոջ՝ Լուսինա Ավետիսյանի հետ, 1976թ.

հարթաքանդակ, զարդաքանդակ... հայ միջնադարյան զարդաքանդակի նորոթյա փայլուն դրսևորումներից են էջմիածնի գահասենյակի «Ջվարթնոց» եւ «Հոփսիմե» հարթաքանդակները, որոնք հոգեւոր միջավայրում ստեղծում են սրբացած կնոջ եւ ճարտարապետական հուշարձանի հոգեպարար կերպարները՝ գահասենյակում առաջացնելով լուսավոր եւ հանդիսավոր մթնոլորտ, քարեղեն ռիթմերի նրբախուս արձագանքներ: Ջարդաքանդակային նույն սկզբունքներով է արված էջմիածնի կենտրոնական փոստատան նախամուտքի «Ավետում» քանդակային պաննոն՝ հորինվածքային կուռ կառույցով, հավատքի եւ լույսի ներթափանցումներով: Բազում դիմաքանդակների շարքում առանձնանում են օղանավերի ականավոր նախագծող Արտեմ Միկոյանի (Սանահին), Սանահինի մշակույթի տան «Օրհներգը», Ստեփանավանի «Պրոմեթեոս» եւ «Լուսաբաց» քանդակաշարը:

Մուրեն Նազարյան քանդակագործի համբավը դուրս էր եկել հայրենիքի սահմաններից, նրան հնարավորություն էր ընձեռնվում այլ երկրներում նույնպես ստեղծել հիշարժան գործեր: Դրանցից են Հայրենական պատերազմում զոհված մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանը Դազախստանի Տեմիրտաու թաղաքում եւ Կույբիշեի թաղաքային մետրոյի «Թռիչք» բարձրաքանդակը: Այն ժամանակների համար կարեւոր նվաճում էր համարվում Անդրկովկասյան բիենալեում շահած արծաթե մեդալը՝ իտալացի մեծ կոմպոզիտոր Վերդիի դիմաքանդակի համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԶՄԱԿԱՆԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԶՄԱԿԱՆԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ստորագրված է 2004 թ. 3-4-ի 26-րդ հոկտեմբերի 26-ին
Ստորագրված է 2004 թ. 3-4-ի 26-րդ հոկտեմբերի 26-ին

Հանձնարարվում է իրականացնել
Հանձնարարվում է իրականացնել

9> Բերքառատ է եղել Ս. Նազարյանի ստեղծագործական դաշտը, բազմաթիվ ելքային գործերում բարձր պրոֆեսիոնալիզմի նրա վարկը երբեք չի նահանջել, ընդհակառակը՝ նրա ապագա ծրագրերը զարմացրել են մասշտաբայնությամբ եւ խիզախ իրագործումներով: Առաջին հերթին սա վերաբերում է մայրաքաղաքի գլխավոր հրապարակի հանդուգն ձեւավորման հեռանկարին (նորակառույց պատկերասրահի եւ պատմության թանգարանի ճակատները): Այս գաղափարը նրան հանգիստ չէր տվել այն ժամանակ, երբ դեռ բնակվում էր Երեւանում եւ երբ ճակատագրի բերումով մեկնեց ԱՄՆ: Հսկայական չափերի քանդակներն ու քանդակախմբերը կատարված էին այնպես կամ այն հաշվով, որպեսզի ինչ-որ չափով դաշնություն մտցվի պատկերասրահի շենքի եւ հրապարակը շրջափակող թանայանական կառույցների միջեւ: Այս բավականին բարդ խնդիրը նա լուծել էր օպտիմալ չափով եւ խելամուտքով՝ ողջ հրապարակի պատկերի մեջ մտցնելով շարժման եւ պլաստիկայի օժանդակ տարրեր:

Մշակույթի բոլոր ճյուղերը («Երաժշտություն», «Թատրոն», «Նկարիչ», «Պատմիչ») եւ Հայաստանը խորհրդանշող քանդակները տարբեր հատվածներում, սիմետրիկորեն պիտի զարդարեին շենքերի ճակատի վերին գծերը: Այս գաղափարով ստեղծված մրցույթում Ս. Նազարյանը նվաճել էր կատարման իրավունք եւ կարծես թե հարցը լուծվելու վրա էր: Սակայն Հանրապետությունում առկա ֆինանսական հնարավորությունները (չնայած հեղինակը պատրաստ էր մույնիսկ անվարձաբաժնույց կատարել այն) խոչընդոտեցին այդ հրաշալի գաղափարի իրագործմանը: Հավատա՞նք, որ երբեւէ կկատարվի Ս. Նազարյանի երազանքը, ցավոք, արդեն հետմահու:

Արձանագործի կողակիցը, շնորհալի գեղանկարչուհի Լաուրա Ավետիսյանը հաճախ է լինում Երեւանում եւ ջանք չի խնայում այդ գործի իրագործման համար: Ահա այս օրերին նա Հայաստանի ազգային պատկերասրահին հանձնեց քանդակախմբի իրագործման իրավունքը եւ նախագծի փաթեթը, միաժամանակ նվիրաբերեց ամուսնու մի քանի բրոնզե դիմաքանդակներ (Մաշտոց, Կոմիտաս, Ա. Նազատուրյան, Մ. Նալբանդյան): Ստեղծվել է նաեւ «Սուրեն Նազարյան» դրամական ֆոնդ, որը քաջալերելու է արվեստաբան Հենրիկ Իգիթյանի ղեկավարած Հանրապետական գեղագիտական կենտրոնի շնորհալի սաներին:

Առանց հուզմունքի հնարավոր չէ կարդալ 2002 թ. քանդակագործի Երեւանում տպված բանաստեղծական փոքրիկ գրքույկը: Բանաստեղծությունները ստեղծվել են տարիներ առաջ Երեւանում եւ հետո արդեն ԱՄՆ-ում: Դրանք կյանքի իմաստի, Հայրենիքի, սիրո, դառնությունների եւ ուրախությունների մասին են: Տոգերի խորքում արվեստագետի մաքուր հոգեպատկերն է՝ ընդլզվումներով, բարությամբ, ճշմարիտ խորհրդածություններով, Հայրենիքի եւ իր ժողովրդի հանդեպ բարձր նվիրվածությամբ:

Ստեղծվել է նաեւ «Սուրեն Նազարյան» դրամական ֆոնդ, որը քաջալերելու է արվեստաբան Հենրիկ Իգիթյանի ղեկավարած Հանրապետական գեղագիտական կենտրոնի շնորհալի սաներին:

Առանց հուզմունքի հնարավոր չէ կարդալ 2002 թ. քանդակագործի Երեւանում տպված բանաստեղծական փոքրիկ գրքույկը: Բանաստեղծությունները ստեղծվել են տարիներ առաջ Երեւանում եւ հետո արդեն ԱՄՆ-ում: Դրանք կյանքի իմաստի, Հայրենիքի, սիրո, դառնությունների եւ ուրախությունների մասին են: Տոգերի խորքում արվեստագետի մաքուր հոգեպատկերն է՝ ընդլզվումներով, բարությամբ, ճշմարիտ խորհրդածություններով, Հայրենիքի եւ իր ժողովրդի հանդեպ բարձր նվիրվածությամբ:

ՊՈՐՏՈՒ ՀԱՅՈՒՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԲՐՈՆԻԿՈՆ

Օրհներգ եւ դրոշ



Երեւանի խորհուրդը սեպտեմբերի 27-ին հաստատեց մայրաքաղաքի օրհներգի համար հայտարարված մրցույթում լավագույնը ճանաչված «Երեւունի-Երեւան» երգը (խոսքը՝ Պ. Սեւակի, երաժշտությունը՝ Է. Հովհաննիսյանի)՝ որպես Երեւանի հիմն:

«Երեւունի-Երեւան»

Հոկտեմբերի 13-16-ին տեղի ունեցավ «Երեւունի-Երեւան» տոնակատարությունը, մեր մայրաքաղաքը դարձավ 2786 տարեկան: Բազմաթիվ մեծ ու փոքր միջոցառումներ եղան: Ուրախալի է, որ տոնի առիթով Երեւանի պատվավոր քաղաքացու կոչման արժանացան գիտության եւ մշակույթի չորս երախտավորներ՝ Վարազդատ Հարությունյանը, Սուրեն Գյանջումյանը, Սվետլանա Գրիգորյանը, Հենրիկ Իգիթյանը:

Արվեստի միջազգային ակադեմիա

Հայ մտավորականների եւ Մշակույթի գործիչների հանրապետական խորհրդի նախաձեռնությամբ Երեւանում կգործի Արվեստի միջազգային ակադեմիան, որը նպատակ ունի համախմբելու հայ եւ այլազգի մշակույթի արվեստագետներին՝ դառնալով համագործակցության, փոխադարձ արժեւորման կազմակերպչական կառույց, ինչպես եւ կանուրջ՝ հայ արվեստը աշխարհին ներկայացնելու համար:

Ակադեմիայի նախագահ է ընտրվել Աբգար Ափինյանը:

Գրադարան...

Աշնանային Երեւանի մշակութային տազմայներից էր ունեցությունը Ավ. Իսահակյանի անվ. գրադարանի շենքի նկատմամբ: Բարեբախտաբար գրադարանի ղեկավարությունն ու կոլեկտիվը մշակութային օջախի իրավունքների պաշտպանության հարցում հաստատակամորեն են տրամադրված եւ ժամանակին հասարակական հնչեղություն հաղորդեցին խնդրին: Աշխարհի բոլոր խոշոր քաղաքները հպարտանում են իրենց քաղաքային գրադարաններով: Ժամանակն է, որ մենք եւս այս հարցում հասունանանք:

Գաֆեսնյան թանգարանի հիմնադրամը հայտարարել է Ջերալդ Լ. Գաֆեսնյան ժամանակակից արվեստի թանգարանի ճարտարապետի եւ նախնական նախագծի ընտրության մասին:

Ճարտարապետ Դեյվիդ Հոթսընը կնախագծի Հայաստանում կառուցվելիք 25 մլն դոլար արժողությամբ ժամանակակից արվեստի թանգարանը:



Նյույորքի ճարտարապետ Դեյվիդ Հոթսընը ընտրվել է Գաֆեսնյան թանգարանի հիմնադրամի կողմից, որպեսզի նախագծի Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երեւանում կառուցվելիք Ջերալդ Լ. Գաֆեսնյան ժամանակակից արվեստի թանգարանը:

Ճարտարապետ, ընկերության ղեկավար Դեյվիդ Հոթսընը հայտնի է իր մի շարք ծրագրերով՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի համար նախատեսված գրասենյակների նախագծում, Մանհեթենի Արեւմտյան Չելսիում գտնվող մեդիա արվեստի կազմակերպության՝ «Այբիմ Աբելիերի» համար նախատեսված նոր հարմարությունների նախագծում, ճարտարապետ Սանտիագո Քալաթրավայի բնակավայրի նախագծում եւ Նյու Յորքի Մանհեթեն շրջանի Աֆրիկյան արվեստի թանգարանի նախագծման նպատակով որպես գլխավոր ճարտարապետ համագործակցությունը դիզայներ Մայա Լինի հետ: «Հոյակապ հնարավորություն է աշխատել Հայաստանում՝ այսպիսի հզոր պատմություն եւ մշակույթ ունեցող երկրում, աշխատել այսչափ արտասովոր տեղանքում: Նախագիծը Գաֆեսնյան թանգարանը տեղակայում է հայ ազգի անցյալի եւ ապագայի միջեւ: Այն Հայաստանի խոստումնալից ապագայի կոչ է՝ միաժամանակ արտացոլող նրա հզոր ժառանգը»,- ասում է Դեյվիդ Հոթսընը, որը հայկական մշակույթի շատ տարրեր է միախառնել թանգարանի կառուցման համար առաջարկված իր նախագծին: Թանգարանի շենքը կունենա հանրային հանգստավայրեր, ղեկորատիվ ավազան, քանդակների այգիներ, սրճարան եւ արտաքին կինոթատրոն. այդ բոլոր հարմարությունները բաց կլինեն ինչպես անցորդների, այնպես

էլ թանգարանի այցելուների համար: Այս գաղափարով աշխատակցող իր հանգրվանելու է Գաֆեսնյանի ապակե հավաքածուն, հորիզոնի վրա գծագրում է թանգարանի ուրվագծվող խորհրդանշը եւ կինոթատրոնի էկրանի հետ ներդաշնակությամբ պահպանում է Կասկադի կենտրոնական տեսանկյունը: Թանգարանի նախագիծը ստեղծում է քաղաքի կարեւոր խորհրդանշական տարրերի այնպիսի շրջանակված տեսարաններ, ինչպիսիք են Մայր Հայաստան հուշարձանը եւ Արարատ լեռը:

Թանգարանում, որի կառուցումը նախատեսվում է իրականացնել 2004-2006 թթ., կտեղադրվի պրն Գաֆեսնյանի ապակե արվեստի հանրահայտ հավաքածուն, որն ընդգրկում է ճանաչված ապակեգործներ Ստանիսլավ Լիբենսկու եւ Յարոսլավ Բրիխտովայի աշխատանքների փայլուն հավաքածուն: Մշտական ցուցադրությունները կներառեն նաեւ 20-րդ դարի ինչպես նկարչության, այնպես էլ քանդակագործության նշանավոր մոլորների լայն տեսականին: Ի հավելում, թանգարանը կիյուրընկալի նաեւ համաշխարհային մակարդակի ցուցահանդեսներ:

Ըստ ԳԹՀ-ի հանրային կապերի բաժնի տեղեկատվության

Հիմնադրամի բազմաժյուղ գործունեության մասին կարող եք ծանոթանալ համացանցում

www.cmf.am

Սեպտեմբերի 18-19-ը Ճաղկածորում հանդիսավորությամբ նշվեց Կեչառիսի վանքի հիմնադրման 1000-ամյակը: Առաջին օրը գրողների միության Ճաղկածորի ստեղծագործական տանը տեղի ունեցավ գիտաժողով, ուր ներկայացվեցին Կեչառիսի վանական համալիրի ճարտարապետությունը (Մուրադ Զասրաթյան), վանքի հիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի կյանքն ու գործունեությունը (Կարեն Մաթևոսյան), տեղի վիճակաճարձագործությունները (Գագիկ Սարգսյան), Կեչառիսի մասին եղած ժողովրդական ավանդությունները (Վարդան Դեմիրճյան), վանքի նվիրատուները (Գնել Գրիգորյան), Կեչառիսի գրչության կենտրոնը (Արվի-

հազարամյա

նիկ Ղազարոսյան), Խաչատուր Կեչառեցու տեղը հայ միջնադարյան գրականության մեջ (Անիտա Դոլուխանյան): Ներկայացվեցին նաև Կոտայքի թեմը ու Կեչառիսի վանքն այսօր (Հարություն Հարությունյան), Ճաղկածորի համայնքի կողմից եղավ նաև Կեչառիսի համալիրի տարածքի ամբողջացման առաջարկ (Մանուկ Մանուկյան): Մասնավորապես առաջարկվեց վանքի տարածքից դուրս բերել մոտակա ավտոճանապարհը եւ Ս. Հարություն «առանձնացված» եկեղեցին ներառել համալիրում: Արժեք նշել, որ Կոտայքի թեմի առաջնորդարանից եւ քաղաքի իշխանություններից մեծ ջանքեր կպահանջվեն, որպեսզի վանական համալիրը չխեղդվի լայն թափով ընթացող կառուցապատումների մեջ ու հեռվից երեւալով շարունակի իշխել շրջապատի վրա:

Գիտաժողովից հետո տեղի ունեցավ «Կեչառիս-1000» եռալեզու գունատիպ գրքի շնորհանդեսը: Գրքում ներկայացված են վանքի պատմությունը, ճարտարապետությունը, ավանդությունները եւ ժամանակագրությունը, նաև հատակագծեր, գծապատկերներ ու բազմաթիվ լուսանկարներ:

Սեպտեմբերի 19-ին Կեչառիսի վանքում տեղի ունեցավ սուրբ պատարագ՝ հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի, պատարագիչը Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանն էր: Պատարագից հետո վանքի բակում խուռներամ բազմության ներկայությամբ ողջույնի խոսք ասաց վանքի նորոգության եւ տոնակատարության բարերար Վլադիմիր Հարությունյանը: Հոբելյանն ըստ արժանվույն գնահատող ելույթներ ունեցան նաև Ճաղկածորի քաղաքապետը, Կոտայքի թեմի առաջնորդը եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց հայոց միջնադարյան վանքերի ու եկեղեցիների նորոգումը, որի շնորհիվ դրանք կրկին ծառայում են մեր ժողովրդին եւ ակներեւ դարձնում հայոց հավատքի սրբազան արժանատիք, որոնց ամրությանն ենք պարտական մեր գոյատեւմամբ:

Այնուհետեւ տեղի ունեցավ համերգ՝ մարզի երգի ու պարի խմբերի, Աննա Մայիլյանի, Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու «Սաղմոս» երգչախմբի մասնակցությամբ, ինչ-



ԿԵՉԱՐԻՍԸ

պես նաև մատաղի օրհնություն: Դյուրերի եւ գիտաժողովի մասնակիցների համար Կոտայքի թեմի առաջնորդարանը կազմակերպել էր ընդունելություն:

«Հեչակավոր եւ հրաշագան» Կեչառիսի վանքը, որին միջնադարյան գրիչն անվանում էր «պայծառապետ ճոխացեալ ի սկզբանն», իր երկրորդ հազարամյակը դիմավորում է կրկին «պայծառապետ ճոխացեալ», շնորհիվ Արեւմտյան Հայաստանում ծնված եւ Մեծ եղեռնից հետո Ստավրոպոլում ապաստանած Հարություն եւ Վարսենիկ Հարությունյանների ընտանիքում ծնված Վլադիմիր Հարությունյանի: Ի դեպ, նա Հայաստան էր ժամանել ընտանիքով՝ որդու եւ թոռների հետ:

Ամել ԱՄԻՐԻԱՆՅԱՆ



**Նոյեմբերի 29-ին
լրանում է
Վարդգես
Հարությունյանի
ծննդյան
95-ամյակը:
Խմբագրությունը
սիրով
ենտրավորում է
մեծանուն
գիտնականին:**



Ժամանակին սովետական երկրի նոր «գահակալը»՝ Նիկիտա Խրուշչովը հայտարարեց. «Հուշարձանները կարող են սպասել, հարկավոր է բարելավել ժողովրդի բնակարանային պայմանները»: Բովանդակ սովետական երկրում կառուցվեցին միատիպ, նվազագույն հարմարություններ տրամադրող, նաև՝ ճարտարապետագեղարվեստական արտահայտչաժողով խիստ պակասավոր «խրուշչովյան» կոչված բնակելի զանգվածներ:

Երկրի մտավորականներից ոմանք հանդես եկան բողոքներով, չհամաձայնեցին խրուշչովի որոշմանը: Որպես հետեւանք երկրում առաջացավ հուշարձանների պահպանության հասարակական ընկերություններ ստեղծելու պահանջ: Առաջինը 1963-ին ստեղծվեց Վրաստանում, հաջորդ տարի Հայաստանում ու այնուհետեւ երկրի համարյա բոլոր հանրապետություններում:

Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության առաջին նախագահ, մեծանուն Մարտիրոս Սարյանի գլխավորությամբ (տողերիս հեղինակը առաջին տեղակալն էր), ծավալվեց գործունեություն, անհատական (շուրջ 400 հազար) եւ իրավական (2600) անդամների անդամավճարների օգտագործմամբ: Դրան զուգարկվեցին նաև նվիրատվությունները Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամից, Վազգեն Ա կաթողիկոսից եւ այլ բարերարներից:

40 տարիների ընթացքում ծավալած ազգանվեր գործունեությամբ ՊՀԴՀ-ը մնայուն ու գնահատելի ծառայություն է մատուցել մեր քարեղեն զանգվածների պահպանության ու հանրաճանաչ դարձնելու իր ջանքերով: Ամբողջովին վերականգնվել են շուրջ 30 համալիրներ եւ առանձին հուշարձաններ: Դրանցից առավել հիշատակելիներն են Գնդեվանքի եկեղեցին ու գավիթը, Ամբերդի եկեղեցին եւ բաղնիքը (մասնակի), Հայրավանքի եւ Վանեվանքի համալիրները, Եղեգիսի Ջորաց եւ Ս. Կարապետ, Դաշտաղեմի Ս. Քրիստափոր, Սառնաղբյուրի Հոգեվանք Ս. Կարապետ, Կապուտանի Ս. Միսնա, Բջնիի Ս. Հարություն, Արտաշավանի Ամենափրկիչ, Մեղրիի Մեծ թաղի եւ այլ եկեղեցիներ: Համարյա նույն քանակությամբ հուշարձաններում իրականացվել են մասնակի վերականգնման աշխատանքներ, որոնց մի մասը մնացել է թերավարտ:

Ընկերության հրատարակչական գործունեությունը նույնպես արդյունավետ է եղել: Լույս է ընծայվել 17 գիրք, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի, Նախիջեւանի, Դրիմի թերակղզու հուշարձանների մասին: Խոշոր տպաքանակով հրատարակվել են շուրջ 100 հուշարձանի մասին պատմող հանրամատչելի ծալքաթերթեր (բուկլետներ): Հայերեն ու

ռուսերեն լույս են տեսել պատկերազարդ պլակատներ, ուղեցույց քարտեզներ, օրացույցներ:

Օգտակար էին նաև Հայաստանի հուշարձաններով հարուստ մի քանի շրջաններում անցկացրած գիտագործնական ժողովները, որոնք նվիրված էին տվյալ շրջանի պատմաճարտարապետական ժառանգության արժեքավորմանը, պահպանության գործը բարելավելու խնդիրներին:

Ընկերությունը մշտապես տեսադաշտում է ունեցել Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հուշարձանների պահպանության հարցերը: Մարտիրոս Սարյանի ստորագրությամբ նամակներ են ուղարկվել Ադրբեջանի կենտրոնի քարտուղար Հեյդար Ալիևին Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի հայկական հուշարձանների բարձրորդ վիճակի մասին, տեղեկանք է ներկայացվել Կոմկուսի քաղաքականության ղարաբաղի հուշարձանների ազգային պատկանելության մասին (քանզի ըստ Ադրբեջանի վայ գիտնականների՝ դրանք աղվանական են...), տողերիս հեղինակի կողմից Թուրքիայի նախագահ Դեմիրելին Արեւմտյան Հայաստանի տարածքում գտնվող հայկական հուշարձանների զանգվածային բնաջնջման, մեկ այլ հողվածով՝ Հին Ջուղայի գերեզմանատան ավերման կապակցությամբ:

Պատմական հուշարձանների դահողանության հայկական ընկերության 40-ամյակը

1988-ի կործանարար երկրաշարժը մեծ վնասներ պատճառեց հայկական հուշարձաններին:

Անկախության տարիներն անմալաստ եղան ՊՀԴՀ գործունեության համար, ծավալները խիստ կրճատվեցին: 1990-ական թթ. հնարավոր եղավ միայն ավարտել Արեւիի Ս. Աստվածածին եկեղեցու, Գառնահովտի Ս. Գեորգ, 7-րդ դարում կառուցված տաճարի (մեկենասությամբ Գ. Կյուլպենկյանի թոռ Միքայել Եսայանի) ու Թալիհի Ս. Աստվածածին փոքր եկեղեցու ամբողջական վերականգնումները (Ամրոցանիկ Դաղյանի մեկենասությամբ):

Այժմ ընկերությունը կանգնած է «կոտրած տաշտակի» առաջ: Սակավաթիվ անդամներից ստացվող եկամուտը նույնիսկ հնարավորություն չի տալիս թեկուզ ավարտել թերավարտ մնացած հուշարձանների վերականգնումը: Ոչ իրավական անդամներ ունենք, ոչ էլ եկամուտներ: Այսօրվա հարուստներն իրենց եկամուտներից մասնահանում չեն կատարում, որպեսզի ընկերությունը կարողանա շարունակել իր ազգօգուտ գործունեությունը:

Շատ կցանկանայի, որ իմ այս հրապարակումը պատշաճ արձագանք ունենա, լինեն ձեռք մեկնողներ:

ՎԱՐԴԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս



Ֆարգազույց «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն, Մատենադարանի փոխտնօրեն Արսակ Բանուկյանի հետ

- Մատենադարանն ավելի շատ մեր հասարակությանը հայտնի է որպես թանգարան եւ ավելի պակաս՝ գիտահետազոտական հաստատություն:

- Անշուշտ հասարակության լայն շերտերին Մատենադարանը հայտնի է իբրեւ թանգարան: Իսկ Մատենադարանի գիտահետազոտական աշխատանքներն առավելապես ուղղված են գիտական շրջանակներին: Սակայն Մատենադարանը նաեւ մեր ժողովրդի մի սովոր մասի գիտակցության մեջ «հոգեւոր» հաստատություն է, կարելի է ասել, սրբավայր, ուր պահպանվում են հայ ժողովրդի արիավիրքների փրկված ու հավաքված հոգեւոր գանձերը, ձեռագրերը, որոնք գրվել կամ պահպանվել են պատ-

մական Չայաստանի տարբեր սրբատեղիներում, եւ որոնց դարեր շարունակ ուխտի են գնացել հավատավոր հայորդիներ: Մատենադարանը հայազգի թե օտար, պարզ զբոսաշրջիկների մոտ թանգարանի համբավ ունի, մտավորականության համար գիտահետազոտական հաստատություն է, իսկ հայ ժողովրդի մի սովոր գանձվածի պատկերացմամբ՝ իր պատմական հիշողությունը արձանագրած, հոգու եւ մտքի սլացքն ամփոփող ու զարգացնող սրբավայր:

- Աշխարհի այլ երկրներում այսպիսի արժեք ունեցող հաստատությունները պահպանվում ու զարգանում են պետական միջոցներով: Կարողանո՞ւմ է այսօր Չայաստանի կառավարությունը բավարար չափով ապահովել Մատենադարանի կարիքները:

- Այլ երկրներում իբրեւ կանոն, համաման հաստատությունները ստանում են պետական դոտացիա եւ որոշակի արտոնություններ, որոնք սահմանվում են հատկապես այսպիսի հաստատությունների համար: Իսկ առանձին դեպքերում, երբ հաստատությունը բացառիկ կարեւորություն ունեցող հավաքածու ունի, կիրառվում են հատուկ այդպիսի հաստատությունների մասին գրված օրենքներ: Սակայն միայն պետության հույսին այսպիսի հաստատությունները չեն կարող մնալ: Իբրեւ կանոն դրանց կից գործում են «բարեկամների միություններ» կամ հիմնադրամներ:

ՀՀ կառավարությունը Մատենադարանին հատկացնում է բավարար ուշադրություն, այնքանով, որքանով թույլ է տալիս Չայաստանի ներկա տնտեսական զարգացման մակարդակը: Մատենադարանին կից 2001 թվականից գործում է «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը (ԲԲԲՀ), որի պատվով նախագահին է Գարեգին Երկրորդ Վեհափառ Չայրապետը, նախագահը՝ ակադեմիկոս Սեն Արեւշատյանը:

Վերջին շրջանում մենք կարողանում ենք զուգարդել եւ ի շահ գործի նպատակաձեռն պետական աջակցությունն ու հիմնադրամի միջոցները:

Այսպես, պետության մասնակցությամբ «Լինսի» դրամաշնորհի շրջանակում վերանորոգվեց Մատենադարանի շենքը, «Ճապոնիայի կառավարության մշակութային օգնություն» ծրագրի շրջանակում մեր սարքավորումներով վերազինվեցին Մատենա-

դարանի վերականգնման եւ ֆոտոլաբորատորիաները: Անցած տարիների ընթացքում Մատենադարանը մշտապես զգացել է «Գալուստ Կյուլպենկյան» հաստատության եւ երջանակահիշատակ բարերար Ալեք Մանուկյանի աջակցությունն ու ուշադրությունը: Չայաստանյան գործարար շրջանակներից անուրանալի է Քաջարանի «Պղնձամուկիթեմային» ՊԲԲ ընկերության մեծ աջակցությունը: Շատ անուններ կարելի է թվարկել, սակայն հարցի շրջանակներից դուրս չգալու համար ասեմ, որ հիմա հիմնադրամը Մատենադարանի տնօրինության հետ պատրաստում է «Մատենադարանի զարգացման հեռանկարային ծրագիր», որ մոտ ժամանակներս կներկայացվի կառավարությանը:

Մատենադարանը մեր ժողովրդի հոգեւոր գանձարանն է

Շուտով հայ ժողովուրդը տոնելու է «Չայոց Գրերի գյուտի» ու նաեւ Մատենադարանի 1600-ամյա հոբելյանները: Թե Մատենադարանը, եւ թե Չայոց գրերը Չայոց աշխարհիկ եւ հոգեւոր իշխանության համատեղ գործակցության արգասիքն են:

- Ովքե՞ր են Մատենադարանի բարեկամները, ինչպե՞ս եք գտնելու նրանց: Ո՞րն է լինելու բարեկամության չափանիշը:

- Սկսեմ վերջին հարցից: Բարեկամության չափանիշը բարի կամքն է, նվիրումը վերանծնական, զուտ բարոյական չափանիշներ ունեցող, համագգային, համամարդկային արժեք ունեցող գործերին: Բարեկամություն - ասել է թե բարի կամեցողություն Մատենադարանի ձեռագրերում գրիչների, հետագա ստացողների, փրկագնողների եւ այլ հիշատակարաններում արձանագրված են 1600 տարվա հայ գրի եւ գրչության նվիրյալների, բարեկամների բազմաթիվ անուններ: Փորձիր չափանիշներ գտնել եղեռնից, ջարդերից մազապուրծ եղած հայ մամուլի «բարեկամության» համար, որն իր հարազատներին, կայքը, տունը, հայրենիքը կորցրած, կյանքը վտանգելով ձեռագիր էր փրկում:

Չափազանցում եմ, որ Մատենադարանը տասնվեց դար գոյատևել ու ապրել է, եւ հավերժորեն մնալու է, որովհետեւ միշտ գտնվելու են անձնավեր ու անշահախնդիր հայորդիներ, հայոց գրի եւ գրականության նվիրյալ բարեկամներ:

Մատենադարանում հավաքված են արիավիրքներից փրկված մասունքներ, հայ ժողովրդի սրբության վկաներ, որոնք թե՛ ստեղծողն է հայ ժողովուրդը, թե՛ փրկողը, թե՛ պահպանողը: Իսկապես դժվար է այսօր բարեկամության չափանիշ գտնել...

- Այսօր այնքան շատ են դրամահավաք կազմակերպությունները, որ այս գեղեցիկ նախաձեռնությունը կարող է համարվել հերթական:

- Ի դեպ, բոլոր դրամահավաք կազմակերպություններն էլ գեղեցիկ նախաձեռնությունների համար են ստեղծվում: Այն առաքելությունը, որ մենք ենք մեր առջեւ դրել, այնքան էլ նյութական չէ, թեեւ վերջին հաշվով ամեն ինչ գալիս համգում է նյութականին:

Չարցին պատասխանելու համար նորից անցնեմք անցյալին պետք է անդրադառնամ: Ձեռագրերի հիշատակարաններում ձեռագրի «ստացողները» (պատվիրատուները) հաճախ են նշում, որ ձեռագիրը ձեռք են բերել որպես «հոգեւոր զավակ», կամ որպես «հոգեւոր զավակ» նվիրաբերել են եկեղեցուն: Չայ մատենագրությունը հայ ժողովրդի հոգեւոր զավակն է: Պետք է կարողանալ արթնացնել հայ մարդու կապը իր մշակութային ժառանգության հետ: Այդ կապը կարող է տարբեր արտահայտչաձևեր ունենալ, օրինակ՝ մասնակցություն մեր «Ձեռագրի բարեկամ» ծրագրին: Այս ծրագրի շրջանակում ձեռագրի նկարագրությանը, վերանորոգմանը, ուսումնասիրմանը, քվայնացմանը եւ այլ աշխատանքներին աջակցած հայորդիների անուններն ուղղակի պետք է արձանագրվեն մույն այդ ձեռագրի մեթոդային հիշատակարանում: Մի խոսքով, հայ մարդու կենսամտածողության մեջ իր մշակութային >

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

Հոկտեմբերի 22-ին Ս. Էջմիածնի Վեհարանում Ամենայն Չայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը Օրինության կոնդակ տվեց Մատենադարանի բարեկամներ բարեգործական հիմնադրամին: Հանդիսությունը բացելով՝ Ս. Ներսես արք. Պողոսյանն անդրադարձավ օրվա խորհրդին, նշելով, որ Վեհափառ Չայրապետի Օրինության գրի համընդուն ճշմարիտ գնահատանքն է Մատենադարանի աշխատակիցների անդուլ աշխատանքի, որը նվիրում է հայ մշակույթին: Այս ելույթ ունեցավ հիմնադրամի պատվով անդամ Մաքսիմ Հակոբյանը, նշելով, որ «Մատենադարանի աշխատակիցները լծված են սուրբ գործին» եւ որ իր համար մեծ ուրախություն է հնարավորության սահմաններում նրանց սատարելը: Բարերարը երախտագիտություն հայտնեց Վեհափառ Չայրապետին եւ քիչ անց նրա ձեռքից ստացավ ՄԲԲՀ-ի պատվով անդամի վկայագիրը:

Ս. Սերովբե վրդ. Իսախանյանը ընթերցեց Ամենայն Չայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը: Այն հանգամանորեն ներկայացնելով Մատենադարանի բացառիկ դերը հայ իրականության մեջ եւ արժեւորելով մատենադարանցիների մեծ ավանդը, կոչ է ուղղում համայն հայությանը օժանդակություն ցուցաբերելու հիմնադրամին:

Հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Բանուկյանը խորին երախտագիտություն հայտնեց Վեհափառ Չայրապետին, որը հիմնադրամի ստեղծման առաջին իսկ օրից օգնել է նրան: Անդրադառնալով Չայոց գրերի գյուտի առաջիկայում նշվելիք 1600-ամյա հոբելյանին, նա նշեց, որ դա նաեւ մաշտոցահիմն Մատենադարանի 1600-ամյակն է, որը մեկ ու կես հազարամյակ գտնվել է Եջմիածնում: «Ինչպես որ հնում ձեռագիր պատվիրողները այդ մատյաններն իրենց հոգեւոր զավակն էին համարում, այնպես էլ Մատենադարանը ողջ հայ ժողովրդի հոգեւոր զավակն է»,- ասաց նա:

Իր խոսքում Գարեգին Երկրորդ կաթողիկոսն ասաց. «Մատենադարանը սրբազան օջախ է յուրաքանչյուր հայորդու համար, այն գանձարանն է հայ ժողովրդի, ուր ամփոփված են մեր ժողովրդի մտավոր ու հոգեւոր հարստությունները, նվիրական զգացումները, որի շնորհիվ այն իրազագործ գործություն ունի: Մեր նվիրական պարտքն ենք համարում աջակցել Մատենադարանին»: Անդրադառնալով հիմնադրամի գործունեությանը, Վեհափառ Չայրապետը նշեց, որ այն արդեն տվել է «բարի պատուհան», շնորհակալություն հայտնեց Մաքսիմ Հակոբյանին եւ հույս հայտնեց, որ կգտնվեն նաեւ մեր նվիրատուներ, որոնց միջոցով հնարավոր կլինի լավագույն ձևով պահպանել Մատենադարանի գանձերը, դրանք արդյունավետորեն ուսումնասիրել, հրատարակել եւ դարձնել հայ ժողովրդի ու ողջ քաղաքակիրթ մարդկության սեփականությունը:



> Ժառանգության տեր դարձնելու գիտակցությունը վերականգնելը, այդ ժառանգության պահպանմանն ու զարգացմանը մասնակից դարձնելը շատ ավելի կարեւոր են համարում, քան պարզապես դրամահավաք կազմակերպելը:

- Ինչպե՞ս եք կազմակերպելու ՄԲԲՀ-ի աշխատանքները Սփյուռքում եւ ի՞նչ ծրագրեր եք առաջարկելու Մատենադարանի բարեկամներին:

- Շուրջ տասներկու երկրներում ունենք ներկայացուցիչներ: Տվյալները ներկայացված են Մատենադարանի ամենամյա տարեգրքում: Անշուշտ շատ կարեւոր եւ օգտակար աշխատանք է տարվում ներկայացուցիչների միջոցով: Զեմ ուզում առանձին-առանձին անդրադառնալ այդ աշխատանքներին: Շուտով կգործի ՄԲԲՀ-ի ինտերնետային հանգույցը, մեր ներկայացուցիչներն իրենց առանձին էջերը կունենան եւ ամեն ինչ մանրամասն կներկայացվի: Կներկայացվեն նաեւ գործունեության բոլոր ուղղությունները:

Ամենակարեւոր ծրագիրը այն է, որ Մատենադարանը պետք է մեր, փոխված հասարակական-տնտեսական հարաբերությունների մեջ զարգացման առաջնահերթ ուղղությունները հստակեցնի, վերագումի իր դերը հայ իրականության մեջ, մեր թափով ու նպատակաձեռն լծվի հայազգիության զարգացմանը, հրատարակություններով, լայն գործունեությամբ, աշխուժությամբ ներկա լինի յուրաքանչյուր հայի սրտում ու ընտանիքում:

ԱՐԴՈՒ ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) Աբու Դաբի քաղաքի Չայրական մշակութային ընկերակցությունը (ատենապետ՝ Անդրանիկ Դադյան) հիմնադրվել է 1988-ին: Ընկերակցության անդամներն իրենց նպատակը ձեռակերպել են հետեւյալ կերպ. «...այս անավատի նորաստեղծ հայ գաղութին մեջ լրացնել մշակութային բացը, նախ՝ դասախօսութիւններու շարքերով, գրական, կերպարուեստի, նկարչական, երաժշտական, ճարտարապետական եւ այլ միջոցներու շուրջ, նախաձեռնել հանդիսութիւններ լայն ծաւալով՝ հայրենի արուեստագետների ելույթներով, այս երկրի բազմազգ բնակչութեան համար, ներկայացնելով հայ մշակույթի այլազան բնագաւառներու տաղանդաւոր արուեստագետներն ու կատարողները, սատար հանդիսանալով ազգային մշակութային արժեքներուն, աջակցելով անոնց պահպանմանը, գնահատմանը, տարածմանն ու ճանաչմանը»:

Այս առաջ ունենալով Չայրական մշակութային ընկերակցության միջոցառումների սոսկ թվարկումը, կարող ենք փաստել, որ կազմակերպությունն ամբողջովին հավատարիմ է մնացել իր նպատակին եւ հասել ծանրակշիռ արդյունքի: Այն մեծ հեղինակություն է վայելում ԱՄԷ-ում եւ սերտորեն համագործակցում տեղի լրատվության եւ մշակույթի նախարարության հետ:

Ընկերակցության այս տարվա ձեռնարկներից հիշարժան է փետրվարին ԱՄԷ-ում Երեւանի պետական կամերային նվագախմբի երեք փայլուն համերգների կազմակերպումը: Իսկ հոկտեմբերին կազմակերպության նախաձեռնությամբ Չայաստան պաշտոնական այց կատարեց ԱՄԷ-ի լրատվության եւ մշակութային փոխնախարարության եւ երկու արաբ արվեստագետ, որոնք ինքնատիպ համերգով հանդես եկան Երեւանում եւ Գյումրիում:

Չայրական մշակութային ընկերակցության ատենապետ Անդրանիկ Դադյանը «Չայ արվեստ» հանդեսի լիազոր ներկայացուցիչն է ԱՄԷ-ում:



Կարո՞ւսակե՞ք կերպարվեստագետք

Արտագաղթը նորություն չէ: Խորհրդային շրջանին եւս շատեր ծագում ունեին ԱՄՆ մեկնելու, պարզապես համեմատաբար ավելի բարվոք կյանք ծեռք բերելու համար: Յուրոզի (Յուրի Գեորգյան) պարզապես այդպես չէր. ան խորհրդային սահմաններն որոշեց դուրս գալ, նախ ծեռք ազատվելու համար համայնավար հալածանքներ, երկրորդ՝ ազատորեն ապրելու եւ անկաշկանդորեն ստեղծա-

Յուրոզ

գործելու տենչը կայրեր գինք: Կհավատար, որ ԱՄՆ-ի մեջ պիտի գտներ այն ամենը, ինչ որ կերպեր խորհրդային սահմաններն ներս: Սակայն, երբ դեմ հանդիման եկավ ամերիկյան կյանքի բիրտ ճշմարտության, լքվեցավ բոլորեն, նույնիսկ իր հայրենակիցներն ու գաղափարակիցներն եւ դարձավ տնանկ (homeless):

Յուրոզ ծնած է Երեւան 1956-ին: 17 տարեկանին կավարտե Դավթ Կոչոյանի անվան գեղանկարչական ուսումնարանը եւ ապա կրնդունվի Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժինը, զոր կավարտե փայլուն հաջողությամբ: Սկսյալ ուսանողական տարիներն մաս կկազմե ընդհատակյա ազգայնական-ազատագրական շարժումներու: 70-ական թվականների վերջավորության կարգ մը գործակիցներու հետ կծերբակավի, կդատվի եւ երեք տարի տնային կալանքի կենթարկվի: Տնային կալանքի ճնշվածությունը թեթեւեղելու եւ ապրուստը հոգալու համար Ռոզա անունով ընկերուհիի մը հետ դերձակատուն մը կհիմնե «Յուրոզ» պայմանական անունով: Կսկսի հագուստներ ձեւավորել, սակայն ոչ հարատեւ աշխատանքը եւ ոչ ալ անոր ընթերցասիրությունն ու նկարելու պահանջը կնպաստեն փարատելու եւ կամ մեղմելու համար անոր վիշտն ու տառապանքները: Ի վերջո, զարտուղի միջոցներով դուրս կուգա խորհրդային սահմաններն եւ 1985-ին կհասնի Լոս Անջելոս: Ոչ ոք ծեռք կերկարե իրեն. ոչ ոք հաղորդակից կըլլա իր տվայտանքներուն եւ տագնապներուն, բացի տնանկ (homeless) Թոմեն, որ կտանի ու կպատասպարե գինք այլ տնանկներու մոտ: Անարգված մարդկային հասարակութեն, հարկադրաբար ծայրահեղ թշվառության կմատնվի: Նկարելու իր ներքին մղումին հագուրդ տալու համար, իրեն մխիթարանք կսկսի ծամբեգրի մարդաշատ մայթերու վրա երփնագրել: Բոլորովին պատահաբար անոր կհանդիպի Լոս Անջելոսի արվեստի ամենահայտնի ցուցասրահներն մեկի տերն ու տնօրենուհին՝ Դեբորա Մուրի: Ան Յուրոզին կտանի իր բնակարանը, կապահովե կեցությունը, արվեստանոց եւ ստեղծագործելու հարմարանքներ կտրամադրե անոր: Յուրոզ քաջալերված այս տիկնոջ ջերմ վերաբերմունքեն, խանդավառված ստեղծագործական աշխատանքի կլծվի: Անոր գեղանկար-

ները կսկսին ցուցադրվիլ եւ կարճ ժամանակին իր դիմաց կբացվին ամենադժարահաճ դռներն իսկ: Շնորհիվ իր տաղանդի ուժին Յուրոզ այսօր միջազգայնորեն ճանաչված եւ փնտռված արվեստագետ մըն է, հատկապես ամերիկյաներու մեջ: Անոր երփնագիրներն շատեր արդեն իսկ հանգրվանած եւ մնայուն ցուցադրության արժանացած են ամերիկայի շարք մը թանգարաններու մեջ: Ան արժանացած է նաեւ տասնյակ մը ավելի միջազգային եւ համամերիկյան պատվոգրերու եւ մրցանակներու:

Յուրոզ կարոտով կհիշե Երեւանն ու առհասարակ հայրենիքը: Ջերմությամբ եւ ակնածանքով կուտա իր ուսուցիչներու եւ դասախոսներու, ի մասնավորի Արթուր Թարխանյանի եւ Ջիմ Թորոսյանի անունները, որոնք մեծ դեր կատարած են իր աշխարհայացքի կազմավորման ու գեղագիտական հայացքներու հասունացման մեջ: Եվ պատահական չէ, որ խորքով ու բովանդակությամբ համամարդկային ըլլալով հանդերձ Յուրոզի արվեստն ունի ազգային նկարագիր եւ թաթավուն է հայ մշակութային երանգներով: Ան նույնիսկ կօգտագործե մեր ազգային խորհրդանշաններն շատեր, որոնց մեջ հատուկ տեղ կգրավե նուռը: Կենսասիրության հակամետ այս արվեստագետը ծգտելով հանդերձ բացարձակ գեղեցիկի եւ ամբողջական սիրո բացահայտման, կդրսեւորե նաեւ մարդկային տագնապներն ու տառապանքները: Այս առումով խիստ հատկանշական են իր այն ապրումներն ու հույզերը, որոնք կբխեն հեթանոս ակունքներ, սակայն կբացվին քրիստոնեական սկզբունքներու ծիրի վրա:

2000 հոբելյանական տարեթվի առիթով Յուրոզ ընդառաջելով ՄԱԿ-ի գաղթականներու բաժանմունքի խնդրանքին՝ իրագործեց մեծղի կտավ մը, «Հարգանք՝ գաղթականներուն» խորագրին տակ: Այս կոթողային գործի (300x500 սմ) կեղծողը պատկերված է հայ ընտանիքը, ուր երեք սերնդի պապը թոռան կհանձնե իմաստության եւ ուժի խորհրդանիշ տոհմական մականը: ՄԱԿ-ի գաղթականներու բաժանմունքին կողմն դրոշմաթուղթի վերացված եւ միլիոնավոր հաստատություններու եւ ամենավորություններու բաժնված «Հարգանք՝ գաղթականներու» կտավի ներշնչումը կուգա մեր պատմական մոտիկ անցյալեն՝ եղեռնեն ու կտարածվի համամարդկային հոգեմտավոր անդաստաններու վրա:

ՄԱԿ-ի «Մարդկային իրավունքներու» բաժանմունքի պատվերով Յուրոզ վերջերս իրագործած է յոթ ստեղծագործություններ (յուրաքանչյուրը 300x200 սմ մեծությամբ) բաղկացած նկարաշարք մը, որուն վեցերորդը նվիրված է Արարատին եւ Նոյյան տապանեն արձակված աղավմիին: Այս երփնագիրները եւս պիտի վերածվին դրոշմաթուղթի եւ հղվին միլիոնավոր հաստատություններու:

Համաձայն ՄԱԿ-ի ծրագրին, հիշյալ երկու ստեղծագործություններն ալ պիտի գետեղվին իրենց բովանդակությամբ համապատասխան ժամանակակից թանգարաններու մեջ:

Յուրոզ կխոստովանի, թե հայրենիքն իր անցյալով ու ներկայով ընդելուզված է իր էության:

Մուկես Ծիրանի

«Հայ արվեստի» լիագոր ներկայացուցիչ, Բեյրութ

Yuroz



Seeds of Desire



Lovers



Taste my Wine

Toast to Love



Elizabeth Romhild

www.elizabethromhild.com



The Leer, 2003



Angel Kiss, 2002

The Dream, 2004



Հայաստանի արվեստներին Բանգկոկում բնակվող մեր հայրենակից նկարչուհի Էլիզաբեթ Ռոմհիլդի արվեստի մասին առաջին ճեղքվածքն ունի մեր հանդեսը եղավ («Հայ արվեստ», 2002, թիվ 1, էջ 11, 2003, թիվ 2, էջ 12): 2003-ին նա առաջին անգամ Հայաստան եկավ մոր եւ եղբոր՝ Պետրոսի եւ Ռոմիկի հետ: Այս օրի եկավ ամուսնու՝ Պիտերի հետ, մասնակցելու իր հովանավորությամբ լույս տեսած «Հայերը համաբնակչության կինոյում» (հեղինակ՝ Արծվի Բախչինյան) ծավալուն գրքի շնորհանդեսին: Հաջորդ օրի հավանաբար Հայաստան կբերի նաեւ իր երկու զա-

վակներին: Հայ հոր եւ դանիացի մոր զավակ, ազատորեն հայերեն խոսող այս սիրունասես նկարչուհին մի զարմանալի զրավչություն ունի: Նա ասես հոգեկան ջերմություն ու բարիք է ծառագում, իսկ նրա կտավները ծոն են կին էական, որը մերք նուրբ ու փնուռ, մերք ուժեղ, կրֆոս ու սիրական է ...

Էլիզաբեթը թեւեւ ծնվել է Իրանում, ապրել Դանիայում, իսկ այժմ՝ հեռավոր Թայլանդում, բայց Հայաստան գալով առավել զննահետք իր հայրական սկիզբը եւ իր հոգում մի մեծ ճեղ հասկացրեց նախնայաց հայրենիքին ...

Էլիզաբեթի ողիսականը

2004թ. Դանիայում բացված ցուցահանդեսի կատալոգի առաջաբանը

Էլիզաբեթ Ռոմհիլդը դանիահայ է, ծնված 1960 թվականին դանիացի մորից եւ հայ հորից՝ Դանիայի Ֆեդերիկսբերգ քաղաքում: Մանկությունն անց է կացրել Թեհրանում, իրանահայ միջավայրում: Հայաստանը ներկայիս Կովկասի այն անկախ երկիրն, որը հայտնի է իր հարուստ արվեստով եւ մշակույթով:

Էլիզաբեթ Ռոմհիլդի դանիական ժառանգությունը հոգեւոր անկաշկանդությունն է, անկեղծությունը եւ անսպառ ավյունը, որոնք զուգորդված են երկու ազգերի լավագույն հատկանիշների հետ՝ ծեւավորելով նրա ճշմարիտ էությունը:

Նվիրական ուժի եւ հսկայական լարվածության կվինտեսենցիան Էլիզաբեթ Ռոմհիլդին ստիպել է նկարել կենսական ուժի այլաբանություններ: Ինչպես որ նա այդ կատարել է վաղ աշխատանքների մեծ մասում՝ ըստ էության մասնատելով կերպարները, կոտրատելով դրանք մեծամարտի ողիզմի ոճով՝ պայծառության հասնելու նպատակով: Նա երբեմն ստեղծել է բացավառ խորհրդավոր հոգեվիճակ՝ շքեղ գույների տաքից սառը ռիթմիկ անցումներով: Պատկերված առողջ ու ուժեղ ֆիգուրները արտահայտում են մոգական հավասարակշռության նրա ներքին զգացողությունը, եթե նույնիսկ նա երբեմն իր ներքին հրաշեկ կրակը դնում է սառույցի վրա:

Մի կողմից նա ստեղծում է պարզ, կանոնավոր պատկերներ եւ թեմաներ, մյուս կողմից՝ զգուշորեն դիմում է արտահայտիչ, ջերմ ու զվարթ կոնտրաստային գույների՝ որպես իր նվիրական եւ անձնական ջերմ զգացմունքների դրսևորման միջոցի: Նրա կոմպոզիցիաները արտահայտում են կանացիության ողջ զորությունը: Ի տարբերություն դասական կուրիստների՝ նա կերտում է մոմանման ֆիգուրներ, երբեմն ազնվագարն կանացի փաղաքշանքով, այդպիսով ոչնչացնելով դասական եւ երկրաչափական պատկերների սահմանները, բարձրացնելով նկարչությունը հոգեւոր ներգործության այնպիսի աստիճանի, երբ պատկերները սկսում են թրթռալ որպես առկայծող կրակներ: Նա հրավիրում է դիտողին սրբավայր, նրան ներգրավելով իր եւ կտավի միջեւ տեղի ունեցող խորապես անձնական երկխոսության մեջ:

Անկասկած է, որ Էլիզաբեթ Ռոմհիլդի աշխատանքները մոգական ուժի եւ հոգեկան վեհության որոնումներ են: Նա իր գունապնակին ավելացնում է երաժշտական գործիքների հնչեղություն եւ թրթռումություն, որով ֆիզիկա-



Moulin Rouge, 2001-2002

կան եւ նախնական զգայություններից վեր է բարձրացնում իր հոգին՝ հասցնելով ազնվական պարզության՝ միախլուվելով կախարդական, առեղծվածային եւ առասպելական այն աշխարհի հետ, որը վերափոխվում է՝ դառնալու համար նրա նկարների բնութագրական գծերից մեկը:

Գարեգին Տիգրան
արվեստաբան
անգլերենից թարգմանեց
Տաթևիկ Մարգարյանը

Թատերական ստեղծագործություններ



Կարծես ավանդույթ է դառնում, որ երեւանյան աշունը սկսվի թատերական «թուրքով»։ «Արմնոն» եւ «Հայֆեստ» միավորումներն այս տարի անցկացրին իրենց թատերական միջազգային 2-րդ փառատոները՝ երկու շաբաթվա ընթացքում ցուցադրելով շուրջ 80 ներկայացում։

Սեպտեմբերի 14-20-ը մոնոներկայացումների հուլիսն էին։ Պատանի հանդիսատեսի թատրոնի գեղարվեստական ղեկավար եւ «Արմնոնի» փառատոնը նախաձեռնող ու կազմակերպող Հակոբ Ղազանչյանը ջանք չէր խնայել, որպեսզի Հայաստանի 12 եւ արտասահմանի շուրջ 30 արտիստները ստեղծագործական պայմաններ ունենան եւ առավելագույնս երեւակեն իրենց տաղանդը։

Դրան նպաստում էր նաեւ հանդիսատեսի ջերմ վերաբերմունքը, մասնավորապես մոնոներկայացումը մեզանում տարիների կենսագրություն չունի։ Ասվածի ապացույցը, թերեւս, Արտաշատի պետ-թատրոնի օրինակն էր, որը «Աշուն արեւ» բեմադրությունից «գտնելով» Աղունի կերպարը՝ Անահիտ Բաղդասարյանի կատարմամբ ներկայացրեց «Արմնոնի» իսկ մի քանի օր անց, «Հայֆեստի» փառատոնում բեմադրությունը ներկայացրեց «անքաշ» մյուս գործող անձանցով։

Սակայն, ինչպես ասում են, ճաշակին ընկեր չկա, մասնավորապես «Արմնոնի» պարագայում։ Դրանում համոզվեցին եւ թատերագետները, եւ թատերասերները՝ դիտելով հետաքրքիր եւ բարձրարվեստ այնպիսի ներկայացումներ, ինչպիսիք Զիաի Սոկոլովիչի («Արջը», Սլովենիա), Ալեքսեյ Վերտինսկու («Կապույտ ավտոմեքենան», Ուկրաինա), Նոգոմի Սատոմի («Ո՛վ եմ ես», Ճապոնիա), Հովհաննես Բաբայանյանի («Կոնտրաբաս», Հայաստան) եւ այլոց կատարումներն էին։ Նշվածները, ինչպես նաեւ Լալա Մնացականյանն ու Սերգեյ Դանիելյանը (Հայաստան), Ռաշի Բուհին (Հնդկաստան), Իրինա Կիչեսկայան (Ուկրաինա), Աննա Նաումովան (Ռուսաստան) փառատոնի համեմատելի կողմից գնահատվեցին ըստ արժանվույժ՝ ստանալով համապատասխան կարգերի հավաստագրեր։ Իրանցի դերասանուհի Ֆարիթա Խաթեմին «Ժաննա դ'Արկը խարույկների մեջ» ներկայացման համար արժանացավ նաեւ ՀԹԳՄ «Արտավազ» մրցանակին։

Փառատոնը, այն էլ՝ թատերական, առանց բանասերների չի լինում։ Այս դեպքում, թվում է, դրանք անհիմն չէին։ Նախ տարակուսանք առաջացրեց այն, որ ՄՈՆՈ՝ մեկ

դերասանի թատերական փառատոնին ներկայացվեց մի բեմադրություն, որտեղ հանդես էին գալիս... երեք դերակատարներ։ Կարինե Խոդիկյանի «Երկրորդ կտակ» պիեսի բեմադրության մեջ, որն իրականացրել էր Հակոբ Ղազանչյանը, երկու քույրերի կերպարները մարմնավորել էին անգլիացի եւ գերմանացի դերասանուհիներ Էլիզաբեթ Հեսսը եւ Բեատե Էլեբսը։ Ի լրումն նրանց, երեւանից «վարձել» էին եւս մեկ երիտասարդ դերասանի, որի կերպարը, ճիշտ է տեքստ չունեւ, բայց բեմադրության համատեքստում արժեւորված էր եւ ներկայանալի։ Ի պատիվ բեմադրիչ Հ. Ղազանչյանի, պետք է նշել, որ բեմադրությունը բարձրարվեստ էր, ռեժիսորական հետաքրքիր լուծումներով։ Միաժամանակ այն փաստը, որ դերասանուհիներից յուրաքանչյուրը դերը կատարում էր իր մայրենի լեզվով, մեզանում գոնե նորույթ էր եւ հետաքրքիր... Սակայն ի՞նչ կապ ուներ այդ ներկայացումը մեկ դերասանի թատրոնի հետ...

Հեղինակներն արդարանում էին, թե դերակատարները բեմի վրա միաժամանակ չեն լինում։ Բայց այդպես կարելի է նաեւ «Մակբեթ» բեմադրել բեմի վրա՝ չհանդիպեցնելով բոլոր 28 գործող անձանց... Մոնոյի հայկական այս տարբերակը թերեւս դիտարկելով համաշխարհային թատերական «նվաճումներից» մեկը, բեմադրությունն արժանացրին «Գրան պրի» գլխավոր մրցանակին։ Նկատենք, սակայն, որ մրցանակը փաստորեն «ինքնաշնորհվեց» ի դեմս փառատոնի նախաձեռնող-կազմակերպիչ բեմադրիչի եւ մշակույթի փոխնախարար դրամատուրգի...

Բոլոր դեպքերում, իր թեր եւ դեմ կողմերով հանդերձ, «Արմնոն» նոր երեւույթ է մեր թատերական կյանքում եւ, համոզված ենք, այդ ժամանակ իր արժանատիներն ու ընդունելները կունենա մեզանում։

Հոկտեմբերի 2-9-ը մեկնարկեց «Հայֆեստ» փառատոնը, որի նախագահ Արթուր Դուկասյանն ի սկզբանե հայտարարեց, որ փառատոնը մրցութային չէ, իրենց նպատակը ավելի ժողովրդավարական բնույթ ունի՝ անցկացնել թատերական տոն։ Այդպես էլ եղավ։ Մեկ շաբաթում թատերասերները դիտեցին շուրջ 50 ներկայացում։ «Հայֆեստի» «աշխարհագրությունը» նույնպես ընդգրկում էր։ Թատերախմբեր էին ժամանել Շվեյցարիայից, Ֆրանսիայից, Իսրայելից, Իսպանիայից, Կորեայից, Վրաստանից, Ղազախստանից, Շվեյցարիայից, Չեխիայից, Ռուսաստանից, Ուկրաինայից, հանդես եկան նաեւ երեւանի, Ստեփանակերտի, Կապանի ու Արտաշատի թատրոնները։ Փառատոնը կազմակերպել էին Կովկասյան հիմնադրամը, «ALFAEL» պրոդյուսերական կենտրոնը եւ Հայ դերասանների միությունը։ Այն անց էր կացվում ՀՀ վարչապետի, պաշտպանության նախարարի եւ երեւանի քաղաքապետի աջակցությամբ։

Այս փառատոնի բարձրարվեստ բեմադրությունների թվում հիշատակելի են Լոնդոնի արվեստի համալսարանի «Շինելը», Գերմանիայի «Անտազոն» թատրոնի բացօթյա «Թայմ աութը», Կորեայի «Չո-ին»

Գոլջները

դրամատիկական թատրոնի «Գնացքը», Ղազախստանի «Արտ» եւ «Շոկ» փորձարարական թատրոնի «Back in USSR», Շվեյցարիայի Մարկուս Ցոհներ թատերական ընկերության «Հա Համլետ» իմպրովիզացիան եւ այլն։ Այն, որ նախորդ փառատոնում երեւանի երիտասարդական, այս անգամ Ստեփանակերտի թատրոնները մասնակցում էին Սամվել Խալաթյանի «40 օր համբառնալուց առաջ» պիեսի բեմադրություններով եւ, ինչպես ինքը՝ հեղինակը կատակեց՝ «քառասունքից դուրս չենք գալիս», ընդունվեց ըստ հարկի՝ հումորով, սակայն ֆրանսիացիների «Մայրիկի հուղարկավորությունը» բացօթյա ներկայացումը դժվարամատչելի էր շատերի համար եւ տրագիկական ընկալվեց որպես ծաղր՝ հանդիսատեսին։ «Կոկյուսեթի» ներկայացումն ուղեկցվում էր գոռում-գոչումներով, հանդիսատեսի վրա ջուր ցողելով եւ «համեմված» էր նաեւ բաց հետույքների ցուցադրմամբ... Հյուրընկալները, ստիպված, ըմբռնումով վերաբերվեցին «ցուցանքին»՝ աղաչելով Աստծուն, որ հաջորդ փառատոնին հանկարծ չմասնակցեն աֆրիկյան այն ցեղի ներկայացուցիչները, որոնք, ասում են, որպես հարգանքի նշան, թքում են դիմացինի վրա։

Իսկ, ընդհանուր առմամբ, «Հայֆեստի» երկրորդ փառատոնը կայացավ բարձր մակարդակով, բոլոր մասնակիցներին թողնելով նոր հուշեր ու հավաստագրեր։

«Արմնոնի» եւ «Հայֆեստի» փառատոներով երեւանյան աշունն էլ ավելի գունեղ դարձավ։

ԼԵՆԱ ՄՐԱՊՅԱՆ

Հայկական մշակութային հիմնարկություն

ԱՄՆ Բոստոն քաղաքում 1945 թվականին ստեղծվել է «Հայկական մշակութային հիմնարկությունը»՝ Վահան Թուփալյանի (1886-1983) միջոցներով։ Վերջինս թեւ պարզ մասնագիտության ու համեստ կենցաղի տեր էր, սակայն հայրենասեր, զրասեր ու մշակութանվեր մարդ լինելով, իր ողջ կարողությունը դրեց ի նպաստ հայ հանրությանը։

Հայկական մշակութային հիմնարկությունն այսօր իսկ գործունե կառույց է, ապահովված է հարմարավետ շենքով, ունի հարուստ գրադարան, զբաղվում է հրատարակչական եւ մշակութային ամենաբազմազան գործունեությամբ։ Հիմնարկությունը սերտ կապեր է պահպանում հայկական եւ ամերիկյան կազմակերպությունների հետ, հանդես գալիս հայրենասնամաստ ծրագրերով ու նախաձեռնություններով։ Ներկայիս տնօրենը՝ Արա Ղազարյանը, բոստոնահայության շրջանում քաջածանոթ անուն է, Հարվարդում դասավանդած եւ իր բազմաթիվ աշխատություններով հայտնի մի անձնավորություն։ Արա Ղազարյանը «Հայ արվեստի» լիազոր ներկայացուցիչն է Բոստոնում։

Հայկական մշակութային հիմնարկության պատմության եւ գործունեության մասին համաժամանորեն կարելի է ծանոթանալ համապատասխան ինտերնետային կայքում՝ www.armenianculturalfoundation.org

Բոստոնում



HYE ART. Ավստրալիա

Հեռավոր Ավստրալիայում՝ շուրջ 4000 հայություն ունեցող Մելբուռն քաղաքում արդեն երրորդ տարին գործում է «ՀԱՅ ԱՐՏ» մշակութային կենտրոնը։ Հայ արվեստի ու մշակույթի քարոզչությունն ու պահպանությունը որպես հավատարմ ունեցող այս կազմակերպությունը զբաղվում է մանուկների գեղագիտական դաստիարակությամբ, ցուցահանդեսների ու այլ մշակութային միջոցառումների կազմակերպմամբ։ 2002 թ. նոյեմբերին կենտրոնի կազմակերպած ցուցահանդեսն է այցելել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը։ Այս տարվա նոյեմբերի 14-ին կենտրոնը կազմակերպել է հերթական խոշոր ցուցահանդեսը՝ ՀԲԸՄ տեղական մարմնի եւ այլ կազմակերպությունների աջակցությամբ։ Կենտրոնն ունի տեղեկաշատ ինտերնետային կայք (www.hyeart.org), ուր հանգամանակից տվյալներ կան ինչպես նրա գործունեության, այնպես էլ Ավստրալիայում ապրող մի շարք հայ նկարիչների վերաբերյալ։

«ՀԱՅ ԱՐՏ» կենտրոնի գործադիր տնօրեն, նկարչուհի Բեատրիս Մանուկյանը «Հայ արվեստ» հանդեսի լիազոր ներկայացուցիչն է Մելբուռնում։

Բեատրիս Մանուկյան, Ինքնադիմանկար



Հողն է նյութը մարդու շինվածքի

ցուցահանդես



Մարկոս (Մարկո)
Գրիգորյանը ծնվել է
Ռուսաստանում 1925 թ.,
հինգ տարեկանից ապրել
Իրանում, ուսանել Զոռնի
Գեղարվեստի
ակադեմիայում, բազմաթիվ
անհասական
ցուցահանդեսներ ունեցել
Իրանում, ԱՄՆ-ում,
Գերմանիայում եւ այլուր,
1993-ին հիմնել Միջին
Արեւելքի արվեստի
թանգարան Երեւանում:
Մեղսեմբերին կայացավ
նրա անհասական
ցուցահանդեսը Հայաստանի
ազգային
դասկերասահում:



Մարկոս Գրիգորյանի հավաքածուն Ազգային պատկերասրահի ավանդական ցուցահանդեսների շարքը համալրելով շահեկանորեն առանձնացավ: Այն խիստ հետաքրքրական, բազմաթիվ է ընդգրկում նյութ էր տրամադրում հանդիսատեսին: Ցուցահանդեսին ներկայացված էին նրա գործարվեստի նմուշները, գեղանկարչական, գծանկարչական աշխատանքները եւ հողարվեստը:

Մարկոս Գրիգորյանի գործերը հայ գործարվեստի մեջ յուրօրինակ խորքային դրսևորում են: Ելնելով հայկական գորգի խիստ ոճավորված զարդանախշից, այն համադրելով ժայռապատկերային գծային սկզբի հետ, գեղանկարչական նուրբ ճաշակով եւ մշակութային խորը իմացությամբ հեղինակն ստեղծել է գեղանկարչական եւ ազգային արժեք ունեցող գործեր:

Արվեստագետը հավասարապես ինքնավստահ եւ ուժեղ է բոլոր ուղղությունների մեջ: Թերեւս գեղանկարչությունը ավելի խոսում է նրա ներաշխարհը բացահայտելու համար: Ճկուն եւ զրազետ հորինվածքային, գծագրային լուծումներով բազմազան թեմատիկ աշխատանքները գրավում են իրենց մոնումենտալությամբ, շատ հաճախ պատկերային անսպասելի կառուցվածքով՝ ճիշտ գտնված ձևի մեջ: Իսկ եթե ձեռք ենթարկված է դեֆորմացիայի, այն ավելի քան համոզիչ է եւ կարծես արդեն ենթադրված:

Նրա գեղանկարչությունը հուզում է անկեղծությամբ եւ զգացմունքային շոյալությամբ: Այն ակամա հաղորդակցություն է ցավի, սիրո, տառապանքի, մանկական պարզության եւ անմահացող ուժի հետ:

Հետաքրքիր է Մարկոսի վերաբերմունքը դիմանկարի հանդեպ: Ցուցադրված ամեն մի դիմանկար անհատական կերտվածք էր, ելնելով կերպարի խառնվածքի ու բնավորության ինքնատիպությունից: Մեկը լուծված էր զուտ վրձնահարվածի ազատ քսվածքով ու գունաթերով, մյուսն ավելի դեկորատիվ ու հարթապատկերային, երրորդը ծավալային եւ տարածական մոդելավորմամբ, մեկ ուրիշը՝ դասական դիմանկարչության կոմպոզիցիոն սկզբունքներով:

Նաեւ այս նկարչի համար է Սեզանի խոսքը, թե գեղանկարչին բնորոշ է երկու բան՝ աչք եւ միտք: Մենք կապելացներն եւս մեկը՝ ձեռք. ամենակարող ձեռք, որը վրձնահարելուց զատ կզգա իր ափի մեջ հողի մոգական խորհուրդը:

Արվեստագետը, որ հողարվեստը ձե-

ւավորող առաջին արվեստագետներից մեկն էր, այս ոլորտում արտահայտվեց իր մարդկային բնույթի եւ ստեղծագործական մտքի ողջ ուժգնությամբ: Դարի կոսմիկական ընկալումները եթե Մալեխիյն հանգեցրեցին սուպրեմատիզմի, ապա Մարկոս Գրիգորյանը հայտնաբերեց եւ կայացրեց հողարվեստը: Երկուսին էլ բնորոշ էր Գերեւի ներքին հայացքը տիեզերական բարձունքից:

Ասված է՝ «Հող էինք եւ հող կդառնանք»: Ինչո՞ւ հողը: Գուցե այն պատճառով, որ մարդու նյութի շինվածքի հենքը հենց հողն էր, կամ էլ իր արմատներին մղվելու միտումով:

Եթե Մարկոս Գրիգորյանի գեղանկարչությունը խոստովանում է մարդկային զգայական որակներ, հողարվեստը բացում է ինտելեկտուալ խոհական շերտեր:



Այստեղ ինքնարտահայտման համար արվեստագետին մասամբ նախընտրելի է դառնում սիմվոլիզմի լեզուն:

Սահմանափակ նյութով նա մտքի թռիչքով ստեղծում է անսահմանափակ տարածք, յուրատիպ պոետիկայով եւ գեղագիտությամբ: Այս ստեղծագործական տարածքը հնարավորություն է տալիս նրան լուծելու մի շարք գծանկարչական, գեղանկարչական, քանդակածավալային ու նաեւ փիլիսոփայական խնդիրներ:

Իսկ այն ճառագումը, որ հորդում է ստեղծագործ այս մարդու արվեստից, հանդիսատեսին մղում է վերաարժեքներով եւ վերափնաստավորելու բացահայտ ճշմարտություններ:

Գայանե ԵՂՎԱԶՐԱՆ
Հայաստանի ազգային պատկերասրահի
գիտաշխատող

Հուլիսի 20-ից օգոստոսի 1-ը Երեւանի Նկարչի սան առաջին հարկը զբաղեցրել էին Ջավախքի նկարչներն ու ֆանդակագործները («Տերյան» մշակութային կենտրոնը հրահանգել էր ցուցահանդեսի կազմակերպությունը):

Ջավախքին իր համադրող հացն արդեն ֆանի տարի վաստակում է արյուն ֆրիմով եւ արդեն ֆանի տարի էլեկտրական հոսանքից համարյա զրկված է: Այդ դաժան լայնամեծ ղիմացել են մի ֆանի նկարիչ՝ Կառլեն Կարապետյանը, Վարդ Դարսլյանը, Սերգեյ Ունանյանը, Մնացական Դալաչյանը, Համլետ Արոյանը եւ կարգին էրզրումցու արժանապատվություն ունեցող մի ֆանի ջավախքիներ:

Ջավախքի գույները

Ամալյա Խրիմյան, Փողոց Ախալքալախում



Մանե Դավիթովա, Կոմպոզիցիա



Մարկոս Գրիգորյան, Հայելու առջև

Ցուցահանդեսը կառող էր լինել խեղճ ու անգույն, ինչպես Ջավախքի մասին տեղեկացնող թերթերի լուրերը, ինչպես «աշխատող, երազող, տքնող ու երգող» ջավախքցուն կարեկցող երեւանյան ճառերը: Բայց, բարեբախտաբար, այդպես չէր, վառվռում գույների, գրավիչ ձևերի ցուցահանդես էր: Միայն Բաղդասար Մարգարյանի, Հովհաննես Խիթրայանի քանդակները բավական էին, որպեսզի այցելուները տեսնեին, թե ինչպիսի հետաքրքիր քանդակագործական ծավալների, մանավանդ քանդակային արտահայտչականության կարելի է հասնել, եթե մարդը սկիզբ է առնում այդ սքանչելի լեռնաշխարհից: Տպավորիչ էին Հրանտ Կարախանյանի, Ալբերտ Գոգորյանի, Անի Այվազյանի, Ամալյա Խրիմյանի, Մանե Դավիթովայի ստեղծագործությունները:

Ս. Միքայելյան

Իսկական աւանային ցուցահանդես



Հոկտեմբերի 12-ին Հովհ. Թումանյանի տուն թանգարանում գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը կազմակերպել էր հերթական անհատական ցուցահանդեսը: Նկարչի գունապնակը, որը Հայաստանի բնության բազմերանգության յուրօրինակ հայելին է, այս անգամ եւս հիացրեց արվեստասեր հանրությանը: «Իսկական աշնանային ցուցահանդես», - վստահաբար, իրարից անկախ, այս խոսքերն ասացին ներկաներից շատերը:

Ռուբեն Աղալյանի ցուցահանդեսը



Հոկտեմբերի 26-ին Նկարչի տանը բացվեց ՀՀ ժողովրդական նկարիչ Ռուբեն Աղալյանի անհատական ցուցահանդեսը: Ներկաներն ակամա տես դարձան մի ինքնատիպ պատկերահանդեսի, համոզվելով, որ 75-ամյա վարպետը լի է ստեղծագործական ներուժով եւ չնայած մշակված ոճին ու ինքնատիպ ձեռագրին, շարունակում է որոնումները կերպարվեստի անեզր օվկիանոսում:

ցուցահանդես

armenian art • 3-4/2004 (9-10)

23

22

հայ արվեստ • 3-4/2004 (9-10)

Օփերայի առաջին երգչուհին Սուրիոյ մէջ

«Երգը արուեստի այն առանձնապատկերն է, որ չի կարող վերադարձնուիլ ո՛րևէ յուրերում, ո՛րևէ արժանատիք ունենալու լուսանկարներում: Երգը մէտ է ամրի հնչիւնների այն շարժում աշխարհում, որ եթէ այսօր չորսացիր դրոշմելու համար եկողների յիշողութեան մէջ, կ'անցնի անյետադարձ եւ ոչ մի ուսացած աստուծոյ չի փրկի մեզի կորուսներից»:

Յովհաննէս Չէփիճեան

Դասական երաժշտութեան հանրա-
յայտ մեկնաբան, միջազգային մրցոյ-
թի ոսկե մետալակիր Արաքս Չէփ-
ճեան-Պիլեմճեան: Ծնած է Հայկա: Արուեստասէր ըն-
տանիքէ սերած ու ժառանգած իր ծնողներէն երգա-
րուեստի սէրը: Պատանութեան տարիներուն աշա-
կերտած է Ամարատ Յղութեան հայ մայրապետներու
վարժարանը, ուր իր ունակութիւնը ցուցաբերած է
դպրոցական հանդիսութիւններուն եւ իր ուսուցչու-

փրոֆ. Տաթևիկ Սազանդարեանը. «Արաքսը օժտուած է երաժշ-
տական բարձր կուլտուրայով, ծայնային մեծ տիպապագով, բե-
մական եւ երգարուեստի խորունկ գիտելիքներով...»:

Ուսման ընթացքը աւարտելէ ետք, «Լիբիքո-տրամաթիկ»
սօբրանօ Արաքս Չէփճեան, 1982թ. կը վերադառնայ իր ծննդա-
վայրը, Հայկա: 3 մարտ 1985-ին Հայկաի մէջ կ'ունենայ իր առաջին
ելոյթը, որին Տաթևիկ Սազանդարեանը, որը ելոյթէն ետք հպար-
տութեամբ կը նշէ, թէ ինք վստահութեամբ կը փոխանցէ մանկավ-
արժական դժուարագոյն ասպարէզը Ա. Չէփճեանին, Սուրիոյ մէջ:

Արաքս, Բերիոյ թեմի առաջնորդարանի եւ զանազան հայկա-
կան մշակութային միութիւններու կազմակերպութեամբ մենահա-
մերգներով հանդէս կու գայ Հայկաի եւ Դամասկոսի մէջ:

Արաքս Չէփճեան կը հանդիսանայ Սուրիոյ առաջին օփերա-
յի երգչուհին: Այս մասին կը վկայէ սուրիական «Թշրին» թերթը



1985թ. «Արաքս, Սուրիոյ առաջին օփերայի երգչու-
հին է, ինչպէս նաեւ դասական երաժշտութեան դպրո-
ցի հիմնադիրը»: 1986-ին Հայաստանեայց առաքելա-
կան եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու վարիչ տն-
օրէնութեան կազմակերպութեամբ սրբազան համերգ
մը կ'ունենայ նախ՝ Հայկաի, ապա՝ Պէյրութի Յակոբ
Տէր-Մելքոնեան թատերասրահին մէջ:

Առանձին ելոյթներու կողքին Արաքս օժտուած
ըլլալով նաեւ մանկավարժական նրբագոյն յատկու-
թիւններով, կը նուիրուի երաժշտական-մանկավար-
ժական ասպարէզին: 1985թ. Արաքս կը հիմնէ նաեւ իր
«Վոքալ դպրոց»-ը, կ'ունենայ բազմաթիւ հետեւորդ-
ներ, որոնցմէ մեծ մասը արդէն ծանօթ երգչուհիներ են
Սուրիոյ, Իտալիոյ եւ Հոլանտայի մէջ:

Արաքս մեծ հպարտութեամբ կը նշէ իր առաջին
հունձքի սաներու անունները, որոնք այսօր Եւրոպա-
յի միջազգային «գոնգոլներուն» իրենց մասնակցու-
թիւնը կը բերեն: Յիշենք Սուզան Հատատ (Հոլան-
տա), Ֆրանսուա Բազէկ Պիթար (Իտալիա), Դալար
Տէկիմենճեան (Հոլանտա): Այս ինքնին ապացոյց մըն
է, որ Չէփճեան ո՛չ միայն հանրածանօթ է հայ այլեւ
արաբ հասարակութեան: Արաքս անդամ կը դառնայ
Սուրիոյ արուեստագէտներու շրջանակին:

15 ապրիլ 1991թ., «Սուրիոյ արուեստագէտնե-
րու միութեան» առաջադրանքով, իբր Սուրիոյ առա-
ջին օփերայի երգչուհի, Արաքս կը մեկնի Կիւսիսային
Քորիա, մասնակցելու ամենամեայ երգի եւ արուեստի
միջազգային փառատօնին, որպէս Սուրիոյ ներկայա-
ցուցիչ: Ան ելոյթ կ'ունենայ հայկական եւ օտար դա-
սական երաժշտական կտորներով: Սոյն ելոյթին, որ-
պէս պարտադիր կտոր, մեկնաբան Չէփճեանը քորի-
ական երգ մը կը հրամցնէ հանդիսատեսներուն: Կ'ար-
ժանանայ առաջին մրցանակին եւ համապատաս-
խան վկայագիրի: Կը պարգևատրուի ոսկէ մետալով,
պատիւ բերելով սուրիական հայրենիքին, Սուրիոյ
արուեստագէտներու միութեան եւ արաբ ու հայ ժողո-
վորդին:

2000թ. մայիսին Գահիրէի ՀԳՄ-ի հրաւերով
Աղեքսանդրիոյ «Տիգրան Երկաթ» Հայ մշակութային
միութեան մէջ հանդէս կու գայ մենահամերգով:
2002թ., Թեքէանի հրաւերով, ելոյթներ կ'ունենայ Լի-
բանանի եւ Հայկաի մէջ: Ան կը հրաւիրուի Դամասկո-
սի երաժշտանոցի «Վոքալ» ծայնային դասընթացքնե-
րու՝ «master class»-ի:

Ըստ Արաքսի «Մշակոյթը ազգի մը քաղաքակր-
թութեան պատկերն է, անհրաժեշտ է որ ազգովին
բարձր գնահատենք մեր երգարուեստը եւ զայն
բժականորէն փոխանցենք սերունդէ սերունդ»: Արա-
քս 25 յուլիս 2004-ին Դամասկոսի օփերայի նորակա-
ռոյց սրահէն ներս հանդիպում կ'ունենայ Ռիթարտօ
Տի Սուրիի կնոջ՝ Քրիստինա Տի Սուրիի հետ: Յաջող
հանդիպումն էտք Արաքս կը հրաւիրուի Միլանոյի
երաժշտանոցէն ներս, որպէս մասնագէտ ուսուցիչ,
ծայնամարզութեան դասատու: Ըստ Արաքսի, մեկնու-
մի թուականը նախատեսուած է հոկտեմբերէն ետք
եւ որ կեցութիւնը նախատեսուած է 2-6 ամիս:

Բարի երթ կը մաղթենք Արաքսին, եւ նոր նուա-
ճումներ արուեստի բնագաւառէն ներս:

Անի ՖԻՇԵԼՎԵՍԸ

«Հայ արուեստի» լիագոր ներկայացուցիչ, Հայկա

«Մէկ ազգ մէկ մշակոյթ» փառատօնի ԵՐԶԱՆԱԿՈՒՄ ՀԱ-
ՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱԽՈՒՄ ԲԱԶՈՒՆԵՐ ՀԱՅԷ-
ՊՈՒՄ ԲՆԱԿՈՒՂՈՂ ՀԱՅ ԱՐՈՒՆՏԱԳԵՏՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐԱՎ ԳՈՒ-
ԳԱԽԱՆԴԷՍ, ՈՐԻՆ ԿՄԱՍՆԱԿՅԵԺԻՆ ՀՐԱԶԳԱՆ ԹՈՒՄԱՃԵԱՆ,
ԱՐՏՈ ՀԱՄԲԱՐՈՒՄԵԱՆ, ԶԱՆԷՆ ՊԱՐՏԱԳԺԵԱՆ, ՎԱՐԴԱՅՍ
ՊԱՐՏՈՒՄԵԱՆ, ՎԻԳԷՆ ՇԱՐՈՅԵԱՆ, ՎԻԺ ԶԱՍՈՒՆԻ:



Հրազդան Թոմմաճեան
ծն. Գիւմրի, 1961

1980-ին կ'աւարտէ Երեւա-
նի Փանոս Թերլեմէզեանի
անուան գեղարուեստի ու-
սումնարանը:

1985-ին կ'աւարտէ Երեւա-
նի Խ. Աբովեանի անուան
մանկավարժական ինս-
տիտուտի նկարչագծագ-
րական բաժինը:

1988-1990 կ'աշխատի Գիւմրիի «Առասպել» դպրաբարձր-
նին մէջ որպէս գլխաւոր նկարիչ:

1985-էն սկսեալ կ'ունենայ անհատական ապա հաւաքական
ցուցահանդէսներ:

1988-ին կ'անդամակցի Հայաստանի նկարիչներու միու-
թեան:

Թոմմաճեանի պատկերած ծառերը, տունները, ծովերը,
աթոռները լոկ բնութեան տարրեր չեն, այդ ամենը, որ պարու-
րուած են լուրջութեամբ, կամ անշունչ լուրջութեամբ, կը ներկայաց-
նեն գեղանկարչին ժայռի մը նման տոկուն, ծովու մը չափ
հուժկու, կոճղի մը պէս հաստատ, կենսաբան կառոյցի իր հա-
ւատքը, ապրելու իր ոյժը, օրուան պայմաններուն դէմ մաքա-
ռելու իր լուռ ցասումը:

Թոմմաճեանի բնանկարները իր՝ նկարչի նեքաշխարհի
արժագանգն են, ակոսները սեղմուած, թախծով ծեփուած,
լուռ, լուռ, լուռ...

Թոմմաճեանի գունային վարպետ անցումները եւ վրձինի
յաջող հպումները կտաւին կուտան կուտ եւ հարազատ յօրի-
նուածք:

Ոչ ոք իր ջանասիրութեամբ կը փորձէ նկարել իր ապրած
բնութիւնը:

Արսօ
Համբարձումեան
ծն. Հայկա, 1959

1977-ին կ'աւարտէ Զարէն
Եփիէ Ազգային ճեմարա-
նը:

1980-ին կ'աւարտէ Հայկաի
պետական համալսա-
րանի տնտեսագիտու-
թեան ուսումնարանը:

1978-էն սկսեալ կ'աշխա-
տի ծանուցումներու, որմ-

նագոյներու եւ գիրքերու զարդանկարներու ծեւաւորմամբ,
ինչպէս նաեւ կը ծեւաւորէ թատերգութիւններու բեմադրա-
բանկերը:

1985-ին օժանդակել է «Արշիլ Կորքի» ուսումնարանի հիմ-
նադրման, ուր մինչեւ 2000 թ. վարել է վարչական պաշտօն-
ներ:

1986-էն սկսեալ կը մասնակցի խմբային եւ հաւաքական ցու-
ցահանդէսներու Սիրիայում, Պէյրութում եւ Երեւանում:

Համբարձումեանի տարերքը գոյնն է, գոյներու սուր ըն-
թումը: >26

Հայկաի հայ նկարիչներու հրապարակաւ խումբ մը

25 > Կտալո թեև տրտուն տրամադրությամբ չստեղծեր, բայց ունի յուզական երանգ ու քնարական խորք, որ կը թրթռացն ու կ'ազնւացնէ լարերը:

Համբարձումեանի ոսպնեակը կը կազմեն սերն ու սեռը եւ զանոնք միացնող եւ անջատող տարրերը:

Ածուխի, բասթէլի եւ իւղաներկի ճարտար գործածութիւնը ու գունային հնչեղ մակերեսը անխզելի կապ մը կը ստեղծեն կտաւին ու ակնդիրին միջեւ եւ ստիպել կու տան խորհրդածելու... բայց, գեղանկարիչին ներաշխարհը կը մնայ թաքուն վրձինի իր հպումներուն տակ, իսկ ակնդիրը կը թափառի կտաւին շուրջ ու կը փորձէ խորագրել պատմաբանը:

Նկարիչներու հրաշալի խումբ մը



**Զաւէն
Պարսազեան**
ծն. 1948, Հալէթ

1970-ին կ'աւարտէ Քարէն Եփփէ Ազգային ճեմարանը:
1979-ին կ'աւարտէ Հալէպի Պետական համալսարանի ճարտարագիտութեան բաժինը:
1974-էն սկսեալ կ'ունենայ անհատական, ապա հաւաքական ու խմբային ցուցահանդէսներ՝ Սիրիա, Պելյուք, Երեւան:

1974-էն սկսեալ պարբերաբար կը դասաւանդէ Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանի մէջ որպէս արուեստի ուսուցիչ:

Պարտազեանի սուրիաիայ իրականութեան գեղանկարային լեզուն մէջ արդիականութիւնը ներածողներէն մէկը եղաւ, զոյնին տուաւ ծաւալ եւ հնչողական ոյժ, իսկ արժէքին մոր ընթերցում:

Կտաւին իր երանգաշարերը կը ստեղծեն հանդարտ մթնոլորտ բայց յուզառատ հորիզոն:

Գեղանկարիչին բոլոր գործերը կարելի է միաւորել «Մարդու աշխարհը» խորագրին տակ, ուր կան ժամանակակից մարդու տագնապները, մտահոգութիւնները, հոգեկան փլուզումներն ու բարդոյթները եւ կայ անոնցմէ ձեռքազատուելու փորձը, յոյսը:

Պարտազեան ունի ինքնակատար վրձին ու ներքին տեսողութիւն, կեանքը ըմբռնելու իրաւաստի ու դատողութիւն, անոր համար իր կտաւները իր իսկ էութիւնն են:



**Վարդէս
Պարսումեան**
ծն. Հալէթ, 1967

1985-ին կ'աւարտէ Քարէն Եփփէ Ազգային ճեմարանը:
1992-ին կ'աւարտէ Երեւանի գեղարուեստաքանդակային ինստիտուտի քանդակագործութեան բաժինը:
1986-էն սկսեալ կը մասնակցի խմբային եւ հաւաքական ցուցահանդէսներու:

1980-ական թուականներէն սկսեալ կը դասաւանդէ Համազգայինի Արշիլ Կորբի կերպարուեստի ուսումնարանին մէջ որպէս արուեստի ուսուցիչ:

1997-ին կ'անդամակցի Սուրիոյ Արուեստագէտներու միութեան: Պարսումեան ունի քանդակելու մեծ ընդունակութիւն, ձեւի ու ծաւալի մշակուած զգացողութիւն:

Անոր քանդակները կ'առանձնանան նրբագեղութեամբ, ներդաշնակ կատարելութեամբ եւ արտայայտիչ կազմութեամբ:

Պարսումեանի քանդակելու ենթախորը (էակը, պահը, տեղը) իրաւաստի եւ ինքնատիպ են, շարժուն ու ներագոյող, խօսուն նոյնիսկ ծաղկող:

Քանդակագործ Պարսումեան գիտէ երբ եւ ինչպէս պաղ քարին տալ տաք շունչ, անսիրտ գաճի՜ն ապրում:

Ստեղծագործելու իր եղանակը ձեւաւորուած է՝ մարդը եւ սխալը տեսնելու, դիտելու եւ ծաղկելու իր ծիրքէն, տաղանդէն:



Վիգէն Շարոյեան
ծն. Հալէթ, 1959

Մինչեւ 1978 կը յաճախէ Քարէն Եփփէ Ազգային ճեմարանը:

1980-1985 կը պաշտօնավարէ Հալէպի Միջօրեայ վարժարանին մէջ որպէս արուեստի ուսուցիչ:

1986-էն սկսեալ կը մասնակցի հաւաքական ցուցահանդէսներու՝ Սիրիա, Պելյուք, Երեւան:

Շարոյեանի բանաստեղծական բնակարարաբար կը դրսեւորէ նկարիչին մեծ սերը բնութեան հանդէպ:

Շարոյեանի մօտ բնութիւնը երազային է ու անկոխ, դաշտերը թաւային, երկինքը թափանցիկ, տունները սիրայորդ...

Թեւեւ նկարիչը կ'ապրի չոր քաղաքի մը մէջ, բայց կը զգայ բնութեան տարերքը, կը ծծէ անոր հիւքը, ու կ'օրօրուի անոր գիրկին մէջ, ստեղծելով իրաւաստի գոյներու երանգաւորում եւ ուրոյն երաժշտականութիւն:

Փոքրածաւալ իր գծանկարները մեծ են իր բնութապաշտութեամբ:



Վրէժ Զատունի
ծն. Հալէթ, 1971

1987-ին կ'աւարտէ Լազար Նաճարեան ճեմարանի միջնակարգը:

1993-ին կ'աւարտէ Սարեան ակադեմիայի դասընթացը:

1989-էն սկսեալ կը մասնակցի հաւաքական ապա անհատական ցուցահանդէսներու:

1999-ին կ'անդամակցի Սուրիոյ Արուեստագէտներու միութեան:

Գաղութի առօրեային եւ մշակութային կեանքի թոհուրոհին մէջ կորսուած երգիծանկարչական արուեստը կը վերածնի Զատունիով:

Զատունի ունի զանազան խորքերով երգիծանկարներ՝ քաղաքական, ընկերային, գեղարուեստական: Իր գործերուն մէջ, տեղ տուած է նաեւ դիմանկարներուն, մեծ մասամբ գաղութի եւ տեղական միջավայրին ծանօթ դէմքերու, քաղաքական մեծ անձնաւորութիւններու եւայլն:

Զատունի ունի սուր դատողութիւն: Իր գիծերը պարզ են եւ գոյները հաճելի, տեղ-տեղ կ'իմայ չափազանցութիւններու մէջ բայց կը յաջողի վեր հանել ծիծաղելի եւ ծաղկելի կողմերը, ցաւալի եւ ողբերգական կեցուածքները:

Հալէպի եւ իր տեսակին մէջ Զատունի կը մնայ առանձին: Այժմ յաջողութեամբ կաշխատի Հայաստանի մէջ:

Վարդէս Պարսումեան

Մանրաքանդակներ



Վրէժ Զատունի



Նոյ



Նա



Հրազդան Թոփաճեան

Seslet

Բնակարներ



Զաւէն Պարսազճեան

Seslet


Հորինվածքներ



Վիգէն Շարոյեան

Seslet

Բնութիւն



Արսօ Համբարձումեան

Seslet

Հորինվածքներ



Rosevart



Ռոզվարդի ցուցահանդեսի բացումը Ազգային պատկերասրահում Հայաստանի եւ Արցախի մշակույթի նախարարների մասնակցությամբ, օգոստոս 2004թ.



Աշխարհի ստեղծումը, 2001



Կնունք



Սիրո ծաղիկներ



Ռոզվարդ

1924 թ. ծնած է Հալեպ
Ինը տարեկանին կը սկսի գեղանկարչութեան դասե-
րու հետեւիլ
1972-1973 Պեյրուքի ամերիկեան համալսարանի
գեղանկարչութեան դասընթացներ, ուսուցիչ ունենալով
Gordon Olson
1974-ին, 49 տարեկանին կ'արձանագրուի Academie
Libanaise des Beaux-Arts, ALBA. "Arts Plastiques"-ի դա-
սընթացներուն:
1979-ին կ'աւարտէ ALBA-ն մասնաւոր յիշատակու-
թեամբ:
1980-ին կը հրաւիրուի դասաւանդելու նոյն հիմնար-
կին մէջ, ALBA, University of Balamand ուր կը մնայ մին-
չեւ այսօր:
Ռոզվարդ անդամ է Լիբանանի նկարիչներու եւ ար-
ձանագործներու միութեան:
Այս տարուա օգոստոս ամսուն «Մէկ ազգ, մէկ մշա-
կոյթ» փառատօնի շրջանակում Ռոզվարդ իր նկարները
ցուցադրեց Հայաստանի ազգային պատկերասրահին
մէջ:

**«Կիներս եւ մանուկներս սիրոյ եւ գուրգուրանքի
խոր զգացում մը կը ցոլացնեն: Այն եզրակացու-
թեան եկած եմ, որ որքան գիծերդ յարգ ըլլան, գույ-
ներդ բիւրեղացան, ստեղծագործութիւնդ կը դառնայ
աւելի արտայայտչական, աւելի ուժեղ»:**
**«Նկարչական արուեստի մէջ նոր տարածներու
բացելու երեւոյթը ամենէն յատկանշական կողմերէն
մէկն է այս ցուցահանդէսին: Գոյներու յարգութիւ-
նը, հորիզոններ նուաճելու ոճը, նոր երանգ մը կը բե-
րեն Ռոզվարդի արուեստին:
Կը զմա հասեմք իր յարաւեւ ծիգը եւ նորութիւն-
ներ նուաճելու ձգտումը»:**

Գարեգին Բ
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ



**«Ռոզվարդ Սիսեոյանի աշխատանքներն աչի
են ընկնում մասնագիտական բարձր կատարմամբ ու
յուրօրինակ փիլիսոփայութեամբ... Այսօր նա կրթում
ու դաստիարակում է երիտասարդ արվեստագետների
սերունդներ՝ հանդիսանալով բարձր արվեստի վառ
օրինակ»:**
Արեգ Դովհաննիսյան
Լիբանանում 33 դեսպան

Ծնվել է 1937 թ. Բեյրութում (Լիբա-
նան), ուսանել Հայկազյան քոլեջում,
1958-ին՝ Բեյրութի ամերիկեան հա-
մալսարանում: 1963-ին ավարտել է Երեւանի պո-
լիտեխնիկական ինստիտուտը: 1988 թ. արվեստի
բնագավառի նվաճումների համար ստացել է եր-
կու պատվոգիր Հայաստանում:
1991-2001-ին հայ արվեստի պատմություն է
դասավանդել Բեյրութի հայագիտական ինստի-
տուտում:
Հիմնականում ստեղծում է փայտյա քանդակ-
ներ: Ունի ինքնատիպ ռոմանտիկ ոճ:
Շուրջ 10 անհատական ցուցահանդես է ունե-
ցել Լիբանանում եւ Ավստրիայում, Իտալիայում:
Մասնակցել է բազմաթիւ խմբակային ցուցա-
հանդեսների Լիբանանում, ԱՄՆ-ում, Հայաստա-
նում:



Մարտիրոսյան Վարուժան

Վարուժան Մարտիրոսյանին
առնչվելու առիթ ունեցա, երբ ու-
սանում էր Երեւանի պոլիտեխնիկ
ինստիտուտի շինարարական ֆա-
կուլտետում: Ճարտարագետ-կա-
ռուցողի կարմիր դիպլոմով նա
1963-ին ավարտեց ու մեկնեց Բեյ-
րութ:
Լիբանանում գտնվելիս առիթ-
ներ ունեցա նրան հանդիպելու Այն-
ճարում, Բեյրութում: Հայտնեց, որ
հրապուրվել է փայտարվեստով:
Ու մտքով կանցներ, որ այդ հրա-
պուրանքը նրան կանգնեցնելու է
մեծ արվեստի ճանապարհին, հե-
ղինակ է դարձնելու հիրավի հրա-
շագործությունների:
Չեմ կարող առանց հիացմուն-
քի դիտել Վարուժանի քանդակնե-
րը, որոնց լուսանկարները տեղ են
գտել ինձ նվեր ուղարկած ալբո-
մում: Հեղինակը ներկայացրել է
«Նաիրյան աղջիկների հեզաճ-
կուն», տարափոփոխ կերտվածք-
ներ, կանանց ֆիգուրներ ու հորին-
վածքներ՝ մատուցված արդիական
արվեստով եւ մեծ վարպետու-
թյամբ:
Կեցցես Վարուժան, ստեղծագործական
նորանոր հաջողություններ եմ մաղթում:
Ակադեմիկոս
ՎԱՐՈՋՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՓԱՌԱՏՈՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

ՏՈՆ՝ մեր փողոցում

Կինոգեոս Միխայել Սամբուլյանը, մի առիթով գրելով կինոփառաճառների մասին, մասնավորապես նշել է. «Կեցցեն փառաճառները, եւ հույս ունենանք, որ օրերից մի օր մեր փողոցում էլ տոն կլինի: Փառաճառ»: Այս տողերը հրատարակվելուց երկու տարի հետո տոնը կայացավ մեր փողոցում. «Ոսկե ծիրան» կինոփառաճառը:

Ծիրանավառ

Որքան էլ չկամենք եւ թերահավատները փորձեն թերագնահատել եւ պիտակներ կպցնել, փաստ է, որ մեր այս հատուկեմտ կինոթատրոններ ունեցող եւ կամոնավոր գործող կինոարդյունաբերություն չունեցող Հայաստանում 2004 թվականի հունիսի 30-ից հուլիսի 4-ը կայացավ միջազգային կինոփառաճառ՝ աշխարհի 20 երկրներից ժամանած մոտ 70 հյուրերի մասնակցությամբ: Կինոփառաճառների պատմության մեջ թերեւս առաջին դեպքն է, որ փառաճառն անվանակոչված էր մրցանակի անունով՝ «Ոսկե ծիրան», մինչդեռ շատ ավելի նպատակահարմար կլիներ, որ այն պարզապես կոչվեր «Երեւանի միջազգային կինոփառաճառ»:

Հենց սկզբից նկատեմք նաեւ, որ չնայած փառաճառն կազմակերպիչները (Մշակույթի զարգացման հիմնադրամ, Կինոգետների եւ կինոլրագրողների հայկական ասոցիացիա) մշտապես շեշտում էին, որ առաջին անգամ էլ Հայաստանում կազմակերպվում միջազգային կինոփառաճառ, իրականում մինչ այդ Երեւանում տեղի էին ունեցել, ճիշտ է, ավելի փոքր մասշտաբի, սակայն միջազգային ընդգրկմամբ կինոփառաճառներ («Մասնավոր հայացքը» 2000-2002 թվականներին):

Բոլոր միջազգային կինոփառաճառներին հատուկ պարտադիր ծրագիրն ապահովված էր՝ միջազգային ժյուրիներ, հյուրերի հանդիսավոր մուտք «Մոսկվա» կինոթատրոն կարմրագորգ «աստղային ճանապարհով», փողային նվագախմբի շքերթ, փառաճառնի համար հատուկ գրված երաժշտություն եւ երկլեզու կատալոգ, փառաճառի լոգոյի պատկերով շապիկներ եւ գլխարկներ հագած վազվզող տղաներ ու աղջիկներ ... («Մթնոլորտը Վենետիկի փառաճառն է հիշեցնում», ասաց մեր ծանոթ ամերիկահայերից մեկը): Պակասում էին միայն հնչուն անունները եւ կինոաստղերը: Ոչ մի երկարոտ շիկահեր գեղեցկուհի, ոչ մի երգչուհի սուպերմեն ... փառաճառնի հյուրերի մեջ ամենից աչքի ընկնող արտաքինը ամերիկահայ դերասան Վահե Բերբերյանին էր՝ ճերմակած հյուսքերով...

Կազմակերպիչները ջանք չէին խնայել՝ փառաճառին անհրաժեշտ ծիրանավառ շուք տալու համար. հանդիսավոր բացմանից առաջ ծիրանի օրհնում Սուրբ Զորավոր եկեղեցում, ծիրանի տոն Ազնավուրի հրապարակում՝ հատուկ փառաճառնի առթիվ շշալված եւ պիտակավորված ծիրանի օղիով ... Ափսոս, որ անհաջող էր «գլխավոր» ծիրանը՝ փառաճառնի լոգոյին պատկերվածը, որը, մեղմ ասած, այնքան էլ ծիրան չի հիշեցնում: Բայց, ինչպես տեղեկացանք, այդ պատկերը նվեր է տվել հոլիվուդյան նկարիչ Վահե Ֆաթալը (որը երեւի կյանքում ծիրան չէր տեսել), իսկ նվեր տված ծիրան ատամները, ինչպես հայտնի է, չեն հաշվում: Սակայն ավելի նպատակահարմար կլիներ, եթե նախօրոք մեր նկարիչների մեջ փառաճառնի լավագույն լոգոյի ձեւավորման համար մրցույթ հայտարարվեր:

Այդուհանդերձ, բացման պաշտոնական հանդիսության ժամանակ դահլիճում ծիրանավառ գույները միանգամից

չբացան: «Մոսկվայի» կապույտ դահլիճ սպրդած երջանիկներն անակնկալի եկան՝ էկրանին տեսնելով հայկական ֆիլմերում հաճախ տեղ գտնող հուղարկավորության դրվագներից մեկը՝ դուդուկի սրտմաշուկ (թեեւ համաշխարհային էկրանը գրաված) նվագով, որն այնուհետեւ էկրանից սահուն անցում կատարեց իրական աշխարհի՝ շնորհիվ բեմում հայտնված դուդուկահարների անսամբլի ... Դրան հետեւեցին հավուր պատշաճի ճառեր՝ անգլերեն թարգմանությամբ (այդ թվում՝ մշակույթի նախարարի ամպագոռոգող ռեզյույնի խոսքը, որը բավական զվարճացրեց հայ հանդիսականներին, իսկ վերջիններիս ծիծաղը տարակուսանքի մեջ գցեց օտարազգի հյուրերին): Փառաճառնի բացմանը ցուցադրվեց Ռոման Բալայանի «Գիշերը լուսավոր է» ֆիլմը՝ կույր-խուլ-համր երիտասարդների մասին, որը չնայած շատ մարդկային էր, սակայն լուսավոր քիչ բան ուներ եւ շատ քիչ էր պատշաճում փառաճառնի հանդիսավոր բացմանը ցուցադրվելու համար...

Միայն չոր ինֆորմացիա

Մրցութային ծրագրում 6 անվանակարգերով ներկայացված էր Հայաստանում եւ սփյուռքում հայագրի ստեղծագործողների 2001-2004 թթ. ստեղծած 84 կինոնկար (7 լիամետրաժ խաղարկային, 8 կարճամետրաժ խաղարկային, 16 վավերագրական, 15 անիմացիոն եւ փորձարարական, 14 ուսանողական եւ դեբյուտային ֆիլմ), ինչպես նաեւ վիդեոարվեստի 25 աշխատանք: (Վիզեն Զալդրանյանի՝ 2001 թվականին նկարահանած կինոնկարը մրցույթին չէր մասնակցում հեղինակի ցանկությամբ):

Ժյուրիների կազմում ընդգրկվել էին հայ կինոգործիչներ Կարեն Գեորգյանը, Արման Մանարյանը, Ստեփան Անդրանիկյանը, Ալբերտ Յավուրյանը, Արա Վահուհյան, ռուս կինոգետներ Կիրիլ Ռազոգովը, Միխայիլ Լիտվակովը, Օլգա Շերոկովը, եվրոպական հայտնի փառաճառների (Սնտերդամ, Ռոտերդամ, Գյոթեբերգ, Սոֆիա) կազմակերպիչներ եւ ծրագրերի ղեկավարներ Պետեր վան Բուերենը, Սոնյա Վեստերհոլտը, Լյուդմիլա Ցվիկովան, Ալլի Դերբսը, Գունար Բերգդալը եւ Իրինա Կանուշեան:

«Մոսկվա» եւ «Նաիրի» կինոթատրոններում, Ազգային պատկերասրահում եւ Նորար փորձառական կենտրոնում ցուցադրվեց մոտ 120 ֆիլմ, որոնցից 60-ը՝ փառաճառնի արտամրցութային ծրագրում: Մեծ մասը Երեւանում ցուցադրվեց առաջին անգամ: Դրանց թվում էին վերջին տարիների շվեդական եւ գերմանական կինոնկարներ, Ռոտերդամի փառաճառնի մրցանակակիր ֆիլմեր: Վավերագրական ֆիլմերի ժյուրիի անդամ, շվեդ կինոռեժիսոր Գունար Բերգդալի չորս կինոնկարները՝ «Ինձմար Բերգման. ինտերմեցցոն», «Բերգմանի ծայրը», «Լյուդմիլայի ծայրը» եւ «Լոռայի ծայրը» ներկայացվեցին «Բերգդալի ծայրը» ծրագրում: Կայացավ վերջին հայկական լիամետրաժ խաղարկային ֆիլմի՝ Սուրեն Բաբայանի «Ժամոյի» պրեմիերան:

Փառաճառնի օրերին տոնվեց 80-ամյա երեք հորելյան: Հայ կինոյի հիմնադրման 80-ամյակի առթիվ Նկարիչների տանը բացվեց հայ կինոնկարիչների աշխատանքների ցուցահանդես: Մեր գեյ Փարաջանովի թանգարանը եւ Հայաստանի ազգային ֆիլմադարանը համատեղ նշեցին մեծ կինոռեժիսորի ծննդյան 80-ամյակը: Ֆրանսիացի արվեստագիտուհի Ռաֆայել Վիեդիլնը Ազգային ֆիլմադարանում ներկայացրեց բացօթյա ինստալացիա՝ փարաջանովյան արվեստի մոտիվներով: Շառլ Ազնավուրի ծննդյան 80-ամյակի առթիվ ցուցադրվեցին նրա լավագույն ֆիլմերից՝ «Կրակեղ դաշնակահարի վրա» եւ «Յոննիսի անցումը»:

«Ոսկե ծիրանի» փակման հանդիսավոր երեկոյի ժամանակ հրապարակվեցին ժյուրիների որոշումները: Խաղարկային լիամետրաժ ֆիլմերի անվանակարգում «Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակը շնորհվեց Ատոմ Էդոյանի «Արարատ» ֆիլմին (Կանա-

դա): Ժյուրիի հատուկ մրցանակի արժանացավ Արթուր Արիստակեսյանի «Տեղ երկրի վրա» ֆիլմը (Ռուսաստան): Հայաստանի կինոգետների եւ կինոլրագրողների ասոցիացիայի՝ լավագույն կինոնկարի համար սահմանված մրցանակը շնորհվեց Էդգար Բադդասարյանի «Սուրբ ծեսերի երկիրը» ֆիլմին (Հայաստան): Կարճամետրաժ ֆիլմերի անվանակարգում «Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակը տրվեց Ստեֆան Էլմաջյանի «Իմ անունն է ...» ֆիլմին (Ֆրանսիա), իսկ անիմացիոն եւ փորձարարական ֆիլմերի ժյուրին «Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակին արժանացրեց նույն Էլմաջյանի «FreeDub 1» ժապավենը:

Վավերագրական ֆիլմերի անվանակարգում «Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակը շնորհվեց Արմեն Խաչատրյանի «Հեքիաթ թեւավոր ծիրան մասին» ֆիլմին (Հայաստան), ուսանողական եւ դեբյուտային ֆիլմերի անվանակարգում՝ Մարիա Սահակյանի «Հրաժեշտ» ֆիլմին (Հայաստան-Ռուսաստան), իսկ վիդեոարվեստի անվանակարգում՝ Դիանա Հակոբյանի «Ես քո երազներին չեմ հավատում» աշխատանքին (Հայաստան):

Ֆրունզե Դովլաթյանի անվան «Հույս» մրցանակը շնորհվեց Վարդան Հակոբյանի «Քաղաք» ֆիլմին (Հայաստան):

Ժյուրիի հատուկ մրցանակների արժանացան Կոմս Շահբազյանի «Y.U.L.» կարճամետրաժ ֆիլմը (Բելգիա), Քրիստինա Դավիդյանի «Ինտիմ քաղաքը» (Եստոնիա) եւ Գեորգի Փարաջանովի «Ես մահացել եմ մանուկ ժամանակ» (Ռուսաստան) վավերագրական ֆիլմերը, Սերժ Ավետիսյանի «Կյանքի գիծ» անիմացիոն ֆիլմը (Ֆրանսիա) եւ Գայանե Եղիազարյանի «Անվերնագիր» 1 կադր-1րոպե վիդեոաշխատանքը (Հայաստան): Ուսանողական եւ դեբյուտային ֆիլմերից դիպլոմների արժանացան Դավիթ Սահակյանի «Խաղ» եւ Նաիրա Մուրադյանի «Երեք պոետ եւ Զարեմ» անիմացիոն ֆիլմերը (Հայաստան), Արմեն-Տեր Մկրտչյանի «SOS I-III», Դիանա Կարդոմյանի «Էկզերսիս» (Հայաստան) եւ Վարդան Հ. Հակոբյանի «Հիմիկ» (Ռուսաստան) աշխատանքները:

Մի քիչ փնտրախոսություն

Փառաճառնի անկազմակերպվածությունը նկատելի էր շատ առումներով, ինչը կարելի է բացատրել նախեւառաջ մեր ազգին բնորոշ հատկանիշով եւ ապա միայն՝ կազմակերպիչների փորձի բացակայությամբ: Փառաճառնի օրերին չափազանց դժվար էր ֆիլմերի ցուցադրությունների ծրագիր գտնել: Մի ֆիլմի անուն հայտարարվում էր, գնում-հասնում էիր, պարզվում էր, որ նախապես հայտարարվածի փոխարեն մեկ ուրիշ բան է ցուցադրվելու, էլ չենք խոսում ցուցադրությունների ուշացումների մասին: Զափազանց անպատեհ էին սեանսների ժամերը: (Դե իհարկե, ո՞ր մի կինոթատրոնը հարմար ժամեր կտրամադրեր ինչ-որ գերմանական անծանոթ ռեժիսորների կինոնկարների, եթե իրենք չափույթ պիտի ստանան՝ ցուցադրելով հոլիվուդյան այնպիսի «գլուխգործոցներ», ինչպիսիք են «Սարդ-մարդը» կամ «Վաղը չէ մյուս օրը»): Մի երիտասարդ սփյուռքահայ ռեժիսոր այդպես էլ չսփոփվեց (նույնիսկ մրցանակակիր դառնալուց հետո), որ իր կարճամետրաժ ֆիլմի ցուցադրմանը (առավելուկ ժամը 10.00-ին) ընդամենը տասը հանդիսատես էր եղել: Փառաճառնի կատարվողում տեղ գտած մի շարք կինոնկարներ այդպես էլ չցուցադրվեցին (օրինակ, ամբողջ իտալական ծրագիրը), մինչդեռ որոշ ժամանակ անց կատալոգը ձեռքն առնողն այլ պատկերացում կկազմի փառաճառնի ծրագրերի մասին:

Ի դեպ, կատալոգի մասին: Գեղեցիկ ձեւավորված եւ պատկերազարդված կատալոգը երկլեզու է (չնայած անգլերեն հատվածները խմբագրման խիստ կարիք ունեին), ծեփ է բռնադրվել փառաճառնի առումով՝ չափազանց անհամասեռ մյուսով (նկատի ունենք ինչպես բաժինների առաջաբանները, այնպես էլ ֆիլմերի անոտացիաները): Օրինակ, մի շարք լուրջ կինոնկարներ ներկայացված են մեկ տողով, իսկ, ասենք, վիդեոարտի մի քանի թույլագնաց աշխատանքների շատ անոտացիաներ մինչեւ կես էջ են գրավում: Անհասկանալի է որոշ կինոնկարներ



վիդեոարվեստի բաժնում ներկայացնելը (օրինակ, Այլին Զլավելուի «Անվանակոչում» ինքնակենսագրական ֆիլմը):

Կատալոգի ամենացնցող դրվագը ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հովիկ Հովեյանի ուղերձն է: Բանաստեղծական ոճով «Ոսկե ծիրանը» բնութագրելով որպես փարաջանովյան նոստ եւ ազնավուրյան պոետիկայի նորօրյա որոնում, այնուհետեւ հարգելի նախարարը մամուլ հաղորդագրության ոճով իր ուղերձում տեղեկացրել է, որ «Վեց անվանակարգերում մրցակցելու համար արդեն ընտրված են վաթսույն խաղարկային, վավերագրական, մուլտիպլիկացիոն, փորձարարական եւ առաջնեկ ֆիլմեր»: Ապա պրն. Հ.Հովեյանը հարկ է համարել իր ուղերձում փառաճառնի կազմակերպիչներին եւ արար աշխարհին հիշեցնել, որ «փառաճառնի ազդագիրը, լոգոն եւ ձեւավորմանն առնչվող աշխատանքներն իրականացրել է հոլիվուդյան ճանաչված դիզայներ Վահե Ֆաթալը» (թերեւս նրա դուրը եկել է վերոնշյալ «ծիրանը», որ հարկ է համարել նրա աշխատանքն առանձնացնել) եւ որ «Ժյուրիի կազմում ընդգրկված են անվանի կինոգործիչներ, կինոքննադատներ, կինոլրագրողներ, պրոդյուսերներ, ռեժիսորներ»:

Սա թերեւս աշխարհում առաջին ուղերձն է, որի մեջ պաշտոնական հաղորդագրություն է տրվում: Ուղերձը եզրափակվում է դարձյալ բանաստեղծական պատկերով, այս անգամ փառաճառնը բնորոշելով որպես «հայ կինոմատոգրաֆի եվրոպակերպ ընթացք» եւ «երեւելի հայ կինոգործիչ ձեռքբերված օվկիանոսից անդին ապրող եղբոր գեղագիտության տարածքում»:

Եվրոպակերպ է ընթանում այսօր հայ կինոմատոգրաֆը, աֆրիկակերպ թե մեկ այլ կերպ՝ թող որոշեն հայ կինոյի պատմաբանները: Իսկ կայացա՞վ արդյոք մեծարգո նախարարի նշած ձեռքբերվածը երեւելի հայ կինոգործիչ եւ օվկիանոսից անդին ապրող եղբոր միջեւ ... Համեմայն դեպս, Սփյուռքի հայրենակիցների ֆիլմերի ցուցադրման ժամանակ բացակա էին ոչ միայն երեւելի, այլեւ ոչ երեւելի հայ կինոգործիչներ...

Առաջինը՝ լավագոյնը

Փառաճառնի բացման ժամանակ հանապարաստից խոսք ասելու հրավիրվեց Գունար Բերգդալը: Անակնկալի եկած շվեդ կինոռեժիսորն արագ կողմնորոշվեց՝ արտասանելով լուկ մեկ նախադասություն. "The first one is the best one" («Առաջինը լավագույնն է»): Սակայն թույլ տվեց չհամաձայնել ճանաչված կինոգործիչի հետ: Մենք շատ ենք ուզում, որ 2004-ին կայացած երեւանյան միջազգային կինոփառաճառն լինի ամենավաղը՝ հետագա փառաճառների շարքում, ինչը, սակայն, կմնա նաեւ ամենակարեւորը՝ որպես մշակութային կարեւորագույն մի երեւույթի սկիզբը Հայաստանի հոգեւոր կյանքում...

ՈՍԿԵԴՍ ԾԻՐԱՆՅԱՆ



Յիւնիսթ Բեյոն (Պարտիզանայան), ԱՄՆ



Ժորժ Կարվարենց եւ Շարլ Ազնավուր, Ֆրանսիա



«Օսկարի» արժանացած մոնտաժող Թոմ Օհանյան, ԱՄՆ

Արծաթե Բախչինյան

Հայերը համաշխարհային կինոյում, Երեւան, 2004

Տեղեկաշար եւ արժեքավոր



Երգի եւ կինոյի գերաստղ Շեր

Հասվածներ գրի առաջաբանից

Հայ Սփյուռքը եւ կինոարվեստը, ընդհանուր առմամբ, կազմում են իմ հետաքրքրությունների գլխավոր շրջանակը: Իսկ մասնավորապես կինոարվեստին առնչվող սփյուռքահայությունն ինձ առավել հուզող ոլորտն է: Տարիներ շարունակ կազմելով համաշխարհային քաղաքակրթության մեջ հայության նպաստն արտացոլող կենսագրական տվյալների շտեմարան՝ հատուկ վերաբերմունք եմ ունեցել կինոգործիչների հանդեպ:

Այս գիրքն ավելի շատ բանասիրական աշխատանք է պատմություն է, քան կինոգիտություն: Գիրքը հիմնականում տեղեկատվական-հանրագիտարանային բնույթի է: Այս գրքի էջերում մոռացության խավարից հառնում են աշխարհում առաջին հայկական շարժապատկերը 1912-ին Եգիպտոսում նկարահանած Վահան Զարդարյանը, 1919-ին իր կենսագրությունը շարժանկար դարձրած Մեծ եղեռնի կենդանի զոհ Արշալույս Մարտիկանյանը, պարսից կինոյի հիմնադիր Ավանես Օհանյանը, լիբանանյան առաջին շարժանկարն արտադրած Հարություն Թյուրայանը... կինոարվեստի համաշխարհային տիտան, աշխարհի առաջին գունավոր ֆիլմի հեղինակ Ռուբեն Մամուլյանը, հոլիվուդյան խոշոր դերասան Ալին Թամիրովը, հայ բեմի մեծ դերասան եւ ֆրանսիական կինոյի երբեմնի աստղ Աշո Շահխաթունին, ռուսական հնչուն կինոյի ռեժիսոր Յոն Շահիկյանը, քսաներորդ դարի մեծ հայերից Շարլ Ազնավուրը, ֆրանսիական կինոգրիմի «կախարդ» Հակոբ Առաքելյանը, կինոերաժշտության մեծ վարպետ Ժորժ Կարվարենցը, արդի կինոարվեստի մեծանուն ներկայացուցիչ Ատոմ Եղոյանը... Ընթերցողը բազմաթիվ հաճելի առիթներ կունենա ճանաչելու աշխարհի մեծ եւ փոքր էկրանների իրենց տաղանդն ու գեղեցկությունը ցուցաբերած հայազգի դերասանուհիների՝ ամերիկյան եւ ֆրանսիական հեռուստաէկրանների առաջին մեծության աստղեր Առլին Ֆրենսիս եւ Ալիս Սափրիչ, գայթակղիչ նկարագրի տեր մեծահոգեւոր երգչուհի-կինոաստղ Շեր, եգիպտական, իրանական եւ թուրքական կինեմատոգրաֆի առաջին դերասանուհիները, բրազիլական հեռուստաթերթոնների սիրված դերասանուհի Արասի Բալաբանյան, չինական երկնագույն էկրանին փայլած երեւանցի Լիանա Եղիզարյան, մինչեւ անգամ՝ պոռնոկինոյի լեգենդ Քրիսթի Բեյոնը (Պարտիզանայան) եւ շատ ուրիշներ...

Այսօր մենք կարող ենք խոսել պայմանականորեն «սփյուռքահայ կինոյի»՝ որպես առանձին մշակութային երեւոյթի մասին՝ հաշվի առնելով հատկապես վերջին տարիներին աշխարհի տարբեր անկյուններում



Ադրիեն Բարբիո, ԱՄՆ



Աշխարհահռչակ կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյան

հրաճարակություն

ծեր, որոնք, որպես կանոն, այնքան թույլ են, որ ասպարեզը գրեթե բաց է մնում:

Վերջին տարիներին միտում է զգացվում տարբեր տարիների ստեղծված հայկական թեմայով կինոաշխատանքները (ստեղծված մեծ մասամբ հայերի կողմից) միավորել «սփյուռքահայ կինո» հասկացության տակ, որն էլ իր հերթին համարվում է ընդհանուր հայ կինոյի մի հատվածը: Մյուս կողմից՝ հայազգի կինոգործիչները նույնպես կարիք են զգում միավորվելու ազգային կազմակերպությունների մեջ:

Համարենք ազգային սնապարծություն, թե ոչ, սակայն փոքրաքանակ ժողովրդի համար բնական է, երբ հեքիաթային աշխարհի կինոյում, էկրանի վրա նա տեսնում է հայրենակցի ազգանունը կամ ճանաչում նրանցից մեկին: «Մի ժամանակ Երեւանի կինոսրահներում ցուցադրվող խորհրդային կամ արտասահմանյան երկրների ստուդիաներում նկարահանված ֆիլմերի մակագրություններում հայկական ազգանուն հայտնվելիս դաշիվում ծափահարություններ էին հնչում: Մի քիչ միամիտ, մի քիչ ծիծաղելի այդ եղանակով մարդիկ, կարծես թե հաջողության հասած իրենց հայրենակցի միջոցով մեծ աշխարհի հետ հարաբերվելու, նաեւ ազգային արժանապատվության շոյվածության, հպարտության զգացողություն էին ցուցաբերում: Թեեւ նրանք, ում ուղղված էին այդ ծափահարությունները, անտեղյակ, զուցե անտարբեր էին այն ամենին, ինչը կոչվում է ազգ, պատկանելություն, հայրենիք»,- գրել է կինոլրագրող Ռուզան Զաքարյանը: «Հայուն եսը խորունկ գոհունակութուն մը կը զգայ, երբ մութ սրահը մտնելով պաստառին վրայ փայլուն գիրերով

կը կարդայ Հայու մը անունը»,- գրել է Առլեն Փափազյանը: Այս «մեղքը» միայն հայերին չէ հատուկ. օրինակ՝ երբ 1952-ին Ինգրիդ Բերգմանը նկարահանվեց ԱՄՆ-ում՝ «Կասաբլանկա» կինոնկարում, շվեդները հպարտությամբ էին նայում հոլիվուդյան առաջին մեծության աստղ Հեմֆրի Բոգարտի կողքին հանդես եկող իրենց հայրենակցուհուն...

Հիշենք, որ այս թեման հետազոտողը միշտ էլ կարող է մեղադրվել, թե իբր կարիք չկա զբաղվել ոչ ազգային միջավայրում գործած, օտար քուրաներին կրակ տված հայրենակիցներ հայտնաբերելով, որոնք կապ

Մեր կարծիքով՝ տվյալ դեպքում չպետք է տարվել հեռու գնացող եզրակացություններով՝ փորձելով ազգային դրսեւորումներ գտնել այս կամ այն բեմադրիչի եւ դերասանի արվեստում: Այստեղ էականը այն անմիջական ծանոթացումն է, որով կինոն, որպես ամենից մասսայական արվեստը, ճանաչել է տալիս համաշխարհային հասարակությանը տվյալ ժողովրդին՝ ի դեմս այլ երկրներում հանդես եկող նրանց ներկայացուցիչների:



Մայքլ Գյուրցյան, ԱՄՆ



Լիանա Եղիզարյան, Չիկաստում



Կինոռեժիսոր Ալեք Քեչիկյան եւ Սարգսյան



Ատոմ Եղոյան եւ Արլին, Կանադա

հայ արվեստ • 3-4/2004 (հ. 10)

Կինո

armenian art • 3-4/2004 (հ. 10)

Երջերս արուեստագետ դաշնակահար Շահան Արծրունին շնորհակալութեամբ ստացայ իր կատարումով թողարկած «Խաչատուրեան @ 100» խտասալիկը: 2003 տարին ըլլալով աշխարհահռչակ երաժշտ-ստեղծագործող Արամ Խաչատուրեանի ծննդեան 100-ամեակը, UNESCO-ն հռչակած էր Խաչատուրեանի տարի:

Ամբողջ երաժշտական աշխարհը, սկսելով երախտա-պարտ հայ ժողովուրդէն, հեղինակի մեծութեան վայել բազ-մապիսի միջազգային ու ազգային ձեռնարկներով, պատ-շաճ կերպով, նշուեցաւ եւ տակաւին կը նշուի հայ ժող-վորդի զաւակ, 20-րդ դարու համաշխարհային երաժշտա-կան տիտան Արամ Խաչատուրեանի 100-ամեակը:

Այս առթիւ Հայաստանի Հանրապետութեան մշակոյ-թի նախարարութեան կազմած յոբելեանական յանձնաժող-վի կողմէ երաժշտագետ-դաշնակահար Շահան Արծրունի կը նշանակուի Ամերիկայի հանդիսութեանց Հայաստանի լիազօր ներկայացուցիչը:

Շահան Արծրունիի

«ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ @ 100»

խսասալիկը

Պատասխանատուութեան այս ծիրէն ներս, թէ՛ անհա-տական կատարողական ելոյթներով եւ թէ՛ կազմակերպչա-կան այլ միջոցառումներով, զոյգ Ամերիկացիներու ու այլ քա-ղաքներու մէջ հայ եւ օտար երաժշտագետ հասարակու-թեանց մօտ ստեղծեց Խաչատուրեանական ոգեւորութեան բարձր ալիքներ: Մնալով 100-ամեակի շրջագծին մէջ, Խա-չատուրեան ժառանգութիւնը յաւերժացնելու ծրագրով թո-ղարկեց վարպետին դաշնակային գործերու խտասալիկ մը:

Այսու, ուզեցի հասարակութեան ուշադրութեան յան-ծնել այս խտասալիկը ոչ անոր համար, որ ան մեծահռչակ Խաչատուրեանի ու արուեստագետ Շահան Արծրունիի գործերէն է, այլ՝ որովհետեւ Արծրունի իր բարձր արուես-տով կը ներկայացնէ հասարակութեան, բացի մի քանիներէն, շատ քիչ ծանօթ գործեր: Այս իսկ պատճառով յիշեալ խտասալիկը կը ներկայացնէ յատուկ արժէք:

Հայ երաժշտական մշակոյթին մէջ դաշնակային երա-ժշտութեան ստեղծագործութիւնները սկսած են 19-րդ դա-րու կէսերուն Տիգրան Չուխաճեանով եւ Գեներիոս Դորդա-նեանով: Ապա, մինչեւ համայնավարութեան շրջանը զար-գացաւ Նիկողայոս Տիգրանեանի, Կոմիտաս վարդապետի ու յատկապէս Սարգիս Բաղդուարեանի գործերով: Ընդ-հիւ այս երաժիշտներուն առողջ դատումին եւ ճիշդ գնահա-տումին, ժողովրդական երգն ու պարեղանակը ընդունելով որպէս ժողովուրդի մը կեանքը արտայայտող գեղարուես-տական արժէք եւ դարձնելով զանոնք հիմնամիւթ իրենց ստեղծագործութեանց, ճշդեցին եւ հունաւորեցին դաշնա-կային երաժշտութեան ազգային դիմագիծը: Այս առաջին շրջանը եթէ ուզենք բնորոշել տարագով մը, կրնանք կոչել զայն «մանրանուագային» շրջան:

Համայնավարութեան սկզբնական շրջանին, չկտրե-լով ժողովրդական երաժշտութեան ակունքներէն, մեծ թա-փով ստեղծուեցան աւելի անհատականացած բնոյթով դաշնակի յատուկ երաժշտատեսակներ, ինչպէս Հարօ Ստեփանեանի ստեղծագործութիւնները:

Արագ զարգացում ապրող այս դաշնակային երաժշ-տութիւնը, շնորհիւ Խաչատուրեանի համադրային խոյան-քին (որ հիմնուած էր ժողովրդական, աշուղական եւ յան-կարծաբանական երաժշտութեանց ակունքներուն վրայ), անդրանցնելով ազգային սահմանները հասաւ համաշ-խարհային երաժշտութեան բարձր մակարդակներու:

Խորաթափանց արուեստագետ Շահան Արծրունի յի-շեալ խտասալիկով կը հրամցնէ հետեւեալ գործերը.- Sonatina (1959), Children's Book: I (1926-1947), Children's Album: Book II (1928-1965), Valse-Caprice (1926), Dance (1926), Poem (1927), Toccata (1932): Ընդհանուր տեւողու-թիւնն է 53:12 վայրկեան:

Անցեալ տարի թէ՛ բեմերով, թէ՛ մամուլով եւ թէ՛ շար-ժանկարներով, ըստ բաւականին, ներկայացուած ըլլալով Արամ Խաչատուրեանի կեանքն ու գործերը պիտի բաւա-րարուի մայրքանով:

Խաչատուրեան ստեղծագործեց գեղարուեստի ծա-նօթ երաժշտական գրեթէ բոլոր բնագաւառներէն ներս: Գրեթէ կ'ըսենք, որովհետեւ կու գար քահանայական գեր-դաստանէ, զաւակն էր եկեղեցասէր եղիա եւ Դումաշ Տէր Խաչատուրովներուն, ու երբ որպէս ուսանող Մոսկուա կը

գտնուէր, 1923-1925 Լեւոն Եղօր հետ հայոց եկեղեցւոյ մէջ կ'երգէր: Քաջածանօթ էր եկեղեցական երաժշտութեան:

Դժբախտաբար, չկարողացաւ մշակել շարական միսկ եւ մականունին «Տէր»-ն ալ անյայտացաւ: Ասիկա ան-հաւատութեան տարիներուն սեղմումներուն հետեւանքն էր, որուն զոհ գնաց նաեւ, զարգացման տեսակէտէն, եկե-ղեցական երաժշտութիւնը:

Խաչատուրեան իր սերն ու հաւատքը հանդէպ եկեղե-ցին կ'արտայայտէր մեծ յարգանք ու ակնածանք տածելով երջանկայիշատակ Վազգէն կաթողիկոսին ու անծամբ կ'այ-ցելէր անոր: Ան հաւատացեալ մըն էր, որ չկարողացաւ իր խօսքը ըսել, իր կրօնական զգացումներն ու ապրումները արտայայտել իր երաժշտական լեզուով:

Տեսէք թէ՛ Տիգրան Մանսուրեան ի՞նչ կ'ըսէ այս կէտի մասին, երբ օր մը վարպետին տունը գտնուած ատեն կը հարցնէ անոր.- «Արամ Իլիչ, դուք Քրիստոսին հաւատո՞ւմ էք: Հաւատացեա՞լ էք: Չայն չհանց: Մօտեցաւ պատուհա-նին, պատուհանից նայեց դուրս: Ես իրեն լաւ տեսնում էի, որովհետեւ գիշերային փողոցը լուսաւորուած էր: Կանգ-նեց, յետոյ ես տեսայ որ նա խաչակնքում է: Յետոյ վարա-գոյրի ետեւից դուրս եկաւ, մօտեցաւ ինձ, ոչինչ ասաց»:

Նոյնպէս ալ կրօնական երաժշտական լեզուով ան «ոչինչ ասաց»:

Խաչատուրեան 20-րդ դարու երաժշտական յայտ-նութիւն մըն էր ու Արծրունի հարագատ կերպով կենդանի կը պահէ զայն: Այս խտասալիկով, ահաւասիկ, ան երաժշ-տական այդ կարկանդակէն փոքրիկ շերտիկ մը կը հրամց-նէ հասարակութեան ընդհանրապէս ու երիտասարդ արուեստագետներուն յատկապէս:

Ընդհիւ տաղանդաշատ եւ ներշնչող դաշնակահարի բարձրորակ կատարումին խտասալիկը ստացած է գեղա-



րուեստական մեծ ուժ եւ դարձած մնայուն արժէք ներկա-յացնող գործ:

Շահան Արծրունի թէւ հայ եւ օտար երաժշտասէր հասարակութեանց ծանօթ դէմք մըն է, այդուամենայնիւ, կ'ուզեն շատ սեղմ գիծերու մէջ ներկայացնել զինք:

Juilliard երաժշտանոցի վկայականներու եւ New York University-ի դոկտորայի տէր Արծրունի, բացի մենամուա-զող եւ սենեկային երաժշտութեան ընկերացող դաշնակա-հար մը ըլլալէ, է նաեւ ստեղծագործող, երաժշտագետ, ար-տադրող-թողարկող, մանկավարժ, դասախօս, գրող, ծայ-նասփռող եւ սալիկներու հեղինակ:

Այս հանգամանքներով ան շրջագայած է զոյգ Ամերի-կաները, Եւրոպան, Միջին Արեւելքը, Ճայրագոյն Արեւելքն ու Աւստրալիան: Իր ծաւալուն գործունեութենէն յիշեն մի-այն մի քանի հատը:

Արծրունի ծանօթ դէմք մըն է հեռատեսային եթերու-ներու վրայ, ինչպէս Johnny Carson եւ Mike Douglas show-երուն վրայ, PBS-ի յատուկ ծրագիրներու վրայ, Եւրոպա-կան ծայնասփռումներու վրայ, ներառեալ BBC-ն: Պա-տուաբեր ելոյթներ ունեցած է Սպիտակ տան մէջ, ինչպէս նաեւ անգլիական, դանեմարգական, շուեդական ու իսլան-տական արքունիքներուն մէջ:

Արծրունի որպէս կատարելագործուած եւ ճկուն արուեստագետ մասնակցած է աշխարհահռչակ Victor Borge-ի զաւեշտական-երաժշտական ծրագիրներուն: 1996-ին, երանաշնորհ Տ. Գարեգին Ա Հայրապետին կողմէ վարձատրուած է յատուկ կոնդակով եւ Ս. Սահակ-Ս. Մես-րոպ շքանշանով:

Այսպիսի հեղինակութեան մը կատարողական արուեստն է որ կը վայելենք յիշեալ խտասալիկով:

Խտասալիկի բովանդակած գործերից ներկայացնեն մի քանի հատը:

Children's Album I-ի առաջին թիւը՝ "Andantino"-ն, գրուած 1926-ին, Խաչատուրեանի առաջին դաշնակի ստեղծագործութիւնն է, որուն աջ ձեռքի պարզունակ մեղե-դիին տալով կիսածայնային շարժումով ընկերացող ծախ ձեռք մը՝ ապահոված է թարմ հնչեղութիւն, եւ որուն ալ աւե-լացնելով միջին բաժին մը բարձրացած հնչմասով եւ շեշ-տաշարժութեամբ (syncopation) դարձուցած է գործը շնոր-հալի երկի մը:

"Ljado Is Sick" երկին քառորդական ու համաչափա-կան, ինչպէս նաեւ դաշնեակային (chordal) կառուցուածքն ու գործին միապաղաղ ընթացքը լաւագոյնս կ'արտայայ-տեն երկին բնոյթը: Ասոր կը յաջորդէ կենսունակ ու եռան-դուն "Burthday"-ը:

Album-ներուն մէջ հետաքրքրութիւնը վառ պահելու համար շարքերը կազմուած են իրարմէ տարբեր, երբեմն ալ իրարու հակադրուող նկարագրի եւ կառուցուածքի գոր-ծերով:

Այս շարքին վերջին թիւին "In The Folk Idiom"-ի մէջ կը տեսնենք ճարտար օգտագործումը հայկական կանացի պարեղանակի մը, որ Կոմիտաս վարդապետ մշակած էր «Էրանկի» անունով:

Valse-Caprice-ին, Dance-ին, Poem-ին եւ Toccata (1932)-ին մէջ կը տեսնուին արդիականութեան ոճային երե-ւոյթներ, ինչպէս տարահնչիւնութիւն, սրուած հնչողութիւն-ներ, բազմահիմնաձայնութիւն, բազմակշռութեանութիւն, զուգահեռ իններորդականներու գործածութիւն, յանկար-ծաբանութիւն, ինչպէս նաեւ հիմնամիութային (thematic) զարգացման իւրայատուկ հնարանքներ, ժողովրդական մեղեդիներու յատուկ դարձուածքներու վերաիմաստաւ-րումներ եւ այլն, որոնք նորարարութիւններ էին հայ դաշ-նակային երաժշտութեան մէջ:

Շահան Արծրունի ներշնչող վստահութեամբ կը մեկ-նաբանէ այս գործերը, իւրաքանչիւրը ներկայացնելով իրեն յատուկ պահանջներով: Ընդհիւ իր հմուտ արուես-տագիտութեան, Արծրունի կարողացած է դաշնակէն ար-տաբերել զունաւորումներու աստիճաններ (range): Օրի-նակ՝ դիւլի զունաւորումով զարկերուն զուգորդելով ժող-վրդական երաժշտութենէն առնուած զանազան կշռութա-յին աւաղծներով կազմուած մեղեդին, երեւան կը հանէ գործին շեշտաշարժութեան ուժակաւորութեամբ յագեցած բազմակշռութեանութիւնը:

Մինչ նուագողին ճարտարութիւնն ու հղկուածութի-ւնը պատճառ դարձած են յստակօրէն լսելու երկու ձեռքե-րուն իրարու հետ ունեցած մեղեդիական երկխօսութիւն-ներն ու նկարագրային հակադրութիւնները, նուագողին նե-րաշխարհի ապրումներն ալ դրսեւորուած են զգացական պոթելումներով ու երանական քնքշութիւններով: Կարծեք արուեստագետ դաշնակահարին մատներուն տակ ոչ թէ դաշնակին ստեղծերը կը հնչեն, այլ Խաչատուրեանի հոգ-ւոյն թրթուր լաւերը:

Խաչատուրեանական զանծ մըն է այս խտասալիկը, որ գեղարուեստական հարուստ եւ բազմատեսակ ապրում-ներու փորձառութիւն մը կը շնորհէ ունկնդրին:

Տեղին կը համարեն վերջացնել գրութիւնս Շահան Արծրունիի իսկ խօսքով.

«Ես, որպէս ՀՀ մշակոյթի նախարարութեան կողմից նշանակուած յոբելեանական յանձնախմբի լիազօր ներկա-յացուցիչ Ամերիկայում, ուզում եմ իմ կարելիութեան սահ-մաններում աշխարհահռչակ կոմպոզիտորի գոնէ դաշնա-մուրային ստեղծագործութիւնները կատարել եւ ներկա-յացնել զանազան օջախներում: Ծրագիրը տեսելու է մինչեւ 2004 թ. յունիսի 6-ը: Անշուշտ դրանով չպիտի սահմանա-փակուենք: Հարկ է ստեղծել բաւարար հետաքրքրութիւն, որպէսզի Արամ Խաչատուրեանի երաժշտութիւնը հնչի ան-վերջ եւ ամենուր» («Հայ արուեստ», 3, 2003):

Խտասալիկը ստանալու համար դիմել համացանցի www.amazon.com կայքին:

Մանուկ Ղրդեան

Արգենտինա



Amigos, 1998

Ծնունդ է Արկենթինա (Պուլմոս Արխ), 1928-ի հունուարի 10-ին: Առաջին նկարչական ցուցահանդեսը կատարեց 16 տարեկանին: Ունեցավ այլազան վարժապետներ, որոնցից Փեթրո Պլեյուզեթը սուրվեցուց նկարչության գաղափարները: 1954 տարուան սկսավ մասնակցել բազմաթիվ ցուցահանդեսների, արկենթինացի համաժամանակակիցների միջոցով: 1958-ին մինչև 1973 Յայաստանում իրագործեց մոտ 150 գործեր: Այդ ժամանակահատվածում կատարեց մի շարք որոնանկարներ, առաջին անգամ նկարելով ռուֆի վրայ: Այս գործերից հարկ է

նշել Հախմասի տան եւ «Նոր» սինեմայի որոնանկարները, էլեկտրական հաշվիչ մեքենաների ներսի երեսները եւ այլն: Եղած է անդամ Յայաստանի արդիական արուեստի թանգարանի հիմնադրութեան: 1973-ին վերադառնալով Արկենթինա, իր նկարչութիւնները ցուցադրուեցան Արկենթինայի, Վենէզուելայի, Դիսիսային Ամերիկայի, Հոլիվուդի, Ֆրանսայի եւ այլ երկրներում մէջ: Եղած է անդամ Արկենթինայի Մշակութային Ժառանգութեան վերստացման յանձնաժողովի: Իր գործերով զարդարած է Պուլմոս Արխի, Սոնթվիստոյի եւ Գոնսվալի բազմաթիւ հայկական եկեղեցիներ:

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆՅ

1960-ական թվականների հայկական կերպարվեստում ուշադրություն էին գրավում գույնի, ազատության, նաեւ «սոցոնալիստական-ակադեմիական» միտումները: Յայաստան ներգաղթած Մանուկ Ղրդեանի կառուցիկ պատկերներն արժանացան քչերի համակրանքին: Սակայն այդ քչերը (օրինակ՝ Երվանդ Քոչարը եւ Մարտին Պետրոսյանը) սովորական արվեստասեր-արվեստագետ չէին, այլ ապրում էին ուղղակի նկարչության մեջ: Մանուկ Ղրդեանը թախծեց, նրան այս երկուսի, նաեւ Քնարիկ Վարդանյանի աջակցությունը քիչ թվաց: Նա ուզում էր իր որոշ չափով կուրիստական, բայց իսկապես խորունկ հայկական զգացողություններ արտահայտող միտումնավոր խամրած (սկիպիդարի շնորհիվ) գեղանկարչական մակերեսները արժանանային լայն զանգվածների հիացմունքին: Նա իր շատ գործերի կերպերի հետ չկռահեց, որ վաղուց արդեն լայն զանգվածներին չէին հետաքրքրում «խորունկ զգացողությունները», որ ժամանակը փոխվել էր, եւ շուտով էլ վիս Պրեսլիին փոխարինելու էր շատ ավելի հասարակ Մայքլ Ջեկսոնը:

1973-ին Մանուկ Ղրդեանը լքեց խորհրդային երկիրը եւ բնակություն հաստատեց Բորխեսի հայրենիքում: Նրա այս բնական ու ազատ քայլը բավական էր, որպեսզի դուրս մնար հայաստանյան արվեստի բառարաններից, հանրագիտարաններից, գրքերից: Վերջերս Յայաստանի ազգային պատկերասրահում հեղինակի ներկայությամբ բացվեց «Մանուկ Ղրդեան. 30 տարի անց» ցուցահանդեսը, ուր մենք կրկին տեսանք ինքնատիպ, ինքնամոտիվ մի հայ արվեստագետի, որը արվեստի մեծ օվկիանոսում վաղուց արդեն թիավարում է արժանապատվությամբ, համառությամբ եւ անպայման կողմնացույցով, որի գոյության մասին գուցե ոչ ոք չգիտի:

Մարտին ՄԻՔԱՅԷԼՅԱՆ
արվեստագետ

Manuel Gheridian



Naturaleza muerta, 1959



Puenta Alsina, 1956



Varduca



Flowers



Ազատուհի Վարդուկա Խորենեան

Ռումինիա

Ծնվել է 1940 թ. Կեռլայում (Տրանսիլվանիա): 1965-ին ավարտել է համալսարանի գեղարվեստի բաժինը: Առաջին ցուցահանդեսը բացել է 1975-ին Զլուժի արվեստի թանգարանում, որին հաջորդել են այլ ցուցահանդեսներ Ռումինիայում եւ արտասահմանում: Նկարչուհին առաջին անգամ ցուցադրվեց հայրենիքում (Ազգային Պատկերասրահ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի օրերին:

Յայերու մշակութային ստեղծագործութիւններն անպակաս չեն մնացած ողբերգութիւններէ: Սարգիս Սելեանի «Ամտեսուած ցեղասպանութեան պատմութիւնը» գիրքի ներկայացումին նպաստեց նաեւ քլուժցի հանրածանօթ նկարչուհի Ազատուհի Վարդուկա Խորենեանի «Գունաբերանգի ընծայաբերում» շարքը: Մասամբ տպաւորուած անուանի ջրանկարիչ Դրանդ Ավագեանի ստեղծագործութիւններէն, ան կը ցուցաբերէ միեւնոյն կիզիչ ոգին, որ գոյնը կը փոխէ յուսահատ ճիչին կամ լուսաւոր ուրախութեան: Կարելի է, որ այս է պատճառը, որուն համար անոր նկարները կընդունին հասարակութեան եւ մասնագէտներու գնահատանքը ոչ միայն երկրի, այլեւ արտասահմանին մէջ: Իւր ստեղծագործութեան մէջ հայ նկարչութեան հարուստ գաղտնիքները գտնուած են իւր իսկ անձնաւորութեամբ, անարատ պահելով հասկացողութիւններու վճիռութիւնը: Ազատուհի Վարդուկա Խորենեան կը վերականգնուի աշխարհը ճշմարիտ արուեստագետի պարզութեամբ: Եթէ յորինուածքի դրդապատճառները տուրք են տալիս սովորութեան, ապա ինքնաբերական գծագրութիւնը, նրբութեամբ արտայայտուող ձեւը եւ գոյնը յարդարուած են բանաստեղծական ապրումներու ամբողջութեամբ: Մերթ համոզիսով, մերթ կրքով կամ շքեղ գոյները փայլուն կերպով կը մրցին լոյսի ճառագայթումին հետ: Պատկերը ի յայտ կուգայ իբրեւ ճիշդ եզրակացութիւն եւ այս խտացումէն ու նկարչական ուժէն ի յայտ կուգայ նկարչութիւնի տաղանդը, որ դիտողին կը վերանորոգէ գոյներու բանաստեղծութեամբ ու հոգեկան մերժեցումով, պարզեւելով «սրբապատկերներ», որոնք միշտ ներկայ են մեր հոգիներուն մէջ:

Տօքթ. Ալեքսանտրա Ռուս (Ռումինիա)

Hovhannes Ter-Tadevosian



Քաղաքային բնակարան



Արեւելյան մոտիվ

Տրապիզոնյան մավակներ



Արեւելյան շուկա

Այս տարի լրացավ
Հովհաննես Տեր-Թադեւոսյանի
ծննդյան 115-ամյակը:

Հայրենիքում նրա
ստեղծագործություններից
սեղ են գտել Ազգային
դասկերասահի հավաքածուի
մեջական ցուցադրությունում եւ
համարվում են մայր թանգարանի
հայ արվեստի հավաքածուի
ուճազալ մմուսներից:

20

րդ դարի սկզբին հայկական կերպարվեստ մուտք էին գործել նկարիչներ, որոնք իրենց ինքնատիպությամբ եւ բարձրարժեք գործերով ազդարարեցին հայ գեղանկարչության մոր փուլի մասին: Հայ արվեստագետներն արդեն մասնակից էին արվեստի համաշխարհային միտումներին, սակայն Հայաստանի խորհրդայնացմամբ կարծես նրանք պիտի «հեռացվեին» գլոբալ զարգացման գործընթացներից: Բռնապետության մամլիչը անհանդուրժող էր որեւէ իզմի կամ մոր ուղղության նկատմամբ, որը ծնված էր արեւմուտքում: Գաղափարական մեկնաբանության տարիներին, որից սկսվում էին պահանջներն ու կատեգորիկ մեթոմները, կորսվեց մի հսկայական ներուժ, որի ստեղծագործական դրսեւորումները խլացվեցին: Սակայն ճշմարիտ արվեստը որքան էլ ճնշվեր, զսպվեր, միեւնույն է, պիտի առկայծեր: Հանրությանը քաջածանոթ տաղանդավոր արվեստագետները դարձան հայ գեղանկարչության նորագույն շրջանի ավանգարդը: Մ. Սարյան, Հ. Կոջոյան, Վ. Գայֆեճյան, Ս. Առաքելյան անունների հետ էր նաեւ Հովհաննես Տեր-Թադեւոսյանը, որն իր ողջ կյանքը նվիրեց կերպարվեստին, մատաղ սերնդի դաստիարակմանը, գեղարվեստական կրթության հիմնադրմանը:

Ծնվել է 1889 թ. Երեւանում: Սովորել է հոգեւոր ճեմարանում, երգել մեծ Կոմիտասի հետ: 13 տարեկանում հաճախել է Պետերբուրգից եկած Ն. Ա. Ռոտի նկարչական ստուդիան եւ մասնակցել նրա ղեկավարած Երեւանի ուղղափառ եկեղեցու զարդանկարման աշխատանքներին: Հետո սովորել է Թիֆլիսի գեղարվեստական ուսումնարանում Եղ. Թադեւոսյանի, Բ. Ն. Ֆոգելի, Մ. Թոխձեի մոտ: Ուսումը շարունակել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ուսումնարանում Ա. Մ. Վասնեցովի, Կ. Ա. Կորովինի մոտ:

1912 թ. վերադառնում է Երեւան, որտեղ եւ կազմակերպվում է նրա առաջին անհատական ցուցահանդեսը: Այնուհետեւ լինում է Տրապիզոնում, որտեղ կատարում է իր ստեղծագործության մեջ հատկանշական տեղ զբաղեցնող նկարների շարքը:

Ուսումն ավարտելուց հետո մեկնում է Սամարղանդ եւ կազմակերպում նկարչական դպրոց: Այս ընթացքում լինում է Երեւանում եւ Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Ս. Առաքելյանի, Վ. Գայֆեճյանի հետ մասնակցում գեղարվեստական տեխնիկումի հիմնադրմանը: 1927-ին Մոսկվայի գեղարվեստական ինստիտուտն ավարտելուց հետո վերադառնում է Սամարղանդ: Հիմնականում ապրել եւ ստեղծագործել է Ուզբեկստանում, համարվում է Միջին Ասիայում մոր գեղանկարչության հիմնադիրներից:

Հովհաննես Տեր-Թադեւոսյան

Հայ մտավորականները սեղանի շուրջ: Աջից՝ Տեր-Թադեւոսյան ամուսինները:



Ծննդյան 115-ամյակը (1889-1974)

Իհարկե, վաստակաշատ նկարիչն ավելի համարձակ կարող էր արտահայտվել ինքն իր մասին քան «աշխարհընկալմամբ եւ գեղագետ եմ»: Հովհաննես Տեր-Թադեւոսյանը բնության երեւոյթներին սիրահարված արվեստագետ էր: Գեղանկարչությունը նա համարել է երգ բնության եւ ողջ կյանքում աշխատել է ռեալիստական մոտեցմամբ: Խորամուխ լինելով բնության հրաշք առեղծվածի մեջ՝ նա ընդգծել է երեւոյթների անկրկնելիությունը: Աշխատելով բաց օդում (պլեներ), իմպրեսիոնիստական մեթոդներով՝ ձգտել է ցուցադրել շրջապատի կոնկրետ տեսարանի ճշմարտացիությունը: Եւ այդ ամբողջում կա գեղեցիկ պոետականացման միտում, ընդ որում, նա շատ կարեւորել է էմոցիոնալ ընդգծումը:

Նկարչի ողջ ստեղծագործությունը կարելի է բաժանել մի քանի շրջանների, որոնցից յուրաքանչյուրում, պահպանելով հիմնականը, աշխատել է յուրովի: Ամենահարապուրիչը վաղ, այսպես կոչված, «իմպրեսիոնիստական» շրջանն է, որն ընդգրկում է տրապիզոնյան եւ վաղ սամարղանյան շարքը: Այս հորինվածքներն ավելի սեղմ են, վրձնահարվածները՝ հյութեղ եւ նյութական ընկալողականությամբ, գեղանկարը թանձր է եւ ամուր, գույներ՝ ավելի լուրջ: Այս շրջանին ամենաբնորոշը առատ լույսն է, ինչն իհարկե չի վերանում հետագայում եւս: Լույսի եւ օդի առատությամբ սովորները տրված են շատ նուրբ, եւ ամենուր հուզականությունն է:

Արդեն միջինասիական շրջանում նկատելի է թեթեւակի դեկորատիվությունը: Այս ժամանակահատվածում ստեղծված գործերը նրբին հիշեցնում են մեր «Միր իսկուստվա»-յի կերպարները, մեր պարսկական մանրանկարի տեղեկեցները: Հետագայում արդեն նկատելի են Սեզանի ուսումնասիրության ազդեցությունը եւ հետադարձ հեռանկարի մեծացումները: Անշուշտ, այս շրջանին հատուկ է տեղական կենցաղի առանձնահատկությունների շեշտադրումը լույսի եւ գույնի էֆեկտի օգտագործումով: Հորինվածքի տեսակետից գրեթե նույն հանդարտ ձգվող դիման է, նաեւ սիմետրիկ բաշխումը, զոհ նրբին մանրայնով հարթապատկերային լուծումը:

Հովհաննես Տեր-Թադեւոսյանը անտարբեր չէր երկրում տեղի ունեցող եւ ոչ մի դեպքի նկատմամբ եւ խանդավառությամբ է >42

«Վան-Վասթուրական» հայրենակցական միության
օգոստոսին կազմակերպած ճամփորդությունը
Թուրքիա սովորական ուղևորություն չէր,
այլ ուխտագնացություն դեպի նախնայաց երկիր եւ նվիրված
էր աշխարհառչակ հայ գեղանկարչի Արեւի Գորկու
(Ոսանիկ Աղոյան) ծննդյան 100-ամյակին:
Դա եզակի հնարավորություն ընձեռեց մտավորականներից
կազմված մեր խմբին սեփական աչքերով տեսնելու այն
հրաշքը, որ «Էրզիր» է կոչվում:

Արտասվելու չափ գեղեցիկ է Արեւմտահայաստանը:
Եղեռնից հետո փաստորեն միայն բնությունն է այստեղ ամխա-
թար մնացել: Անցնելով Բասենի ու Մշո դաշտերով, Կարսի եւ
Բինգյոլի սարահարթերով, հողե նեղ ու ահասարսուռ կեռման-



Կարսի բերդը (գծանկարները հեղինակի):

Լեվոն Լաճիկյան Ըողը՝ սիրոջն սոխառելիս

Ներով հասնելով Ծովասար եւ տեսնելով Սասնո բարձրիկ
մյուս սարերը՝ իրապես համակվում ես հզոր հայրենիքի գա-
ղափարով: Այսուայնտեղ բխող սառնորակ աղբյուրների ջուրը
խմելուց, Արտամետի անուշահամ խմորը համտեսելուց եւ
Վանա լճի զգլիչ տեսարանով հիանալուց հետո ես հասկա-
նում, թե ինչու մեր պապերն «Էրզիր» բառը շուրթերին հեռա-
ցան այս աշխարհից, եւ թե ինչու դրա կորստյան ցավը պատեց
նաեւ մեզ՝ հաջորդ սերունդներին:

Հայոց բնակավայրերից, սակայն, միայն անուններն են
մնացել: Կարին-Էրզրումում, օրինակ, աղբակույտի վերածված
Սանասարյան հայտնի վարժարանի կիսաբանդ շենքից բացի
հայկական գոնե մեկ շինություն կամ հնակառույց հնարավոր
չէրավ գտնել: Միայն վերջին օրը մեզ հաջողվեց մեկ կանգուն
եկեղեցի հայտնաբերել, որն, ավա՜ղ, վերածվել էր մզկիթի:
Նույնն էր պատկերը նաեւ Մուշի եւ Վանի պարագայում, որոն-
ցից դարձյալ լույս անուններն են մնացել. քանդված-ավերված
են հայկական տներն ու ամբողջական թաղամասերը, որոնք
փոխարինվել են ժամանակակից գունավոր եւ անդեմ շինու-

թյուններով: Ընդհանրապես, հեռավոր ու օտար երկրներում,
որտեղ երբեմն եղել են հայկական համայնքներ, ազգային
հիշատակներ որոնելն ու գտնելն ավելի դժուրին է, քան մեր
երեկվա երկրում կամ այսօրվա Թուրքիայում:

Այս իմաստով առավել շահեկան վիճակում է Կարսը, որը
տակավին հայադրոշմ է մնացել: Քաղաքաշինական առումով
այն, իրոք, Գյումրին է հիշեցնում: Հաճախ միեւնույն արհես-
տավորները երկուսում էլ կառուցել են իրենց նախասիրած ոճի
կամարակալ բնակելիներն ու քանդակազարդ քիվերով վար-
չական շենքերը: Ընդհանուր են եղել նաեւ այդ քաղաքներում
բնակվողների նիստ ու կացը, սովորույթներն ու ավանդույթնե-
րը, նաեւ զբաղմունքը: Նրանք եղել են հմուտ ոսկերիչներ, ար-
ծաթագործներ, քիթեղագործներ եւ քարտաշ-որմնադիրներ:
Դեռեւս 12-րդ դարում Ներսես Շնորհալիքն Կարսն անվանել է
«անմատույց դղյակ», իսկ քաղաքացիներին բնութագրել իր-
բեւ «ձեռնահմուտ» արհեստավորներ:

Հանելուկ է մնում, թե ինչպես Արեւելյան Հայաստանի
այդ ծաղկուն քաղաքն Անիի ավերակների հետ միասին հայտ-

շնորհների կամ փառք որոնելու համար չէր հայրենիք վե-
րադառնալու ցանկությունը: Սա բնական, ինքնաբերական
յուրաքանչյուր հային հասկանալի ձգտում է:

Մեծ արվեստագետը եղել է նաեւ տեսաբան: Շրջա-
պատող աշխարհի ռեալ պատկերը դիտողին «հասցնելու»
համար ոչ բավարար է համարել միայն տեսողական ընկա-
լումը: Երեւի այս հանգամանքն էլ դեր ունի, որ նրա աշխա-
տանքները երբեմն էտյուդային բնութագիր ունեն: Սակայն
թեմա-բովանդակության դաշինքը, յուրաքանչյուրն իր դր-
դապատմաներով եւ բաղկացուցիչներով, նրա ստեղծա-
գործությունների ամուր հիմքն է: Այսպիսին է եղել նրա հա-
մոգմունքը:

Այս տարի լրացավ Հովհաննես Տեր-Թադևոսյանի
ծննդյան 115-ամյակը: Հայրենիքում նրա ստեղծագործու-
թյուններից տեղ են գտել Ազգային պատկերասրահի հա-
վաքածուի մշտական ցուցադրությունում եւ համարվում են
մայր թանգարանի հայ արվեստի հավաքածուի ուշագրավ
նմուշներից:

Արմեն Գասպարյան
արվեստաբան, Հայաստանի ազգային պատկերասրահի
հայ գեղանկարի ենթաբաժնի վարիչ

նվեց Թուրքիայի կազմում: Հասկանում ես, իհարկե, որ դա հե-
տեւանք էր ռուս-թուրքական սիրախաղի: Հասկանում ես, բայց
մինչեւ վերջ չես կարող, ավելի ճիշտ՝ չես ուզում գիտակցել
կատարվածը: 1919 թ. մարտից Կարսի մարզը Հայաստանի
առաջին հանրապետության անբաժան մասն էր: Օգտվելով,
սակայն, Անդրկովկասում ստեղծված խառն իրադրությունից՝
քեմալական Թուրքիան, որ ձեռագրել էր հորհրդային Ռուսաս-
տանի բարեկամը, 1920թ. հոկտեմբերի 30-ին գրավեց Կարսը:
Թուրքերին օգնեցին հայ բոլշևիկները: Վերջիններս քաղաքի
պաշտպանների մեջ հետեւյալ բովանդակությամբ թռուցիկներ
էին բաժանում՝ ապահովելով նրանց դյուրին հաղթանակը.
«Եսկան է հասկացնել հանրապետական Հայաստանի գին-
վորներին, որ հաղթող թուրք ասկյարը հեղափոխական ասկ-
յար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որեւէ գործողություն
պարտված երկրի վերաբերյալ, այլեւ կօժանդակի աշխատա-
վոր հայ ժողովրդին՝ ազատվելու իմպերիալիստների գործա-
կալ դաշնակցականների տիրապետությունից»:

Իրականում թուրք-քրդական հրոսակներն անխնա կո-
տորեցին տեղացիներին: Շատերն էլ հարկադրված «թողեցին
Կարսն ու Կարսի այգին» (Եղ. Չարենց)՝ տեղափոխվելով հեռու
ու մոտ բնակավայրեր:


Կարսի բերդից ներքեւ, ժայռակոփ լեռան լանջն ի վար,
դարավանդածեւ մինչեւ համանուն գետն ու Վարդանի կա-
մուրջն են իջնում քաղաքի հին տները: Դրանցից շատերի դռ-
ներն այսօր գոց են կողպեղով, իսկ մյուսներում նոր տներն են
ապրում: Որպես բնիկ ժողովուրդ՝ հայերը բոլոր դարերում
կազմել են քաղաքի բնակչության գերակշիռ մեծամասնությու-
նը: Այսպես, 1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի
նախօրյակին, Կարսի 30 հազար 86 բնակիչներից 25 հազար
252-ը հայեր էին: Քաղաքի զարդը, իհարկե, եղել է մնում է 10-
րդ դարում (932-937թթ.) կառուցված Առաքելոց եկեղեցին, որ
Չարենցը համարել է հնամյա այդ քաղաքի զարմանքը: Փառա-
հեղ եկեղեցին կառուցել է Աշոտ Երկաթի եղբայր Աբաս թագա-
վորը: Մնալով Կարսում եւ այն դարձնելով երկրի մայրաքաղա-
քը՝ նա զարկ տվեց շինարարությանը: Ո՛վ կմտածեր, որ ան-
ցյալ դարավերջին՝ 1998թ. մայիսի 25-ին, քրիստոնեական այդ
տաճարը կվերածվի (սա՛ է զարմանքը) մզկիթի:

Ուշագրավն այն է, որ անգլերենով լույս տեսած Կարսի
մասին պատմող գրքույկում եւս կա Աբաս թագավորի (Abbas
Tekver) անունը, բայց չի նշվում, թե ո՞վ է նա, ի՞նչ ազգության
է պատկանել եւ այլն: Արեւմտյան Հայաստանի (իմա՝ Անատո-
լիա) բնակավայրերի մասին պատմող թուրքական պաշտոնա-
կան տեղեկագրերում բացակայում են «հայ» կամ «Հայաս-
տան» անունները: Լավագույն դեպքում, հայոց բնակավայրե-
րի եւ մեր ազգային կառույցների հիմնադիրներն ու հեղինակ-
ներն են հռչակվում ուրարտացիները կամ հռոմեացիները, իսկ
վատագույն դեպքում՝ սելջուկները: Կարելի էր այս ամենը ծի-
ծաղելի համարել, եթե չափազանց տխուր չլիներ...

Վերադառնալով Կարսի եւ կարսեցիների ներկա կյան-
քին՝ ասեմ, որ քաղաքում այսօր ապրում է մոտ 80 հազար բնա-
կիչ, որոնց մեծ մասն զբաղված է հողագործությամբ եւ անաս-
նապահությամբ: Հանդիպումս համանուն վիլայեթի մշակույթի
եւ զբոսաշրջության պատասխանատու Քեմալ Բեքիսի հետ
մեկ անգամ եւս հաստատեց կարսեցիների եւ վիլայեթի ողջ
ազգաբնակչության շահագրգռությունը հայ-թուրքական սահ-
մանի Գյումրու «դռան» բացման հարցում: Զրուցակիցս առա-
ջին հերթին սա բացատրեց առեւտրա-տնտեսական նկատա-
ռումներով: Բանն այն է, որ բնակիչներն ապրում են սոցիալա-
կան վատ պայմաններում: Քաղաքում չկա արտադրություն, եւ
այն հայտնվել է մեկուսացած վիճակում: Գործազրկության
հետ աճում է նաեւ արտագաղթը: Զբոսաշրջության մասին խո-
սելիս Քեմալ Բեքիսն ասաց, որ միայն 2004 թ. հուլիս ամսին
Կարս է այցելել 1320 մարդ աշխարհի տարբեր երկրներից, այդ
թվում են Հայաստանից: Ի դեպ, մեր խումբն իջեւանել էր քա-
ղաքի լավագույն՝ «Ղարաբաղ» երեստեղանի հյուրանոցում:
Այցելուների մեծ մասը, իհարկե, նախեստաց զալիս է տեսնե-

լու 45 կմ հեռավորությամբ գտնվող Անիի ավերակները: Իսկ
ծմեռային մարզածեւերի սիրահարներին գրավում է հատկա-
պես Կարսից 60 կմ հեռու գտնվող Սարիղամիշի ժամանակա-
կից մարզաբազան: Մի քանի տարի առաջ Կարսում եղել է
երկու կինոթատրոն, այսօր գործում է միայն մեկը: Համեմա-
տության համար նշենք նաեւ, որ 1880 թ. սեպտեմբերին այս-
տեղ կազմակերպվել է հայկական թատրոն, որտեղ ներկայաց-
վել են Մուխեթ, Սունդուկյան եւ Օստրովսկի, իսկ 1912թ. Ալեք-
սանդրապոլից հետո առաջինը Կարսում է բեմադրվել Ա. Տիգ-
րանյանի «Անուշ» օպերան՝ հեղինակի ղեկավարությամբ:
Մինչդեռ քաղաքում ներկայումս չկա որեւէ թատրոն կամ հա-
մերգասրահ: Միակ թանգարանի ցուցանմուշներն էլ հիմնա-
կանում հայկական ծագում ունեն. գորգեր, կարպետներ, խա-
չեր ու արծաթյա գոտիներ, Առաքելոց վանքի փայտյա դռները՝
հայկական արծաճագրություններով եւ այլն:

Թե՛ Կարսում, թե՛ այլուր հանդիպածս թուրքերը, իմանա-
լով ազգային պատկանելությունս, անմիջապես վրա էին բե-
րում. «Ինչ եղել-եղել է, անցել-գնացել է: Հիմա մենք եղբայրներ



Կարսի բերդը (գծանկարները հեղինակի):

ենք»: Նրանցից ոչ մի կերպ չէին ուզում հետ մնալ նաեւ մեր
քուրդ «բարեկամները»: Օրեր են անցել եւ մինչ իմա ինքս ինձ
համար չեմ կարողացել պարզել, թե ի՞նչ խոսքեր էին դրանք.
հին մեղքերի ուշացած զղջո՞ւմ, թե՛ կեղծ սիրալիրության մի
ավելորդ ցույց: Պատմական իրողությունը, սակայն, այն է, որ
արդեն 90 տարի էրզիրի առավոտներն անհայ են բացվում...

Ուղևորության ընթացքում եւ Կարսում, եւ Արեւմտյան
Հայաստանի մեր քաղաքներում ու գյուղերում պտղատու ծա-
ռեր գրեթե չտեսա: Երբ Մշո դաշտի գյուղերից մեկում մեր խմ-
բի անդամներից մեկը մի քուրդ ծերունու հարցրեց այդ մասին,
վերջինս խորանշանակ պատասխան տվեց. «Ծառ տնկողները
1915 թվականին հեռացան այստեղից»: Տասնամյակներ են
անցել եւ առանձնապես շատ բան չի փոխվել այդ կողմերում.
միայն պտղատու ծառերն են պակասել եւ ավելացել անմշակ
վարելահողերը: Այն, որ ոչ միայն մենք էինք կարոտել մեր հո-
դին, այլեւ վերջինս՝ մեզ, պարզ երևում էր դրա բացվելու ժա-
մանակ, երբ որպես նշխար վերցնելու համար խոնարհվում
էինք դեպի այն: Այդ կարոտն անհայտ էր նաեւ հայոց եկեղե-
ցիների ու վանքերի պատերի ներսում, որոնք անհագորեն
կլանում էին Հայաստանից ժամանած Տեր Տիրայր քահանայի
աղոթքների յուրաքանչյուր բառն ու նրա մատուցած խնկա-
հոտ պատարագների ամեն մի ելելէջը: Ավելին, երբ Կարսի այ-
գում ես մի բուռ հող վերցրի պապիս աճյունին շաղ տալու հա-
մար, դրանում նաեւ սպասման տրոփյունը զգացի: Այո՛, հայրե-
նի հողը շարունակում է ապրել՝ անհամբեր սպասելով իր տի-
րոջ վերադարձին...



**2002 թ. հուլիսին
օտերայի եւ բալետի
«Արամ խաչատրյան»
համերգասահունքի
ունեցավ շվեյցարահայ
Ներիկ Ազատյանի
հայկական
ավանդական
սարազների
ցուցադրությունը:**

**Մինչ այդ եւս 2 անգամ
1983 թ. եւ 1996 թ. նա
առիթ էր ունեցել
այցելելու հայրենի,
սակայն միայն այս
այցելությանն էր
«թանկարժեք բեռը»
հետք բերել:**



Կարո՞ցից հշուսված զգեսներ

Իրինա Բարսեղյան

Պատահաբար ծանոթացանք, սակայն հասցրեցինք մտերմանալ: Համոզվեցի, որ գործ ունեն հայրենական մի հայուհու, շնորհալի կնոջ հետ, որը ճակատագրի բերումով թեւ հայրենիքից հեռու է ապրում, սակայն հոգու նրբին թելերով շաղկապված է Հայաստանին, հայ ժողովրդի դարավոր անցյալին ու ներկային:

Ներիկ Ազատյանը (օրիորդական ազգանունը Շահնազարյան) ծնվել է 1950 թ. Թեհրանում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Մարիամյան դպրոցում, որն ավարտելուց հետո ծնոք է բերել բակալավրի աստիճան՝ հայերեն եւ պարսկերեն լեզուների գծով: Այնուհետեւ կրթությունը շարունակել է Թեհրանի անգլիական բարձրագույն դպրոցում: Վեց տարեկանից հաճախել է պարի դասերի: Ազգային ավանդապաշտ ընտանեկան դաստիարակություն, հայկական ժողովրդական ու ազգագրական երգ ու պար, ահա այն միջավայրը, որտեղ ծնավորվեց Ներիկը, որի համար ազգային արժեքների պահպանությունը առաջնային սկզբունք է եղել ողջ կյանքում:

22 տարեկանում ամուսնացել է թեհրանահայ Գրիգոր Ազատյանի հետ: 1976 թ. Ազատյանների ընտանիքը տեղափոխվել է Շվեյցարիա եւ բնակություն հաստատել Լոզանում, ապա՝ տեղափոխվել Ժնև:

1986 թ. Ազատյան ամուսինները Ժնևի հայկական եկեղեցուն կից հիմնեցին «Անի» հայկական ժողովրդական երգի-պարի համույթը, որը հետագայում անվանա-

կոչվեց «Սանահին»: Խմբի գործունեությունը նոր խնդիրներ առաջացրեց, որոնցից մեկը տարագի հայթայթումն էր: Ներիկը, անսալով մոր՝ Օֆելյա Շահնազարյանի խորհրդին, նրա օժանդակությամբ, պարախմբի համար հագուստ կարեց: Անդրանիկ նմուշները հուսադրող ու ներշնչող էին: 1996 թվականից տիկին Ներիկն աշխատեց Ժնևի հայկական կենտրոնի «Հակոբ Թովաթյան» միօրյա դպրոցում, որպես հայոց լեզվի, հայոց պատմության եւ աշխարհագրության ուսուցչուհի, այստեղ եւս պարախումբ հիմնեց, որի անդամների համար տարազներ էր կարում:

«Սանահինի» ելույթները Ժնևում եւ Շվեյցարիայի այլ քաղաքներում ուղեկցվում էին Հայաստանը եւ հայ ժողովուրդը ներկայացնող փոքրիկ բեմադրություններով, որոնց սցենարը Ներիկն էր գրում: Այսօր էլ բազմաթիվ են Ժնևի հայկական կենտրոնում Ներիկ Ազատյանի կազմակերպած միջոցառումները՝ նվիրված ազգային-ավանդական եւ եկեղեցական տոներին: Հայոց պատմության ու մշակույթի հետեւողական սերմանումով օտար ավերում բնակվող հային հայ պահել, ահա այն զերագույն նպատակը, որով միշտ առաջնորդվել է Ներիկը:

Տարազ կարելիս նա գիտելիքների պակաս էր զգում: Ժամանակի ընթացքում ուսումնասիրում է հայ տարագի պատմությունը: Այդ նպատակով մեկնում է Վենետիկ եւ Միսթրալյանների գրադարանում ուսումնասիրություններ կատարում: Դեռնոյ Ալիշանի, Վարդան Հացունու, Առաքել Պատրիկի աշխատություններից բաղելով իրեն հետաքրքրող տարազանմուշները, դրանց հիման վրա մեկը մյուսի հետեւից 1994 թ.-ից սկսած, անքուն գիշերների լարված, տքնաշան աշխատանքով կյանքի են կոչում հայկական ավանդական տարազները: 1996 թ. դրանց թիվը հասնում էր 8-ի, իսկ այսօր՝ 17-ի: Հավաքածուն ցուցադրվել է Ժնևում, Վիեննայում: Ցուցադրությանը զուգահեռ հեղինակն ընթերցում էր տվյալ քաղաքի կամ նահանգի համառոտ պատմությունը, որն ունկնդրին մտովի տանում էր հեռավոր նախնիների կորուսյալ երկիրը:

«Բանաստեղծն ասում է. «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ», իսկ ես՝ ինքս ինձ մտորում էի «Ցուցադրեմ հավաքածուն մայր հայրենիքում, այլեւս մահից վախեցող չեմ»,- մի առիթով խոստովանեց տիկին Ներիկը:

Քաջազ Քեչեղյան, Սաթենիկ Խաչիկյան...

Հայրենադարձ հայերի առաջին քարավանի համար բնորոշ, բայց եւ ինքնօրինակ ճակատագրով անհատականություններ... Ճանաչեցի նրանց «Արվեստ» ամսագրի խմբագրությունում աշխատանքի անցնելուց հետո՝ 1957-ին: Սաթենիկը ամսագրի գրագետ, բարեխիղճ ու բժախնդիր սրբագրիչ-ոճաբանն էր, Քաջազը՝ տպագրվող գեղանկարչական գործերի հմուտ գունամշակող-վարպետը: Բեյրութից էին եկել, ընտանիք կազմել ու բնավորվել մայրաքաղաքի մասիսահայաց շենքերից մեկի համեստ մի բնակարանում: Եթե, իհարկե, «համեստ» կարելի էր կոչել այն կացարանը, որ դարձել էր երեւանյան (եւ ոչ միայն) գեղարվեստական մտավորականության յուրատեսակ մի սալոն՝ Երվանդ Քոչարի, Պարույր Սեւակի, Մինասի, Կալենցների, Հակոբ Հակոբյանի, Ռուբեն Չարյանի, Լեւոն Հախվերդյանի, Կարպիս Սուրենյանի, Սուրեն Խաչատուրյանի, Գրաքիա Բաղդասարյանի, արվեստագետներ Շահեն Խաչատրյանի, Հենրիկ Իգիթյանի եւ այլոց հարազատ օջախը: Դա ճշմարիտ հայկական օջախ էր՝ հյուրընկալ ու ավանդապահ, ազգային դիմագծի ցայտուն արտահայտությամբ եւ երկրում սկսված «ճնհալով» ձերբազատվող ազատախոհության մթնոլորտով:

Տասնամյակների տարուից հետո այստեղ վերստին բարձրաձայնվում էր հայ, «հայություն», «ազգային դատ», «ազգային արվեստ»...

Ահա այդ «սալոնում» էլ պարզվեց Քաջազի առնչությունը կերպարվեստին՝ գեղանկարչությանը: Նա դեռ Բեյրութում էր սկսել նկարել, բայց շփումը հայրենի մշակութային արվեստագետների հետ ամրացրեց նրա վճիռը՝ նկարչությանը նվիրվել, նկարիչ դառնալ: Եվ դարձավ: Ու երբ ծանոթանում ես վերջերս երեւանում լույս ընծայված «Քաջազ» շքեղ պատկերագրին, համոզվում ես, որ դա լոկ սիրողական հետաքրքրության դրսեւորում չէր, այլեւ իր մարդկային էությունն արտահայտելու, իրեն հասնելու անդիմադրելի ձգտում՝ հիմնավորված բնատուր շնորհով:

Շնորհը՝ շնորհ, բայց արվեստում ասելիք պետք է ունենալ եւ ինքնության «վկայագիր»: Քաջազին արվեստ, նկարչություն բերողը կարոտն էր՝ ամեն հայի (ու մանավանդ տարագիր հայի) մեջ անթեղված կարոտը հայրենի հողի, նրա պատմության, ճակատագրի, ներկայի ու գալիքի հանդեպ: Այդ կարոտն էր



Քաջազը



նրան բերել Հայաստան, բայց չլքեց նրան նաեւ այստեղ, քանի որ տեսածն այն չէր, ինչպես սպասում ու պատկերացում էր: Հօգս ցնդեցին կորցրած հողերը հետ բերելու խոստում-հույսերը, եկվորները միամիտ «աղբարներ» հորջորջվեցի, եւ անվատահելի «բուրժուական» աշխարհից եկած կասկածելի անծիմք: Եւ Քաջազն իր ընտանիքով գնաց արտասահման:

Ու մնաց կարոտը Քաջազի, հայրենիք վերադարձած հայրուր հազարավոր հայերի սրտում, մնաց իբրեւ հուշ-պատրանք:

Եւ այդ կարոտը դարձավ գույն, դարձավ արվեստ, որով Քաջազն ասես բողոք է հղում աշխարհին. ախր ինչպե՞ս կարող են գերի մնալ Մասիսն ու Սիփանը, Անին ու բյուրավոր մեր սրբավայրերը՝ այս եկեղեցիները, խաչքարերը, այս լեռները, գետերը, հովիտները...

Դրանք Քաջազի վրձնի հպումներով կարծես թե սզո հանդերձ են հազնում ու թախծազին աղերսում՝ հիշել ու ազատել իրենց: Իսկ նախ՝ սիրել: Քաջազն ինքը սիրահարված էր պատկերած քար ու դաշտին, հող ու ջրին, այն ամենին, ինչից հայություն է բուրում, ինչը օտարված լինելով էլ մերն է՝ հարազատ ու բաղձալի:

Ճիշտ է նկատված, որ Քաջազի կտավներում չկան երկրորդական բաներ: Ամեն ինչ դրանցում կարելու է. >46



45> առաջնային ու հավասարապես հարազատ: Ասես չկան եւ «պլաններ». նկարիչը իր եւ դիտողի հայացքը միանգամից հառում է պատկերի բոլոր բաղադրիչներին վրա՝ լինի դա մարդ, կոթող, հասկ թե խոյակ, ծաղիկ թե ծառ, թռչուն թե խաչքար...

Քաջագի գործերը թեմատիկ ու ժանրային լայն շրջագիծ ունեն՝ մայրություն, աշխատանք, սեր, բնաշխարհ, պատմական հուշարձաններ, հնօրյա ու մերօրյա նշանավոր եղելությունների ու անձանց պատկերում, հայ մշակույթի երեւելիների դիմանկարներ, անդրադարձներ ժամանակի աշխարհացունց իրողություններին:

Ասացինք՝ կարոտի գույներ: Հարկ է հավելել նաեւ մեր մանրանկարչության, որմանկարչության, Հովնաթանյանների, Կոջոյանի, Սարյանի, Քոչարի, Մաեւ Սիմասի ու Հակոբ Հակոբյանի արվեստի՝ իր ընկալումներին համահունչ ներշնչումները: Այսպես ամբողջացավ Քաջագի գունաշխարհը, որը բնաբուխ մի երեւոյթ է: Ամեն պատկերում ինքն է՝ Քաջագն իր աշխարհում, ուր տիրում է բարոյությունը, գեղեցիկ երազանքը, սպասումը: Եւ հայի հեռավոր մենության ցանցկեն պատուհանից շողացող հավատի լույսը:

Քաջագը արվեստում հասել է ու հավատարիմ մնացել իրեն՝ իր անադարտ եւրոպային: Ու դրանով կատարել իր պարտքը այն հողի հանդեպ, որի ծնունդն է ու նվիրյալը: Կա՞ սրանից ավելի մեծ երջանկություն մարդու համար... Այս խոսքը դեռ չհրապարակած, Նյու-Յորքից հասավ բոքը՝ Քաջագը վախճանվել է...

Դե ինչ, խոնարհվենք նրա հեռավոր շիրմի առջեւ ու կրկին հավատենք այդ հայրենաբաղձ Հայի, գուլալ հոգու տեր մարդու, արվեստի նվիրյալի բացակա ներկայությունը մեր մշակույթում, մեր սրտերում...

Խաչատուր ԱՎԱԳՅԱՆ
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

Մեր

Սերոբ Գասպարյան. ծնվել է 1906 թվականին Սասունում: Եղեռնի ծանր տարիներին կորցնելով ծնողներին՝ ապաստան է գտնում հսնուս քաղաքի որբանոցում: Այդ օրերի մասին նրա հիշողությունները տեղ են գտել անվանի պատմաբան, ակադեմիկոս Ծատուր Աղայանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» գրքում. «1915թ., որը մնացած ժամանակս մի քանի ամիս զորավար Անդրանիկի զորքերի հետ, որպես գնդի երեխա, շրջել եմ Սասունում, Մուշի, Ալաշկերտի ընդարձակ ու անմոռանալի դաշտ ու հովիտը: Մենք՝ հազարավոր նախկին որբ երեխաներս, Անդրանիկի շնորհիվ ենք կոտորածից փրկվել: Անդրանիկի մասին շատ ու շատ պատկերավոր դրվագներ եւ նրա հայրենասիրական բարի կերպարը իմ հիշողության մեջ վառ ու քարմն են մնացել մինչեւ օրս»:

Մեծ զորավարը նկարչի պաշտամունքն է եղել: Սերոբ Գասպարյանի արխիվում պահպանվել են զանազան լուսանկարներ, տարբեր նյութեր նվիրված Անդրանիկին: Նկարիչը, որն օժտված էր բանաստեղծական շնորհքով, իր համեստ կարողությունների սահմաններում չափածո գեղեցիկ տողեր է նվիրել զորավարին.

Մանուկ եմ եղել, զորքիդ երեխան,
Արշավի ծամփին տեսել ամեն բան,
Սասնա սարերից մինչեւ Մշո դաշտ,
Հայոց սուրբ հողը արյունով ներկված:

Ճակատագիրը պատանի Սերոբին հսնուսից բերում է Լեւոնականի որբանոցը: Այստեղ պատի վրա կատարած ածխանկարը կարծես կանխորոշեց նրա կյանքի հետագա ուղին: Պատը կեղտոտելու թվացյալ հանցանքը փոխա-



Գասպարյան

Հատերն են

սիրում

արվեստը,

նվիրվում

այդ գործին՝

նկարում,

երգում,

գրում...

Բայց

բնության

աչքը

գտնում է իր

ընտրյալներին

ու վառում

կրակը

նրանց

հոգիներում:

տուգվեց գեղեցիկ նվերով՝ թղթով եւ մատիտով:

1921թ. լուսժողկոմ Ասքանազ Մռավյանի կարգադրությամբ Սերոբ Գասպարյանին ուղարկում են Վաղարշապատի տպարան, որ պիտի աշխատեր իբրեւ գրաշար: Բայց երբ 1923թ. տպարանը տեղափոխվում է Երեւան, արվեստատենչ երիտասարդը մոտենում է իր երազանքների իրականացմանը՝ ընդունվում է նկարչական դպրոց (վերջինս 1926-ին վերանվանվեց Գեղարդ տեխնիկում) եւ որոշ ընդմիջումներից հետո ավարտում այն 1930 թվականին:

1929-ին նա արդեն նկարիչների միության անդամ էր եւ ստեղծագործական եռանդուն աշխատանքի շնորհիվ մասնակցում հանրապետական ցուցահանդեսներին: Լինելով հայ կերպարվեստի դասական Հակոբ Կոջոյանի սանը, ուր էլ որ աշխատել է Սերոբը՝ լիտոգրաֆիայի արտադրամասի վարպետ, նկարիչ խմբագիր (1930-1939թթ.) եւ այլն, նա արդարացրել է ուսուցչի հույսերը: Հետագայում էլ, շարունակելով կապերը վարպետի հետ, միանշանակ կրել է նրա բարերար ազդեցությունն իր ողջ ստեղծագործական կյանքում:

1948-1950թթ. Սերոբ Գասպարյանն աշխատել է Հայաստանի նկարիչների միության գեղարվեստի կոմբինատի լիտոգրաֆիայի արտադրամասում եւ միաժամանակ ղեկավարել նկարչի տան կաբինետը: 1951-1954թթ. Երեւանի ժխախտի ֆաբրիկայում նա ծեւավորում է ծխախտի տուփերը, որոնք գեղարվեստական ճաշակով նկատելի են դառնում ողջ միությունում:


Նկարիչն աչքի է ընկել նաեւ հասարակական գործունեությամբ.

1932-1933թթ. եղել է քաղաքային խորհրդի ղեկավար, 1943-1944թթ. նկարիչների միության կուսկազմակերպության քարտուղար: Սերոբ Գասպարյանի՝ որպես նկարչի եւ գեղարտադրական աշխատանքի կազմակերպչի կարողության գաղտնիքներից մեկը նրա անսպառ սերն էր շրջապատի եւ հայրենիքի նկատմամբ:

Նկարիչն ունեցել է երկու անհատական ցուցահանդես՝ 1942 (76 աշխատանք) եւ 1947 (80 աշխատանք) թվականներին: Վերջինը նկարչի ստեղծագործական գործունեության հանրագու-

Բնությունը ստեղծում է մարդուն, որդեսգի նրա միջոցով ճեսնի իրեն, հմայվի իր հրաշ գեղեցկությամբ:

Սարսիրու Սարյան



մարն էր: Նրա վարպետությունը, ոճական հասունացումը թեւ ընթացել են դանդաղ, բայց եղել են հաստատուն: Ինչու էլ որ նա նկարել է, լինի յուրաներկ, գուլալ թե ջրաներկ, եղել է նրա կարողության ու վարպետության վկայությունը: Մեզ հասած փոքրաթիվ գործերից յուրաքանչյուրում ակնառու են անկեղծությունը եւ զգացումի պոռթկումը: Ցավոք, գործերի զգալի մասը չունի թվագրություն եւ անվանում, դրանք նվերներ են հարազատներին կամ մտերիմներին: Սա եւս խոսում է նկարչի բնավորության մասին: Պակաս արժեքավոր չեն նաեւ նկարչի վիճագրությունները:

Բնանկարները հիմնականում աշնանային տեսարաններ են. գյուղամերձ ծառատառներ, ոսկե աշնան առանձին դրվագներ, փոքրիկ բացատներ, անտառափեր... «Մրգատու ծառեր» կտավը հյութեղ է եւ ամուր օժիված, գույների ներդաշնակությունը սիմֆոնիա է հիշեցնում: Նույն ուժգնությունն ունեն նաեւ գյուղական տնակները: Ավելի մուգ տոներով արված «Ուշ աշուն» բնանկարում ցրտից սեւացող տերեւաբախ ծառերը շարժվող ամպերի ֆոնի ներքո ինչ-որ թախծոտ խոհականության>48



47> տրամադրություն են ստեղծում: Նկարչի արտահայտչամիջոցները պայմանավորվում են ոչ այնքան երեակայության, որքան բնության թելադրանքով: Նկարիչը հազարավոր թելերով կապված է բնության հետ եւ բնությունից անջատ ձեւական խնդիրներ չի դնում իր առջեւ:

Պլեներային թեթեւ ու թափանցիկ տրամադրությամբ են ստեղծված «Տերեւների սիմֆոնիան» եւ «Պուրակն աշնանը» կտավները. բնության ամենամուրբ վիճակներ, որոնք դիտողի առջեւ բաց են անում տարածական եւ գունալուսային գրավիչ պատրանքներ:


Ձմեռային բնապատկերները, կարծես, արտահայտում են եղանակի պահերը՝ ուշ աշնանայինից մինչեւ խոր ձմեռ: Թվում է, թե այն բնորոշ չէ հարավային երկրի հաճելի ու խոնավ ձմեռվան, պատճառը տաք երանգների առկայությունն է: Ռեքիսյան խորհրդապաշտություն կա «Արագածի գագաթը» նկարում. ընդամենը մի քանի գույնով նկարիչը ստեղծել է տպավորիչ եւ լարված պահ:

Սերոբ Գասպարյանը իր կարողությունները փորձել է նաեւ վերացականության հասնող լայն ընդհանրացումների մեջ՝ ստեղծելով գունապլաստիկ տպավորիչ մակերեսներ: Միայն ցավ եւ զգում, որ շնորհաշատ նկարիչի շատ քիչ գործեր են պահպանվել ... Կյանքն անվերապահորեն սիրող նկարիչը հեռացավ մեզանից 1992թ.՝ թողնելով արվեստի հոգեթով գործեր:

Անգին ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայաստանի ազգային պատկերասրահի հուշագրածեռագրային բաժնի վարիչ

Լեւոն Առաքյան



«Սիր էլի նկարչությունը հորինվում է իմեն իրեն, անկախ արժանացումներից ու ձեւերից: Ի՞նչ է նա նկարում: Ավելի շատ իրերի խորքը եւ դրաման, քան թե եզրագծերը: Նրա ծաղիկները եւ երկինքները «կեցվում են» գունային ներդաշնակ սիմֆոնիայով: Նկարչի կտավները մտերիմ մարդու հրաշալի գործեր են, լույսի շոն: Ոչինչ չի կարող սսվեթել այս արվեստի՝ նյութից ու լույսից հյուսված հմայքը»:

**Ժան-Մարի Տասե
«Ֆիգարո» թերթի արվեստի մեկնաբան**

Ծնվել է 1932 թ.-ին, ապրում եւ ստեղծագործում է Ֆրանսիայում: Համարվում է նկարչության մեջ «ԱՐԴԻ ԿԼԱՍԻՑԻԶՄ» ճյուղի հիմնադիրն ու ներկայացուցիչը: Մասնակցել է 170-ից ավելի ցուցահանդեսների՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Հոլանդիայում, Հունաստանում, Բելգիայում, Շվեդիայում, Չեխիայում, Շվեյցարիայում, Կորեայում: Նրա արվեստի մասին կարծիքներ են տպագրվել արդի արվեստին վերաբերող 12 գրքերում եւ տարբեր երկրներում հրատարակվող մշակութային հանդեսներում:

Սիր էլն աճուրդներ է կազմակերպել ի նպաստ 88-ի երկրաշարժից տուժած հայ մանուկների: Աջակցել է հայ նկարիչների Փարիզում բացված «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՏԱՆԸ»: Նրա կազմակերպած «ԿԵՆԱՑ ԳՈՒՅՆԵՐ» ցուցահանդեսները, որոնց մասնակցել են շուրջ 100 հանրաճանաչ նկարիչներ, ազդեցություն են ունեցել ֆրանսիական ու եվրոպական որոշ երկրների կառավարությունների վրա (Իսպանիա, Չեխիա) Հայոց ցեղասպանության ճանաչման ու ընդունման գործում:

Վերջին տարիներին նկարիչը համագործակցում է Գաբ Հեմազ ընկերության հետ, որն ըստ նկարիչների գեղանկարչական ստեղծագործությունների, պատրաստում է ժամանակակից գորգեր: Սեպտեմբերին ընկերությունը խոշոր ցուցահանդես էր կազմակերպել Հայաստանի ազգային պատկերասրահում, ներկայացնելով նաեւ Սիր էլի նկարների հիման վրա պատրաստված գորգեր: Նկարիչը մասնակցում էր ցուցահանդեսին:

Sir L.

L'éclat du soir



La beauté et la grâce



Pompons et volutes



Vent d'orage

Seyran Gasparyan



Դրախտում, կարճը, յուղաներկ, 50x60 սմ, 2003թ.



Ստիսակ ռեֆիկ, կարճը, յուղաներկ, 60x50 սմ, 2003թ.



Երազում մեր գլուխը, կավ, յուղաներկ, 80x70 սմ, 2003թ.



Սեյրան Գասպարյան

Ծն. 1956 թ. Հայաստանի Ախուրյանի շրջանում: 1979-ին ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի ուսումնարանը (ուր այժմ դասավանդում է), 1985-ին՝ Երևանի գեղարվեստի ինստիտուտը: ՀՀ նկարիչների միության եւ «Մոմիկ» միության անդամ է:

ԽՄԲԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՅԱՆՈՒՄՆԵՐ

- 1983 - Հանրապետական ցուցահանդես Հայաստանի նկարչի տանը
- 1984 - Երիտասարդական հանրապետական ցուցահանդես Նկարչի տանը
- 1985 - Հանրապետական ցուցահանդես «Աշուն-85» Սարգարապատի թանգարանում
- 1985 - Հաշվետու երիտասարդական ցուցահանդես Նկարչի տանը, նվիրված ապրիլի 24-ին
- 1986 - Դեկորատիվ աշխատանքների ցուցահանդես Սարգարապատում
- 1987 - Հանրապետական հորեյլանական ցուցահանդես, նվիրված հեղափոխության 70-ամյակին
- 1987 - Երիտասարդական ցուցահանդես ճարտարապետների միությունում
- 1988 - Հանրապետական ցուցահանդես Նկարչի տանը
- 1989 - Հանրապետական ցուցահանդես, նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակին Նկարչի տանը
- 1990 - Սումգայիթի զոհերի հիշատակին նվիրված դեկորատիվ աշխատանքների ցուցահանդես Սարգարապատում
- 1990 - Հանրապետական ցուցահանդես Նկարչի տանը
- 1991 - Հայ վեց նկարիչների ցուցահանդես «Հայկական գույներ» խորագրով, Կանադա (Տորոնտո)
- 1991 - Միջազգային ցուցահանդես, Ռուսաստան (Մուրմանսկ)
- 1992 - «Էքսպո-92» ցուցահանդես-վաճառք, Պերմանիա (Լայպցիգ)
- 1994 - Ցուցահանդես «Թեքեյան մշակութային ֆոնդի» նախաձեռնությամբ, նվիրված Հովհ. Թումանյանի 125-ամյակին
- 1996 - Փալերեա «ԱՐՏ» ցուցահանդես՝ «Երեք արվեստագետներ», Երևան
- 1997 - Հայ ժամանակակից նկարիչների ցուցահանդես Մոսկվայում
- 1997 - Պետական պատկերասրահում կազմակերպված խմբակային ցուցահանդես, նվիրված Ս. Էջմիածնի տոնին, «Մոմիկ» միություն
- 1997 - «Մկրտչյան գալերեա»-ի եւ Բելգիական «Ստուդիո 22» գալերեայի կազմակերպած ցուցահանդես, Բելգիա (Անտվերպեն)
- 1997 - Ծաղկածոր, «Հայաստան երկիր-ուխտավայր», «Մոմիկ» միություն
- 1999 - Եղեգնածոր, նվիրված Նորավանքի օծմանը, «Մոմիկ» միություն
- 1999 - Ցուցահանդես, ԱՄՆ (Լոս Անջելես), կազմակերպիչ՝ «ԿԱՍԷ» հիմնադրամ
- 2000 - Մեկական աշխ. ցուցահանդես Նկարչի տանը
- 2001 - 1700-ամյակին նվիրված ցուցահանդես Նկարչի տանը
- 2004 - «Մոմիկ» կենտրոնի ցուցահանդես, Կանադա (Մոնրեալ, Վանկուվեր, Տորոնտո)

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆՈՒՄՆԵՐ

- 1991 - Ցուցահանդես «Ենթագայրոնկտ» ֆիրմայի սրահում, Հարավսլավիա (Բելգրադ)
- 1992 - Լեհաստանի Վարշավա քաղաքի ցուցասրահայիններում, «Արմես» ընկերության հրավերով
- 1993 - Լեհաստանում (Գդանսկ) «Առկա» գալերեայի հրավերով
- 1996 - Ուկրաինայում, Կիևի «Ալիպի» տուն գալերեայում
- 1998 - Երևանում «NJR» սրահ
- 1999 - Ֆրանսիա (Վալանս), «Հեմագս» ընկերության հրավերով

Արարան Իրիկնամունի

Երևանյան վերնիսաժով շրջելիս ես մի հետաքրքիր երկխոսության ունկնդիր դարձա: Ուշադրություն գրավեց երիտասարդ արեւմտահայ գրոսաշրջիկը, որը գրուցում էր մի ալեհեր նկարչի հետ:

Սա ի՞նչ սար է, - հարցրեց գրոսաշրջիկը՝ հայացքը հառած նկարին:

Արարատն է, - լսվեց նկարչի պատասխանը: Զրոսաշրջիկը մի պահ ուշադիր քննեց նկարը, ապա զարմացած աչքերը ուղղեց նկարչին:

- Մի՞թե այն այսպիսին է, ես այսպիսի Արարատ չեմ տեսած:

Ես միանգամից մտաբերեցի, թե ինչ նկարներով է Արարատը պատկերացնում հեռավոր ափերում ապրած մեր հայրենակիցը՝ բարդիով, խոր վիրապով, արահետով կամ գետով, արեւաշող ու կապույտ երկնքով:

Նկարիչը տխուր աչքերը դարձրեց երիտասարդին եւ պատասխանեց.

Այսպիսի Արարատ տեսնելու համար պետք է նրա հետ իրիկնամուտ ապրել: Այս Արարատը չճանաչելը նույնն է, ինչ լույսով տեսած մարդուն երեկոյան չբարեւելը: Տարիներ առաջ, երբ ես հարկադրված չէի նկարների վաճառքով ապրուստի փող վաստակել, այլ դասավանդում էի արվեստի պատմություն, Արարատին նայում էի աշխատանքի գնալիս եւ տեսնում էի ծեր իմացած Արարատը, իսկ հիմա հիմնականում Արարատին նայում եմ տուն վերադառնալիս ու տեսնում եմ այս նկարին պատկերված Արարատն իրիկնամուտին:

Արմինե Հակոբյան
14 տարեկան

ԱՐՎԵՍՏ art magazine **ԻՆՏԵՐՆԵՏԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ**
www.arvest.am

«ԱՐՎԵՍՏ» ինտերնետային ամսագիրը բողարկում է Հայաստանի կինոգեոմերի եւ կինոլրագրողների ասոցիացիան, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի ֆինանսավորմամբ: Վերջին նորացումը կատարվել է այս տարվա հոկտեմբերին: Կայքում կարելի է տեսնել բավականաչափ հետաքրքրական նյութեր, մասնակցել քննարկումների: Նախագծի ղեկավարն է Սուսաննա Հարությունյանը, գլխավոր խմբագիրներ՝ Ռուզան Ջաքարյան եւ Միքայել Ստամբուլյան:

2004 թ. հունիսի 25-ին կյանքից հեռացավ Տիգրան Լեւոնյանը՝ արդի հայ մշակույթի վառ անհատականություններից մեկը, վաստակաւոր օտերային երգիչ, ռեժիսոր ու նաեւ, բառիս բուն իմաստով, ԶԱՂԱԶԱՏԻ: Ստեղծելով ճանաչվող գործերը նրա վերջին հրապարակումն է, Նվիրված Լեւոն Լաճիկյանի «Անլույս օրերի ոգեղեն դողանքներ» գրքին (Երևան, 2004): Անկախության բռնադատման իրականությանը ֆաշիստական տիրապետության ժամանակահատվածում, հասկանալու համար Տիգրան Լեւոնյանին: Արվեստաբան լրագրողի ժողովածուն ներկայացնելիս նա կարողացել է ճշմարտությունը և մահվան մահաճակատը պայթյունի մոտեցնել օրերի այն ոգեղեն լույսը, որը զարմանալիորեն դժվարությամբ է նկարագրվում այսօր...

Տիգրան Լեւոնյանն իր վերջին գրախոսականի համար զարմանալիորեն ընտրել է մի վերնագիր, որը լիովին կարող է վերաբերել նաեւ հենց իրեն:

Ոգեղեն դողանքների ժամհարը

Արվեստաբան-լրագրող Լեւոն Լաճիկյանի «Անլույս օրերի ոգեղեն դողանքներ» գիրքն էլ առ էլ են ընթերցել էլ մինչև դրա լույս աշխարհի գալը: Զարմանալի ոչինչ չկա. ուղղակի այն կազմող հոդվածների մեծ մասն ինձ քաջածանոթ էր «Ազգ» օրաթերթի էջերից՝ տպագրված 1992-94 թվականներին: Հետաքրքիր էր, սակայն, դրանք կրկին վերընթերցել՝ արդեն որպես մեկ ամբողջություն, որ երևան է հանում տասնամյա վաղեմության մեր մշակութային կյանքի ճշմարիտ ու հավաստի պատկերը:

Այո՛, առանց չափազանցության բարեբախտություն էր հայ մշակույթի գործիչներին եւ ընդհանուր վերցրած մեր մշակութային կյանքի համար, որ հազվագյուտ ազգանունով եւ նույնքան էլ նուրբ ճաշակով այս երիտասարդ գեղագետը ձեռքն առավ մշակութային մեկնաբանի գրիչը եւ գիտական գործունեությանը զուգահեռ ստանձնեց մշակութային ժամանակագրի բարդ ու պատասխանատու դերը:


Արվածը ճիշտ գնահատելու համար արժե մի պահ մտովի վերադառնալ այն օրերը, երբ արցախյան ազատամարտի թե՛ մարտերն էին մղվում ռազմի դաշտերում, իսկ ժողովուրդը գոյատևման պայքարի իր ամենօրյա «կռիվն» էր տալիս: Այդ տարիներին, երբ գրեթե չկար ռադիո եւ հեռուստատեսություն (ավելի ճիշտ՝ դրանց սահմանափակ եթերից օգտվելու հնարավորություն), երբ հացի հերթերին չէին զիջում օրաթերթերի սպասող մարդկանց շարքերը, ռեյտինգային էին համարվում երկիր ներկրվող էներգակիրների, ալյուրի պահուստային պաշարների, պարբերաբար պայթեցվող զազատարների եւ արտադրվող էլեկտրաէներգիայի չափերի մասին պատմող լուրերն ու հաղորդումները: Եվ ահա, նույն այդ օրերին ու տարիներին, այսօրվա պես հիշում եմ, «Ազգ» օրաթերթի յոթերորդ էջի վերնամասում մեկը մյուսին էին հաջորդում «Լեւոն Լաճիկյան» ստորագրությամբ հոդվածները, որոնք դարձյալ «լույսին» էին վերաբերում, բայց արդեն՝ հոգեւոր: Դրանք բազմա-հազար ընթերցողներին իրազեկում էին մեր գեղարվեստական առօրյայի մասին, վառ պահում մշակույթի ջահն անլույս այն օրերում: Արվածը, իմ խորին համոզմամբ, պարզ լրագրություն չէր, այլ արվեստաբանություն պարբերական մամուլի էջերում:

Մշակույթի վերաբերյալ շատերն են գրել եւ էլի կգրեն: Սակայն միշտ էլ եղել են այն կարծիքին, որ արվեստի, մշակույթի մասին ընդհանրապես ոչ բոլորը պիտի գրեն: Միայն նրանք, ովքեր նախ՝ սիրում, ապա՝ հասկանում են արվեստը: Լեւոնի հոդվածներն առանձնանում են հենց այդ երկուսի ներդաշնան միասնությամբ: Արդյունքում՝ ընթերցողը սպասում էր (այսօր եւս սպասում է) նրա հոդվածներին: Մի գնահատական, որ բարձրագույնը կարող է համարվել որեւէ հեղինակի համար:

Կրկին վերադառնալով մեկ տասնամյակ հետ՝ այսօրվա հեռավոր ինքը թեզ պարզում ես, որ մեր ազգային գոյապայքարի եւ ինքնության վերահաստատման կռիվը արցախյան ռազմաճակատից գալիս մղվում էր նաեւ մեր հոգու անափ տարածություններում: Եվ երկու ճակատներում տարած հաղթանակները վստահաբար փոխակապակցված են եղել, ավելի՛ն՝ փոխալսամանավորել են միմյանց: Այսօր շատերին թվում է, թե այն ցուրտ ու անլույս տարիներին գեղարվեստական կյանքի տրոփյունը մեզանում կանգ էր առել: Մինչդեռ Լեւոն Լաճիկյանի այս գիրքը գալիս է վկայելու հավանական մասին: Այն պարզորոշ ցույց է տալիս, որ այդ «աներգ» օրերին եւս երգ է հյուսվել, բառ ու բան ստեղծվել: Ընդ որում, դրանք իրենց էությունով, որպես կանոն, ոգեղեն էին ու մաքրամաքուր: Մուսաները չլռեցին, որովհետեւ այդպիսին էր հայ ոգու տեսակը: Եթե կուզեք, «Անլույս օրերի ոգեղեն դողանքներ» գիրքը հենց այդ ոգու մասին է, դրա հրաշագործ արարումների ու հրաշագործող վարպետների մասին: Հայաստանի նորանկախ հանրապետությունն այդ տարիներին նաեւ ստեղծագործաբար կայանալու առաջին լուրջ քայլերն էր կատարում: Ներկայացվող գիրքն այդ քայլերի վավերական պատմությունն է՝ գրված մասնագետի վարպետ գրչով:

Զարմանում ես, թե ինչպես է հեղինակը հավասար հմտությամբ եւ խորագիտությամբ գրում քի տրոփյունը մեզանում կանգ էր առել: Մինչդեռ Լեւոն Լաճիկյանի այս գիրքը գալիս է վկայելու հավանական մասին: Այն պարզորոշ ցույց է տալիս, որ այդ «աներգ» օրերին եւս երգ ու տաղ է հյուսվել, բառ ու բան ստեղծվել: Ընդ որում, դրանք իրենց էությունով, որպես կանոն, ոգեղեն էին ու մաքրամաքուր: Մուսաները չլռեցին, որովհետեւ այդպիսին էր հայ ոգու տեսակը: Եթե կուզեք, «Անլույս օրերի ոգեղեն դողանքներ» գիրքը հենց այդ ոգու մասին է, դրա հրաշագործ արարումների ու հրաշագործող վարպետների մասին: Հայաստանի նորանկախ հանրապետությունն այդ տարիներին նաեւ ստեղծագործաբար կայանալու առաջին լուրջ քայլերն էր կատարում: Ներկայացվող գիրքն այդ քայլերի վավերական պատմությունն է՝ գրված մասնագետի վարպետ գրչով:

Զարմանում ես, թե ինչպես է հեղինակը հավասար հմտությամբ եւ խորագիտությամբ գրում



արվեստի գրեթե բոլոր տեսակների մասին՝ գրականություն, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, թատրոն, կինո եւ այլն: Հայտնաբերում ես, սակայն, որ այնուամենայնիվ նրա նախասիրած արվեստի տեսակներն են կերպարվեստը եւ օպերան: Մի քիչ վերջինիս մասին:

Հիշում եմ «Ազգ»-ի 1992 թ. հոկտեմբերյան համարներից մեկը, որտեղ հետաքրքիր ու իմաստալից հոդված կար՝ «Օպերա, օպերա» վերնագրով: Այն անդրադարձ էր մեր երաժշտական մայր թատրոնի, նոր թատերաշրջանի բացմանը եւ այդ կապակցությամբ բարձր գաղափարների ու գործնական առաջարկների մի ամբողջական ծրագիր էր պարունակում: Հեղինակը Լեւոն Լաճիկյանն էր: Հետագա հոդվածներից մեկում նա առաջարկեց մեր թատրոնի կամերային նորաբաց դահլիճը կոչել «Հայելապատ»: Ես անմիջապես կարգադրեցի ան-

վանափոխել այն՝ կոչելով Օպերայի եւ բալետի ազգային թատրոնի Հայելապատ սրահ: Այդ առիթով էլ կայացավ մեր առաջին համադիպումը: Երիտասարդ գեղագետի մոտ ես ոչ միայն նկատեցի մեր օպերային արվեստի պատմության խոր իմացություն, այլեւ դրական իմաստով շահագրգիռ մոտեցում հայկական օպերայի վաղվա օրվա հանդեպ:

Դառնալով համերգային հիշյալ սրահի կնքահայրը՝ Լեւոնն այդուհետ հետեւողականորեն լուսաբանեց եւ մեկնաբանեց այդտեղ տեղի ունեցած համերգների ու տարաբնույթ միջոցառումների մեծ մասը: Մի կարեւոր նկատառում. ի տարբերություն որոշ արվեստաբանների, որոնք իրենց ողջ կյանքում գրել են այսօր էլ գրում են իրենց նախասիրած մեկ կամ, լավագույն դեպքում, երկու արվեստագետի մասին (ընդ որում՝ հանրահայտ եւ արդեն դասական դարձած), Լեւոնն առաջինն եղավ մեզանում՝ գրելով մեր նորահաս գեղարվեստական սերնդի աչքի ընկնող շատ ներկայացուցիչների մասին. երգիչներ Աննա Մայիլյան, Արա Ավանյան, Ջուլիետ Գալստյան, Վաղարշակ Օհանյան, Լիանա Մարյան, Արմեն Կարապետյան, բալետի պարուհի Դիմիտրի Բաղդասարյան, ջութակահարուհի Մարինե Բիսյան, դաշնակահարներ Միքայել Բալյան, Անդրանիկ Ներսեսյան, բազում այլ նկարիչներ եւ արվեստագետներ:

Օպերայի՝ որպես թատերաերաժշտական առանձին ժանրի մասին եւս շատ-շատերն են գրել, հիմնականում՝ երաժշտագետներ: Մինչդեռ Լեւոնի հոդվածներում նկատելի է գեղագետի լայն հայացք, որն առավել հաճախ էր այդ ժանրի համադրական ոգուն, նրա բազմաթիվ հյուսվածքին: Այս իմաստով 1992 եւ դրան հաջորդած տարիներին մեր Օպերայի եւ բալետի ազգային թատրոնի արժանագրած անուրանալի հաջողություններում ես տեսնում եմ նաեւ Լեւոնի անձնական-ստեղծագործական մասնակցության դերը:

Գալով գրքի ընդհանուր բովանդակությանը եւ դրա երկու բաժիններին՝ պիտի ընդգծեմ, որ այն անվարան կարելի է համարել անցյալ դարի 90-ական թվականների մեր մշակութային կյանքի իսկական հանրագիտարան: Թե՛ «Մշակութային անդրադարձներ», թե՛ «Դիմանկարային էսքիզները» գրված են նախ եւ առաջ մեծ սիրով եւ պատասխանատվության զգացումով: Տպավորում են գրվածքների լեզուն եւ ոճը, մատուցման կուլտուրան, արվեստի մասին արվեստով գրելու ակնհայտ միտումը: Դրանք գեղագիտական ճաշակ են դաստիարակում եւ միաժամանակ արվեստի նոր երկեր ստեղծելու հասարակական պահանջ ձեւավորում: Ավելի՛ն՝ Լեւոն Լաճիկյանի «Անլույս օրերի ոգեղեն դողանքներ» գիրքը նաեւ դասագիրք կարող է ծառայել այն սկսնակ լրագրողների համար, որոնք կարդալով այն՝ կիմանան, թե ինչպե՛ս պետք է գրել արվեստի մասին՝ սիրով եւ խորագիտությամբ:

ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ
ՀՀ ժողովրդական արտիստ

«Աւխարհին դասնել հայկական երաժշտության մասին...»

Անահիտ Ցիցիկյանի գրի շնորհանդեսը

Լույս է տեսել ՀԱՍՀ վաստակավոր արտիստուհի, ջութակահար Անահիտ Ցիցիկյանի «Հայկական աղեղնային արվեստը» գիրքը ռուսերենով:

«Աւխարհին պատմել հայկական երաժշտության, իսկ հայերին՝ աւխարհի երաժշտության մասին», - սա էր Անահիտ Ցիցիկյան արվեստագետի կարգախոսը, որով նա ղեկավարվում էր ստեղծագործական գործունեության ընթացքում: Հուլիսի 40 տարի նրա ջութակի դյուբիչ հնչյունները խոսում էին ունկնդրի հետ: Նրա բազմաթիվ ուսանողներն իրենց հոգում կրում են ուսուցչի վառած կրակը՝ անսահման սերը դեպի հայ արվեստը: Նրա բազմաթիվ հոգվածները, զեկուցումները եւ երաժշտության պատմության ոլորտում հիմնարար հետազոտությունները բեղուն գիտական գործունեության արգասիքն են: Այս աւխարհին մի մասը տպվել է 1977 թ. հայերեն, սակայն բնօրինակի լեզվով եւ ամբողջությամբ ներկայացվում է առաջին անգամ:

Գրքի առաջին մասը նվիրված է հայկական աղեղնային արվեստի ակունքներին, հետագա զարգացմանը: Այն ամփոփում է հեղինակի բազմամյա հետազոտություններն ինչպես գործիքագիտության, այնպես էլ կատարողական արվեստի պատմության ասպարեզում՝ հին դարերից մինչեւ 20-րդ դ. սկիզբը: Հեղինակը նախատեսում էր շարունակել աւխատանքը, ընդգրկելով նաեւ 20-րդ դ. երկրորդ կեսը, սակայն չհասցրեց:

Գրքի երկրորդ մասը, որը կազմել է խմբագիր հրատարակիչ Նունե Շամախյանը, ներկայացնում է վերոհիշյալ շրջանի հայ երաժշտության որոշ կարեւոր էջեր: Այն կազմված է հեղինակի անտիպ եւ տարբեր տարիներին տպագրված մի շարք հոդվածներից: Գիրքը հարուստ է արխիվային նյութերով եւ հազվագյուտ լուսանկարներով: Տեղեկություններ են գետնգրված հայ անվանի կատարողների, ուսուցիչների, կրթօջախների, հայ-ռուսական կապերի, ինչպես նաեւ մեր այն հայրենակիցների մասին, որոնք ապրում ու ստեղծագործում են Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, արտերկրում:

Սեպտեմբերի 16-ին Մոսկվայի արվեստագիտության ինստիտուտում կայացավ «Հայկական աղեղնային արվեստը» գրքի շնորհանդեսը, որը լայն արձագանք ստացավ քաղաքի երաժշտասեր հասարակության շրջանում: Գրքի արդիականության, անգնահատելի նշանակության մասին պատմեց ինստիտուտի գիտաբարոյաբան Անտոնինա Լեբեդեւա-Եմելինան: Մենագրության պրոֆեսիոնալ մակարդակը բարձր գնահատեց ռուսական երաժշտագիտության կորիֆեյ, արվեստագիտության դոկտոր Նոնա Շահնազարովան: Իսկ ՄԱՅՄ Ժողովրդական արտիստ, ջութակահար Ավետ Գաբրիելյանի դուստր՝ անվանի երաժիշտ Նանա Գաբրիելյանի խոսքը տոգորված էր վառ հուզականությամբ եւ անսահման ջերմությամբ:

Երեկոն եզրափակեց համերգը, որին մասնակցում էին Գոհար Մանվելյանը, Քսենյա Կոյաժեւան, Մարիա Ժելտովան, Իզոր Բալաշովը, միջազգային մրցույթների դափնեկիրներ՝ դաշնակահար Յակով Կացնելսոնը, երգչուհի Աննա Ազլատովան: Իսկ պատանի թավջութակահար Նարեկ Հախնազարյանը, որը մեծ զգացմունքով եւ անմիջականությամբ կատարեց Ա. Այվազյանի ստեղծագործությունը, ասես հայ մշակույթի դեսպանը լինեի համերգում:

Գրքի երեւանյան շնորհանդեսը կայացավ նոյեմբերի 2-ին Արամ Խաչատրյանի տուն թանգարանում: Խոսք ասացին խմբագիր հրատարակիչ, «Անահիտ» մշակութային հիմնադրամի նախագահ Նունե Շամախյանը, երաժշտագետ, պրոֆ. Իրինա Տիգրանովան, Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը: Ներկաները ծանոթացան Անահիտ Ցիցիկյանի արխիվի նյութերից կազմված հետաքրքրական ցուցահանդեսին: Երեկոն ավարտվեց համերգով, ուր հանդես եկան հայ երաժիշտների տարբեր սերունդների ներկայացուցիչներ. «Անահիտ» մշակութային հիմնադրամի կրթաթոշակառու ջութակահարուհի Ստեփան Կարապետյանը, Նարեկ Հախնազարյանը (Մոսկվա), Արմին Դեմուրյանը եւ Սերգեյ Խաչատրյանը (Գերմանիա), Կոմիտասի անվ. լարային քառյակը:

«Անահիտ» մշակութային հիմնադրամի լրատվական ծառայություն



2005 թվականի համար Բաժանորդագրվե՞լ ե՞մ ՀԱՅԱՐԱՊԵՏ

Եթե այո, ադա ոչ միայն ընթերցող եմ, այլև
գորավիզ եմ մեզ:

Բաժանորդագրության համար դիմել
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԱՐՑԱՆՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆ» գործակալությանը կամ խմբագրություն,
ՍՓՅՈՒՆՔՈՒՄ՝ հանդեսի լիազոր ներկայացուցիչներին

ԱՄՆ, Նյու Յորք, Շահան ԱՐԾՐՈՒՆԻ
solopiano@hotmail.com

Լոս Անջելես, Տիգրան ՄԱՐԳԱՅԱՆ
tigrani@hotmail.com

Բոստոն, Արա ՂԱԶԱՐՅԱՆ
acf.hmh@verizon.net

Չիկագո, Ռաբել ԿՈՇԿԱՐՅԱՆ

ԱՄԷ, Աբու Դաբի, Անդրանիկ ՂԱՂԱՅԱՆ
emcopauh@emirates.net.ae

ԱՎԱՏՏՐԱԼԻԱ, Սիդնեյ, Անահիտ ՀԱԿՈԲՅԱՆ
Մելքուն, Բիատրիս ՄԱՆՈՒԿՅԱՆ
hye@hyeart.org

ԱՐԳԵՆՏԻՆԱ, Բուենոս Այրես, Խուան ԵԼԱՆԳԵՋՅԱՆ
darson7@yahoo.com.ar

ԳԵՐՄԱՆԻԱ, Մյունխեն, Սեդա ՓՈՐՁՈՅԱՆ-ՖՐՈԲԵԼ
fax: 00498992922542

ԹՈՒՐԹԻԱ, Ստամբուլ, Մուշեղ ՆԱԶԱՐՅԱՆ
y18@duke.edu

ԻՐԱՆ, Թեհրան, Ալբերտ ԲՈՂԱՐՅԱՆ
akocharian@hotmail.com

Սպահան, Անի ԲԱԲԱՅԱՆ
ani-babayany@yahoo.com

ԼԻԲԱՆԱՆ, Բեյրութ, Մովսես ԴԵՐԳԵԼՅԱՆ
noahsark@cyberia.net.lb

ԿԱՆԱԴԱ, Մոնրեալ, Մարո ՄԱՆԱԿՅԱՆ
marom@videotron.ca

ՏՈՐՈՆՏՈ, «Արարատ կամար»,
Անդրանիկ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, Լոնդոն, Արթուր ՕՇԱԿԱՆՏԻ
art@oshakantsi.com

ՀՎԵՅՑԱՐԻԱ, Ժնև, Ներիկ ԱԶԱՏՅԱՆ

ՈՒԽԱՍՏԱՆ, Մոսկվա, Նիկոլայ ԹԱԴԵՒՈՅԱՆ
Սանկտ-Պետերբուրգ, Աշոտ խԱՉԱՏՐՅԱՆ
akhachents@yahoo.com



ՍԻՐԻԱ, Դալեա, Անի ՖԻՇԵՆԿՅԱՆ
fishenjianani@hotmail.com

ՎՐԱՍՏԱՆ, Թբիլիսի, Սարգիս ՂԱՐԶԻՆՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱ, Փարիզ, Էդվա ՎԱՐԴԱՆՅԱՆ
eddavard@yahoo.com

«ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ» լիազոր ներկայացուցիչները խմբագրական
խորհրդի ընդլայնված կազմի անդամներ են, տեղերում հեղի-
նակներից նյութեր են ընդունում եւ ուղարկում խմբագրություն,
կատարում են բաժանորդագրություն, իրավասու են տեղերում
գովազդների տրամադրման եւ համագործակցության պայմա-
նավորվածություններ ձեռք բերել:

խմբագրությունը ստացել է ստույգ ներկայացվող
հրատարակությունները: Ընդհանրություն հեղինակներին ու
հրատարակիչներին:



1. Մարտին Միքայելյան, Վարդգես Սուրենյանց, «Անահիտ»
հրատ., Երևան, 2003:
2. Արծվի Բախչինյան, Հայերը համաշխարհային կինոյում, Գրակ.
եւ արվեստի թանգարանի հրատ., Երևան, 2004:
3. Սոնա Ջեյրան, Հայության ներդրումը վաղ միջնադարեան եւ
արդի Եգիպտոսի պատմության մեջ, Մոնրեալի Եգիպտահայե-
րու Ընկերակցություն, Մոնրեալ, 2004:
4. Анаит Цицикян, Армянское смычковое искусство, Ереван, 2004:
5. Մ. Հասարայան, Կ. Մաքեդոնյան, Վ. Դելիլյան, Կեչարիս-1000,
(հայերեն, ռուս. անգլ.), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004:
6. Գրիգոր Փիթեմեան, «Անձինք նուիրեալք» շարականը, Նի-
եորք, «Սիս» հրատարակչատուն, 2003:


ԱԶԴ

Թողարկման է պատրաստվում
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը
եռամաս խտասալիկը (CD) հայերենով
(արեւելահայերեն, արեւմտահայերեն) եւ անգլերենով,
նախաձեռնությամբ Մուշեղ Մեհրաբյանի եւ
«Մոմիկ» մշակույթի կենտրոնի:
Խտասալիկը նվիրվում է Մեծ եղեռնի 90-ամյակին:
Ինֆորմացիոն հովանավոր՝ «Հայ արվեստ»


Հայ Արվեստ



Ջորջ Ամպարաբյան (Սիրիա), Տիրամայր



Վալմար (Հայաստան), Մեղեդի



Վարդուկա Խորենյան (Ռումինիա), Երազանք



Միրան Ավետիսյան (Հայաստան),
Համբարձ



Մանուկ Ղրդյան (Արգենտինա),
Արգենտինյան տանգո



Արտուր Զաքարյան (Կանադա),
Կոմիտաս



Զավեն Բարդակչյան (Սիրիա),
Հորինվածք



Սեյրան Գասպարյան (Հայաստան),
Գարուն

TIGRANI
UNIQUE ART & CHESS SETS



CHESS IS NOT JUST A GAME... IT'S AN ART FORM

Tigran Sarkisyan



Զեոք բերեմ «հայկական» եւ այլ
թեմատիկ գեղարվեստական
եախմասներ

www.artbytigrani.com
հեռ. 818 247 0873, 818 551 1288

armenian art • 3-4/2004 (9-10)